26 13 ԵՇ. — Հո. և Հո. Սրբոցն՝ Գուրիատայ, Սամուէնատայ, Արիբայ սարկաւազին, Ռոմանոսի միայնակեցին. Մանկանն Խոստովանողի. և Հիւսիքոսի զինաւորին: — Յն. Յովհաննու Ուլեբերանին, և Բարեխեմեան քահանային, և Գահայ Մանգիւսին Բրեւոսի:



- 27 14 **տր.** — Հց. և Հհց. Պահջբ.  
— Յն. Փէլեպոսէ առաւելլոյն:
- 28 15 **տռ.** — Հց. Սրբոց առաքելոցն՝  
Անդրէի և Փիլիպոսի —  
Հհց. Փիլիպոսի առաքե-  
լոյն: — Յն. Սէեպն քառաս-  
նորեայ պահոց Մնք. Քրէստ:
- 29 16 **ճգր.** — Հց. և Հհց. ժ. զկնի  
Խաչի: Յիսնակաց բարեկեն-  
դան: — Լր. Աստուծոյն ին-  
քսի Գալուսեան, որ է սէեպն  
խմաստ պահոց Մնք. Քրէստ:
- 30 17 **ճտ.** — Հ. և Հհց. Ա. օր պա-  
հոց Յիսնակաց: Լր. Անդ-  
րէի առաւելլոյն:
- 1 18 **ճտ.** — Հց. և Հհց. Բ. օր պա-  
հոց Յիսնակաց: — Լր. Իե-  
րեմբեր:

Յ Առ. Քն. ժ 6, ր. 59

Մերք պարզ և մերք անձրև

- 2 19 **ճտ.** — Հց. և Հհց. Գ. օր պա-  
հոց Յիսնակաց:

Տար. Գահ. Ֆրանս-Նոզէֆ Ա.  
Կայսեր Աւստրիոյ-Հոն և  
գարիոյ. 1846

- 3 20 **ճտ.** — Հց. և Հհց. Դ. օր պա-  
հոց Յիսնակաց:

- 4 21 ՈՒՐ — Հց† և Հհց† Ե. օր պահոց Յիսնակաց: Եւ Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն: Եւս Յն†:
- 5 22 ՇՐ. — Հց և Հհց. Սրբոցն՝ Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի հայրապետին, և Միւռնայ եպիսկոպոսին:
- 6 23 ✠ ՎԻՐ. — Հց. և Հհց. Ա. Յիսնակաց: Հարսանիք: — Ըմբռնող: — Լր. Նէկողայոսի հայրապետին: — Տճ. Եւփրատ քիօփէ-փէ-ֆարսիսանայ:
- 7 24 ՐՇ. Հց. և Հհց. Սրբոց կուսանացն Յուլիանեայ և Վասիլուհայ. — Լր. Աճբբսիսի եպիսկոպոսին:
- 8 25 ԳՇ. — Հց. Սրբոցն Ղուենկիանոսի քահանային, Տարագոսի, Պրորոսի, և Անդրոնիկոսի վկայից, և Ոնեսիմայ և այլոց աշակերտաց առաքելոցն Պողոսի: — Հհց. Սրբոց առաքելոցն Յակոբայ և Ծմուտնի: — Յն. Նէփրատի եպիսկոպոսին: — Լր† Յղբբիս Ս. Աթաթնի, Աննայի:

Ⓞ Լր. Լս. Ժ 7, ր. 4

Խառնակ օր

9	26	ԳԵ. — Հց. և Հհց. Պահք:	10	55
10	27	ԵԵ. Հց. Սրբոցն՝ Կղեմայ Հայրապետին, և Բագարա- տայ Տառակնայ Կոնստան- տին: Եւս Հհց. որոց և Գրի- գորի Աղբազանապետին:	17	15
Տար Գահ. Լեոբուր Բ. Թագ. Պելճիգայի. 1865				
11	28	ՈՒՐ. — Հց. և Հհց. Պահք:	17	52
12	29	ՇՐ. Հց† Սրբոց առաքելոց և առաջին Լուսուորչացն Թադէոսի և Բարժուղիմէո- սի: — Հհց. Անդրէի առա- քելոյն:	18	50
13	30	ՃԱՐ — Հց. և Հհց. Բ. Յիս- նակաց, Հարսանիք: — Յն. Անդրէի առաքելոյն: — Լր Լուսուորչայ Կոնստանտին:	19	57





## ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՕՐ 31.

ՏՃ. Քեանունի կվվիչ

- 14 1 ՌԵ. — Հց. և Հհց. Սրբոցն՝ Գե- Ե. ԵՄ  
նարիտի եպիսկոպոսին, և  
Մերկերիտի զինաւորին, և  
Յակովկայե Իրաւափառայ:
- 15 2 Գ.Ե. — Հց. Սրբոցն՝ Կուռնե- ԵՂ ԵԸ  
լիտի Հարիւրապետին, և  
Շմաւոնի ազգականին Քը-  
րիստոսի, և Պողիկարպոսի  
Հայրապետին Զմիւռնիոյ, և  
վկայիցն՝ որք ընդ նմա կա-  
տարեցան: — Հհց. Սրբոց  
Հարցն Նգիպտացւոց՝ Պո-  
ղոսի. Պողայ, Մակարայ,  
Եւագրի, Յովհաննու Գրեց-  
ւոյն, Յովհաննու Կարճա-  
հասակին, Նեղոսի, Արսէնի,

Ախիանու, Դանիէլի, Արապիոնի, Մակարիոսի, Պիմէնի, և այլոց սրբոց հարց: — Յն. Ա. Ք. խոստում, Տարգարէի:

16 3 ՊԵ. — Հո. և ՀԿ. Պահ.բ:

55 29

Ե Վր. Քն. ժ. 6, ր. 35  
Անձրեւարեր հողմուեք

17 4 ՅԵ. — Հո. Արբոց հարցն Ե. 56 2.

գիպտացոց՝ Պողոսի, Պողոսյ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գրեցւոյն. Յովհաննու. Կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Ախիանու, Դանիէլի, Արապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց սրբոց հարց: — ՀԿ. Մինասայ, Երմոգիմեայ և Գրարոսի. և կամաւոր աղքատացն Յովհաննու և Ալեքսիանոսի: Տոմ. Քաղոց, օր 30: — Յն. Վ. աւաւաւայ խոսի:

18 5 ՈՒՐ. — Հո. և ՀԿ. Պահ.բ:

56 21

19 6 ՇՈ. — Հո. և ՀԿ. Արբոյն Նեկոպոյոսի Չմիւռնացւոյ ըսքանչեյագործ հայրապետին: Եւս Յն. Ժ. — Հր. Խանսայ. Դանիէլ ույրա՛լ:

50 25

Տօն անուան Նիքոլա Բ.  
Կայսեր Ռուսիոյ

20 7 ✠ ԿԻՐ. — Հց. և ՀԿց. Գ. Յիս- ԸԴ ԷԳ  
նակաց: Բարեկենդան Ս.  
Յակոբայ:

21 8 ԲԵ. — Հց. Պահք: Սրբոցն՝ ԸԿ ԷԷ  
Մինասայ, Երմուզինեայ,  
Գրաբասի. և կամաւոր աղ-  
քատացն Յովհաննու և Ա-  
րեքօսիանոսի: ՀԿց. Պահք:  
Սրբոց առաքելոցն Բարթոլ-  
ղիմէոսի և Յուդայի: — ԼԳ.  
Թովմայի առաքելոցն:

22 9 ԳԵ. — Հց՛ և ՀԿց՛ Պահք: ԸԸ ԷԸ  
Յղութիւն Ս. Ա. Ժածնի յԱն-  
նայե: Եւս Յ՛՛: Յայսմ.  
Քաղոց, օր 30: — ՉԻՆԱ-  
ՏԱՐ և արեւորարծ Այծեղ  
ղեր, ցերեկէ Ի՛-Ի՛ երբեք և  
գեղերէ Ի՛-Ք՛նաւ: — ՏՃ. Եւ-  
ժելի արդաին. սկզբն Կա-  
ռան ասարց արեւոյ Տաին  
յճերան, որ Ի՛նի Գ՛-րա գել:  
Կին ԿԻ՛նի-ԿԻ՛ ֆորթն-  
նաւ:

© յԱյծեղիւրն ժ. 14. ր 58  
ՏԱ. Աուրնի ձեռք

23 10 ԳԵ. — Հց. և ՀԿց. Պահք: ԸԹ ԷԴ



● ՆՆ. Լւ. Ժ. 21, ր. 15

Ձիւնաքեր հողմունք

- 24 11 ԵՇ. — Հց. և Հհց. Պահք: 1 շՎ  
Սրբոցն՝ Եւստաւատիոսի, Օդ-  
սենատիոսի և Մարգարիտի:  
— ՏՃ. Չիւնիւնի, օր 30:
- 25 12 ԽԲ. — Հց. և Հհց. Պահք: — 5 շԸ  
Յն՝ Սպիրիտոսն է կոչուողսին:  
— Լր. Մնանք Տեառն: —  
Հր. Թեբեթ, օր 30:
- 26 13 ԵԲ. — Հց. և Հհց. Սրբոցն՝ Յա- 7 շԳ  
կորայ Մծբնայ հայրապե-  
տին, Մարուգէի Ճգնաւո-  
րին և Մելիտոսի եպիսկոպո-  
սին: — Լր. Ստեփանոսի նա-  
խակային:  
Տար. Ծննդ. Եորկիոս Ա.  
Թագ. Յունաստանի. 1845
- 27 14 ✠ ԿԲ. — Հց. և Հհց. Գ. Յիւ- 2 0.  
նակոց: Հարսանիք: Լր  
Յովհաննէս աւերաբանիւն:
- 28 15 ԲՇ. — Հց. Սրբոց հայրապե- 0 01  
տացն՝ Իգնատիոսի և Ադ-  
դէի, և Մարուծայի եպիս-  
կոպոսին: — Հհց. Իգնատիոսի  
Աստուածազգեաց հայրա-  
պետին: — Լր. Մանկանցն  
Բեթլեհեմի:



29 16

ԳԵ. — ՀԳ. և ՀԿԳ. Արքայն՝  
Թէոփոմոսայ և Կիսկոպոսին,  
և Թէոփոսայ վկային, և չորից  
զինուորացն Բասասի, Եւ-  
սեբի, Եւտիբի և Բասիլիդ-  
եայ: Ա. Արամ՝, օր 30:

7 05

30 17

ԳԵ. ՀԳ. և ՀԿԳ. Պահճբ: —  
Յն. Գնէիւիէ Լարգարիէն:

7 05

Յ Առ. Քռ. ժ. 15, ր. 2  
Ձիւնասառն անձրեւ

31 18

ՅԵ. ՀԳ. Արքայ կուսանացն՝  
Խնդոսի և Գոմնայի, և Գը-  
ղերիկոսի քահանային, և  
երկուց բիւրուցն: — ՀԿԳ.  
Ազգէի հայրապետին և Ար-  
դարու Թագաւորին: Բարե-  
կենդան Մննդեանն Քրիս-  
տոսիս — Լր. Սեղբեորոսի  
Հասկայ հայրապետին:

8 02

4 19

ՈՒՐ. — ՀԳ. Պահճբ: — ՀԿԳ. Ա.  
օր պահոց Մննդեանն: — Լր.†  
Յանսար և Գարեճար 1809  
Բարեմիտի Նոր Տոմարին. և  
Գոն Գնորինս-Բեան Տեարն:

9 00

2 20

ՇԱ. — ՀԳ. Նախավկայ և ի  
Քոտ. հաւատացեալ անդ-  
րանիկ Թագաւորին սրբոյն  
Արդարու: — ՀԿԳ. Բ. օր

10 07

պահոց Մենդեան: Եւ Ին-  
գոսի և Գոմնայի, և Գղե-  
րիկոսի քահանային, և եր-  
կուց բիւրուց: — Տճ. Գոմ-  
պան պայրաճ, օր 4:

3 21 ✠ ԿԻՐ. — Հց. Ե. Յրանակաց: 11 07

ՀԿց Գ. օր պահոց Մենդ.  
— Հր. Մոճ Էան պաշարման  
Երսուսաղիփ է Եսբուսգոգո-  
նասարայ:

4 22 ԲԵ. — Հց. Սրբոց քահանա- 15 08

յիցն՝ Արրահամու և Խորե-  
նայ, և անարծաթ ըժշկացն,  
Կողմայի և Գամիանոսի, և  
Ասաուածաարոյ վկային:  
Եւս ՀԿց. սրոց և Գ. օր պա-  
հոց Մենդեան:

5 23 ԳԵ. — Հց. Սրբոցն՝ Գաւթի 15 09

մարգարէին և Յակոբայ ա-  
ւաքելոյն: Եւս ՀԿց. սրոց և  
Ե. օր պահոց Մենդեան:

6 24 ԴԵ. — Հց. Պահճ 24ց. 18 7.

Ճրագալոյց Մենդեանն Բը-  
րիատոսի Եւս Յն. — Լ. Դ.  
Յայրնսթիան Տեառն

Ⓞ Լ. Դ. Լս. ժ 23, Դ. 34

Յրսաւուցն հողմուցն

7 25 ԵԵ. — Հց. Սրբոցն Սաեփանոսի: 10 71

նախասարկաւագին և առաջին մտախրոսին: — Հօյ՛ Ծնունդ Տեառն Յիսուսի Քրիստոսի, աւարք է նոցա անընդհատ սւթ օր: — Թ՛ Ծնունդ Տեառն. սորէ՛ է նոցա ֆնչեա Յամենսար 4:

8 26 սԻԲ. — Հոյ. Պահ.բ: — Հօյ. Բ. 17 75  
օր Ծննդ: Եւ Ստեփանոսի նախավկային: Եւս Թ՛:

9 27 ՇԲ. — Հոյ. Սրբոց առաքելոցն՝ 17 75  
Պետրոսի և Պօղոսի: Եւս Հօյ. որոց և Գ. օր Ծննդ: — Թ՛ Գ. օր Ծննդեան, և Սրեփանոսի նախավկային:

10 28 ✠ սԻԲ. — Հոյ. Զ Յիսնակաց: 18 78  
Հօյ. Գ. օր Ծննդեան:

11 29 ԲՇ. — Հոյ. Սրբոց Որդւոցն Որտման՝ Յակոբայ առաքելոցն և Յովհաննու աւետարանչին: Բարեկենդան պահոց Ծննդեան: — Հօյ. Ե. օր Ծննդեան: Եւ Որդւոցն Որտման՝ Յակոբայ առաքելոցն և Յովհաննու աւետարանչին:

12 30 ԳՇ. — Հոյ. Ա. օր պահոց Ծննդեան: — Հօյ. Զ. օր Ծննդեան: 5. 77

L 0

90

ԴԵԿՏԵՄԲԵՐ

S Գ

13 31

ՂԵ. — ՀԳ. Բ. օր պահոց  
 Մինդեան: — ՀԿԳ. Է. օր  
 Մինդեան:

Շ Կ

Յօրինեց

Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ



# ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԵՐԵՒԵԼԻ ԱՆՑԻՑ ԻՆՉ ԱՇԽԱՐՀԻ

Ի ստեղծմանէ աշխարհի մինչեւ ցայժմ են՝ ամբ . . . . .	7333
Ի ջրհեղեղէ . . . . .	5074
Ի գիւտոյ ապակոյ . . . . .	3548
Ի ծննդենէ Քրիստոսի . . . . .	1908
Ի նահատակութենէ Թաղեոսի ա- ռափելոյն եւ Սանդիսոյ կուսին	1860
Ի ծննդենէ Ս. Քրիզոստ Լուսաւորչի	1654
Ի լուսաւորութենէ Հայոց ի ձեռն Քրիզոստի Լուսաւորչի . . . . .	1605
Ի շինութենէ Ս. Էջմիածնի, ուր հաստատուալ կայ Հայրապետու- թիւն ամենայն Հայոց . . . . .	1604
Ի սիեզերական ժողովոյն Նիկիոյ	1583
Ի գիւտոյ Խաչին Քրիստոսի յերու- սաղէմ ի Հեղինեայ թագուհոյ	1584
Ի շինութենէ Կ. Պոլսոյ . . . . .	1579
Ի սիեզերական ժողովոյն Կ. Պոլսոյ	1527
Ի գիւտոյ Հայերէն այբուբենից ի ձեռն Մեսրոպայ . . . . .	1472
Ի սիեզերական ժողովոյն Եփեսոսի	1477
Ի քարգնսնութենէ Ասուածա- տունչ գրոց ի Հայ . . . . .	1472
Ի շինութենէ տմարին Հայոց . . . . .	1357
Ի յայտնելոյ Ս. Խաչին ի Վարազայ	1255


Ի գիւտոյ կողմնացուցին . . . . .	607
Ի գիւտոյ տպագր. և Գերմանիա . . . . .	469
Ի տիւրիոյ Օսմանեանց Կ. Պոլսոյ և Սուլթան Մէհմեմէտ Բ.է . . . . .	456
Ի գիւտոյ Ամերիկայի . . . . .	417
Ի գիւտոյ անուանոր ժամացուցի . . . . .	408
Ի գիւտոյ շոգեաժժ մեքենայից . . . . .	219
Ի գիւտոյ օդապարիկ զննոյն . . . . .	127
Ի գիւտոյ նշանացի հեռագրին . . . . .	117
Ի գիւտոյ շոգենալին և Զրանսա . . . . .	114
Ի գիւտոյ պատուասի մարմնոյ . . . . .	111
Ի գիւտոյ վիմագրութեան . . . . .	107
Ի հաստատութենէ Ս. Փրկչի Հիւան- դանոցի Հայոց որ է յԵէտիզուլէ Պէզնեան Յարութիւն Ամիրայէ . . . . .	79
Ի մահուանէ Պէզնեան Յարութիւն Ամիրայի . . . . .	75
Ի հաստատութենէ քարանքինայի . . . . .	71
Ի գիւտոյ լուսանկարի . . . . .	70
Ի գիւտոյ էլէքտ. հեռագրութեան . . . . .	60
Ի բացմանէ պարանոցին Սուէզի . . . . .	40
Ի բացմանէ Արեւելեան Արքանոցին և Պրուսա . . . . .	34
Ի բացմանէ պարանոցին Կորնթոսի . . . . .	16
Ի գիւտոյ անթել հեռագրի . . . . .	4
Ի բացմանէ քիւնէլին Սեմփլանի . . . . .	3



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ



The page features a decorative border with ornate corner pieces. Below the title, there is a solid horizontal line, followed by a series of horizontal dashed lines for writing.

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԸՆ

\_\_\_\_\_

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....

.....



# ՕՍՄԱՆԵԱՆ Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍՈՒՂԹԱՆՔ  
ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ

Թ. — — — — —  
Հէգրեթէ Բրեւր.

1. Սուլթան Օսման Ա. Ղազի	699	1299
2. Սուլթան Օրխան Ա. Ղազի	726	1325
3. Սուլթան Մուրաճ Ա. Ղազի	761	1359
4. Սուլթան Պայազիճ Ա. Երլսըրբ	791	1388
5. Սուլթան Մեհեմեդ Ա. Չելեպի	816	1443
6. Սուլթան Մուրաճ Բ. Ղազի	824	1421
7. Սուլթան Մեհեմեդ Բ. Ֆարիհ	855	1451
8. Սուլթան Պայազիճ Բ. Ղազի	886	1481
9. Սուլթան Սելիմ Ա. Եավուզ	918	1512
10. Սուլթան Սիլվեյհան Ա. Գանունի	926	1520
11. Սուլթան Սելիմ Բ. Ղազի	974	1566
12. Սուլթան Մուրաճ Գ. Ղազի	983	1574
13. Սուլթան Մեհեմեդ Գ. Ղազի	1003	1594
14. Սուլթան Ահմեդ Ա. Ղազի	1012	1603

15. Սուլթան Մուսթաճա Ա.	1026	1617
16. Սուլթան Օսման Բ. Կէնն	1028	1618
17. Սուլթան Մուրաճ Գ. Ղազի	1032	1622
18. Սուլթան Իպրահիմ Ա.	1049	1639
19. Սուլթան Մէհմեմէճ Գ. Ղազի	1058	1648
20. Սուլթան Սիւլէյման Բ.	1099	1687
21. Սուլթան Ահմէճ Բ.	1102	1690
22. Սուլթան Մուսթաճա Բ.	1106	1694
23. Սուլթան Ահմէճ Գ. Ղազի	1115	1703
24. Սուլթան Մահմուճ Ա. Ղազի	1143	1730
25. Սուլթան Օսման Գ.	1168	1754
26. Սուլթան Մուսթաճա Գ. Ղազի	1172	1758
27. Սուլթան Ապս-իւլ-Համիճ Ա. Ղազի	1187	1773
28. Սուլթան Սէլիմ Գ. Ղազի	1203	1788
29. Սուլթան Մուսթաճա Գ.	1222	1807
30. Սուլթան Մահմուճ Բ. Ասիլ	1223	1808
31. Սուլթան Ապս-իւլ-Մէնիճ Ա. Ղազի	1255	1839
32. Սուլթան Ապս-իւլ-Ազիզ Ա.	1277	1860
33. Սուլթան Մուրաճ Ե.	1293	1876



ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ  
ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ.

Խան Ղազի

ԲԱՐԵԽՆԱՄ ԻՆՔՆԱԿԱԼ

34<sup>րդ</sup> կայսր Օսմանեան Հարսու-  
թեան եւ 28<sup>րդ</sup> կայսր յառմանե կոս-  
տանդնուպոլսոյ, որդի Սուլթան Ապս-  
իւլ-Մեհմետ Խանի, ծնեալ 16 Շա-  
պան 1258 (10/22 Սեպտեմբեր 1842),  
Գահակալի ի 11 Շապան 1293 (19/31  
Օգոստոս 1876):

ԱՒԱԳԱՆԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԱՆ

Մեծ ներքինապետ (Տար-իւս-սասէթ իւր Եկ-  
րիժէ աղասը) — **ԱՊՏ ԻՒԼ-ՂԱՆԻ ԱՂԱ:**

Առաջին սենեկապետ (Սէր գուրէնայի հազ-  
րէթի Շէհրիեարի) — **ՀԱՃԻ ԱԼԻ ՓԱՇԱ:**

Երկրորդ սենեկապետ — **ՆՈՒՐԻ ՓԱՇԱ:**

Առաջին ֆարսուղար (Մապէյնի Հիւմայուն  
պառ ֆեաթիպի) — **ՀԱՍԱՆ ԹԱՀՍԻՆ  
ՓԱՇԱ:**

Մեծ արարողապետ եւ Կայս. քարզման (Թէ-  
րիժաթր ուսնումիյէ նազրըր վէ Տիվանը Հիւ-  
մայունը քերհիմանը) — **ՂԱԼԻՊ ՓԱՇԱ:**

Առաջին քիկնապան (Սէր եապէրը Հազրէթի  
Շէհրիեարի) — **ՄԷՀՄԷՏ ՓԱՇԱ:**

Բ. Թիկնապան (Մայէթի Շահանէ էրֆեանը  
հարպիյէ միւլիւրի) — **ՇԱՔԻՐ ՓԱՇԱ:**

Առաջին Աղօթասաց (Իմամը Էվլէլ Հազրէթի  
Շէհրիեարի) — **ԻՍՄԱՅԻԼ ՀԱԳԳԸ ԷՖ.:**

Նախարար Կայսերական գանձուն (Խազինէի  
Խասսաի Շահանէ նազրըր) — **ՍԱԳԸՋ ՅՈՎ-  
ՀԱՆՆԷՍ ԷՖԷՆՏԻ:**

Մասակարար Կայսերական ընտանեաց (Հա-  
րէմի Հիւմայուն մէսարիժաթ նազրըր եւն.)  
— **ՀԱՃԻ ԱՔԻՅ ՓԱՇԱ:**

Հրամանատար պալատականաց եւ նուազածուաց պալատան (Խասէմէի Խասսա վէ Միւզիբայի Հիւմայուն Քէրիֆի) — **ՍԻՒԼԷՏՄԱՆ ՓԱՇԱ:**

Ախոռապէս Արֆունի (Սթապլը ամիրէ միւսի-րի) — **ՅԱՅԻԳ ՓԱՇԱ:**

ՆԱԽԱՐԱՐՔ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ

Մեծ Եպարֆու (Սասրազամ) — **ՅԷՐԻՏ ՓԱՇԱ:**

Կրօնապէս (Շէյխ իւլ-Իսլամ) — **ՃԷՄԱԼԷՏՏԻՆ ԷՅԷՆՏԻ:**

Նախարար Արդարութեան եւ Կրօնից (Ասլիյէ վէ Մէզահիպ նազրըր) — **ԱՊՏԻՒՐՐԱՀՄԱՆ ՓԱՇԱ:**

Սպարապէս (Սէրապէր) — **ԲԻԶԱ ՓԱՇԱ:**

Նախարար Ծովային գործոց (Պահրիյէ նազր-րըր) — **ՀԱՍԱՆ ՐԱՄԻ ՓԱՇԱ:**

Նախագահ Պէտական Խորհրդոյ (Շուրայի Տէօվլէթ րէիսի) — **ՍԱՅԻՏ ՓԱՇԱ:**

Նախարար Արտաքին գործոց (Խարիճիյէ նազրըր) — **ԹԷՂՅԻԳ ՓԱՇԱ:**

Նախարար Ներքին գործոց (Տախիլիյէ նազր-րըր) — **ՄԷՄՏՈՒՀ ՓԱՇԱ:**

Վերաճեալ թնփանօթարանի (Թօփհանէ միւ-  
շիբի) — **ՁԷՔԻ ՓԱՇԱ:**

Նախարար Կրօնապահական կալուածոց (Էլզա-  
ժը Հիւմայուն նազրըր) — **ԹԻԻՐԵԱՆ ՓԱՇԱ:**

Նախարար Հանրային կրթութեան (Մէարիժ  
նազրըր) — **ՀԱՇԻՄ ՓԱՇԱ:**

Նախարար Առեւտրական եւ Հանրօգուս շի-  
նութեանց (Թիհարէթ վէ Նաճա'ա նազրըր)  
— **ՁԻՀՆԻ ՓԱՇԱ:**

Նախարար Ելեւմտական գործոց (Մայիյէ նա-  
զրըր) — **ՁԻՅԱ ՓԱՇԱ:**

Խորհրդական Եպարհոսութեան (Միւսթէշարը  
Սասըր Ալի) — **ՄԷՀՄԷՏ ԱԼԻ ՓԱՇԱ:**

—

### ՄԵԾ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՔ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՍ

Քաղաքապետ Մայրաքաղաքիս (Շէհիբ Էմինի)  
— **ՐԷՇԻՏ ՓԱՇԱ:**

Նախարար Ոստիկանութեան (Չապթիյէ նա-  
զրըր) — **ՇԷՅԻԳ ՓԱՇԱ:**

Վերաճեալ Նաւահանգսի (Լիման րէիսի)  
— **ԷՇՐԷՅ ՓԱՇԱ:**

Վերաճեալ Մաքսանց (Բուսումաթ Էմինի)  
— **ՀԱՍՍՆ ՅԷՀՄԻ ՓԱՇԱ:**

Վերաճեալն Կալուածական տմարաց (Տէճ-  
քերի Խագանի նազրր) — **ՁԻՅՍ. ՓԱՇԱ:**

Վերաճեալն Թղթասարուքեան եւ Հեռագրու-  
քեան (Բօսթա վէ Թէլէկրաճ նազրր) —  
**ՀԻԻՍԷՅԻՆ ՀԱՍԻՊ ՊԷՅ:**

Վերաճեալն Անտառաց, Հանգաց եւ Երկրա-  
գործութեան (Օրման վէ Մասէն վէ Ջրաաթ  
նազրր) — **ՍԷՂԻՄ ՄԷՂՀԱՍԷՔ ՓԱՇԱ:**

Ոստիկանապէս Պէճիքաճի (Պէճիքաճ մու-  
հաճրզր վէ Փօլիս միւսիրի) — **ՎԱՍՏՃ  
ՓԱՇԱ:**

Ոստիկանապէս Կ. Պոլսոյ (Ստամպօլ Փօլիս  
միւսիրի) — **ՄԱՋՀԱՐ ՊԷՅ:**

Կառավարիչ Բերայի (Պէյօղլու միւքէսարճր)  
— **ՀԱՄՏԻ ՊԷՅ:**

Կառավարիչ Իւսկիւսարի (Իւսկիւսար միւ-  
քէսարճր) — **ՀԱՄՏԻ ՊԷՅ:**

Հրամանատար Ջրհանկրաց (Իքճայիէ ալայր  
գօմանտար) — **ՁԷՁԷՆԵՒ ՓԱՇԱ:**





## Թ Ղ Թ Ա Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

**ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ.** — Թղթատարական միութեան (ԻՆՔԻՏ-Պ: Union postale) մէջ գտնուող երկիրներ ղրկուած նամակներու իւրաքանչիւր 15 կռամին (կամ աւելի պակասին) համար 1 ղրուշի թղթաղրոշմ: Այսպէս է թուրքիոյ ներքին թղթատարութիւնն ալ: Բացառիկ են նաւահանգիստները. այս պարագային՝ 20 փարայի թղթաղրոշմ պէտք է փակցնել:

**ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԳԱՐԳԵՐ** Cartes postales. — Պարզ թղթատարական գարդի մը զինն է 20 փարա, իսկ վճարեալ պատասխանով թղթատարական գարդերու զինը 1 ղրուշ:

**ՎԱՃԱՌՔԻ ՆՄՈՅՇՆԵՐ** (ԷՇՔ-ՄԷ ԲԷՇՄ-ԷՆՅԷ ԻՆՏԷՆՅԷԷԷԷ, Echantillon de marchandises). — Թղթատարական Միութեան համար 1էն մինչեւ 100 կռամ ծանրութիւն ունեցող վաճառքի նմոյշներէն կ'առնուի 20 փարա, և 100 կռամէն վեր իւրաքանչիւր 50 կռամի համար 10 փարա: Եթէ նմոյշին ծանրութիւնը 350 կռամէ կամ 30 սանդիմէ՞ծր երկայնութենէ, 20

սանդիմէթր լայնքէ և 10 սանդիմէթր թանձրութենէ աւելի ըլլայ, կը մերժուի: Թուրքիոյ մէջ ալ նոյն բանն է, սա տարբերութեամբ որ մինչև 2000 կռամ կ'ընդունուին: Ծովեզերեայ քաղաքներուն համար փոխանակ 50ի, իւրաքանչիւր 75 կռամի համար 10 փարա կ'առնուի: Եթէ նմոյշին ծանրութիւնը 250 կռամը անցնի, իւրաքանչիւր 50 կռամի համար 20 փարա կը վճարուի մինչև 2 քիլօկրամ:

**ՏՊԱԳԻՐՆԵՐ** (Էփ-էլ Բ-էլ-ու-ս, imprimés). — Թղթատարական Միութեան մէջ զանուող երկիրներուն համար 50 կռամին կը վճարուի 10 փարա: Նոյնպէս Թուրքիոյ ներքին Թղթատարութեան համար իւրաքանչիւր 50 կռամը ենթակայ է 10 փարա Թղթադրոշմի: Երբ ծրարը 30 կռամէ պակաս կը կշռէ, 5 փարա միայն կը վճարուի: Ծովեզերեայ քաղաքներու համար իւրաքանչիւր 75 կռամի 10 փարա կը վճարուի:

2000 կռամէ աւելի կշռող և 45 սանդիմէթրէ աւելի երկայնութիւն, լայնութիւն կամ թանձրութիւն ունեցող ծրարներ չեն ընդունուիր. 10 սանդիմէթր տրամագիծ և 75 սանդիմէթր երկայնութիւն ունեցող պլորուած տըպագիրներ կ'ընդունուին:

**ԳՈՐԾԻ ԹՈՒՂԹԵՐ** (Է՛լ-էլ Գ-ա-լէհ. papiers d'affaires). — Թղթատարական Միութեան մէջ գտնուող երկիրներուն համար 1 կըռամէ մինչև 200 կռամ կշռող ծրարներէ կը պահանջուի 1 դրուշ. իսկ 200 կռամէ աւելի կշռող ծրարները ենթակայ են 10ական փարայաւելումի՝ ամէն 50 կռամի յաւելման: Առ առաւելն 2000 կռամ կշռող ծրարներ միայն կ'ընդունուին: Թուրքիոյ ներքին Թղթատարութեան համար ևս նոյնն է:

**ԴՐԱՄԻ ԵՒ ԱՐԺԷՔԱՒՈՐ ՆԻԹԵՐՈՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ**. — Թղթատարական Միութեան մէջ գտնուած երկիրներուն համար Օսմանեան Թղթատարութեան մէջ կ'ընդունուի աւանդ (է՛-ն-է՛), և մանտա-բոսդ:

Թուրքիոյ ներքին Թղթատարութեան մէջ ընդունուած է դրամի և արժէքաւոր նիւթերու փոխադրութիւնը աւանդի ձեւին տակ: Այս պարագային Թղթատարական վարչութիւնը կ'ըստանայ Թանկագին նիւթերու համար՝ արժէքին համաձայն սակագին մը, իսկ հասարակ նիւթերու համար՝ ծանրութեան չափով սակագին մը: Այս սակագինը հինգ աստիճան է, հեռաւորութեան հինգ շրջանակներու համաձայն՝ որոնք հետևեալներն են.

Ա. Շրջանակ. — Կ. Պոլիս և շրջակաները, 1էն 1000 դրշ.ի՝  $2\frac{1}{2}$ , 1000էն 2000 դրշ.ի՝ 5 դրուշ, և ամէն հազար դրուշի՝  $2\frac{1}{2}$  դրուշ: Ծանրութիւն ունեցող նիւթերու համար 1էն 500 կռամի՝  $2\frac{1}{2}$ , և 501էն 1000 կռամի՝ 5, և ամէն 500 կռամի՝  $2\frac{1}{2}$  դրուշ:

Բ. Շրջանակ. — Պրուսա, Գասթէմունի, Այտըն, Ատանա, Ճէպէլի Լիպնան, Հալէպ, Գոնիա, Շքոտրա, Կարմիր ծովի եզերքներ, Պէնկագի, Պիղա, Արշիպեղազոսի կղզիներ: 1էն 250 դրուշ՝  $2\frac{1}{2}$  դրշ. 251էն 500՝ 3 դրշ. 501էն 1000՝ 7 դշ.ի ասկէ վեր հազարներու համար իւրաքանչիւրին վրայ կ'աւելնայ  $3\frac{1}{2}$  դշ. Ծանրութիւն ունեցող նիւթեր, 1էն 100 կռամ՝  $2\frac{1}{2}$ , 101էն 250 կռամ՝ 3, 251էն 500՝ 4, և 501էն 1000 կռամ՝ 7 դրուշի, և իւրաքանչիւր 500 կռամի՝  $3\frac{1}{2}$  դրուշի յաւելում:

Գ. Շրջանակ. — Դամասկոս, Էրզրում, Հիճազ, Էնգարէ, Սըվաս, Գօսօվա, Մանասթըր, Եէմէն, Տիարպէքիր, Խարբուրդ, Արժէք. 1էն 250 դրուշ՝ 3, 251էն 500՝ 4, 501էն 1000՝ 6 դրուշի և իւրաքանչիւր 1000ի վրայ 5 դրուշի յաւելում: Ծանրութիւն. 1էն 100 կռամ՝ 3, 101էն 250 կռամ՝ 4, 251էն 500՝ 6, 501էն 1000՝ 10 դրուշի, և իւրաքանչիւր 500 կռամի վրայ 5 դրուշի յաւելում:

Գ. Շրջանակ . — Վան, Պիժլիս, Մուսուլ:  
Արժէք. 1—250 դրուշ՝ 3 $\frac{1}{2}$ , 251—500՝ 5 դրշ.ի,  
501—1000՝ 8 դրուշի և իւրաքանչիւր 1000ի  
վրայ 6 $\frac{1}{2}$  դրուշի յաւելումն ծանրութիւն. 1—  
100 կրամ՝ 3, 101—250՝ 5, 251—500՝ 8, 501—  
1000՝ 13 դրուշի և իւրաքանչիւր 500 կրամի  
վրայ 6 $\frac{1}{2}$  դրուշ յաւելումն:

Ե. Շրջանակ. — Պաղտատ, Պասրա, Արժէք.  
1էն 250 դրուշ՝ 4, 251էն 500՝ 6, 501էն 1000՝  
10 դրուշի, և իւրաքանչիւր 1000ի վրայ 8 դրշ.ի  
յաւելումն ծանրութիւն. 1 էն 100 կրամ՝ 4,  
101էն 250՝ 6, 251էն 500՝ 10, 501էն 1000՝  
16 դրուշի, և իւրաքանչիւրը 500ի վրայ 8 դրշ.ի  
յաւելումն:

Ծովեզերեայ քաղաքները արժէքին վրայ  
1000ին 2 կը վճարուի, իսկ երկամուղի բանած  
քաղաքները 1000ին 3 դրուշ: Ասոնց մէջ երբէք  
ծանրութիւնը նկատողութեան չառնուիր:

**ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆ** (Թէ-հէ-տ, re-  
commandation). — Յանձնարարեալ առարկա-  
ներու համար պէտք է վճարել ինչ որ պիտի  
վճարուէր՝ եթէ յանձնարարեալ չըլլային. յետոյ  
միօրինակ կերպով պէտք է վճարել 1 դրուշ իբր  
յանձնարարման գին:

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԶԵՎՈՒՑԱԳԻՐ** (Ի-

րէ էլ՝—ի—դէրէ, avis de réception). — Ընդունելութեան զեկուցագիրներու, թէ թողթատարական Միութեան շրջանակին և թէ թուրքիոյ համար, պէտք է վճարել միօրինակ կերպով 1 դրուշ, յանձնարարման համար վճարուած 1 դրուշէն զատ:

**ՄԱՆՏԱ-ԲՈՍԴ.**— Մանտա-Բոսդի դրուծիւնը ի գործ կը դրուի թուրքիոյ նամակատուններուն մէջ: — Երկու հազար դրուշէն աւելի գումարի համար Մանտա-Բոսդ չի տրուիր: Մինչև 100 դրուշի համար 20 փարա վարձք կ'առնուի: Իւրաքանչիւր 100 դրուշէն 20 փարայի հաշուով՝ 500 դրուշէն 100 փարա կ'առնուի. իսկ 500էն մինչև 1000 դրուշ, իւրաքանչիւր 200ին քսանական փարա, որով 1001էն մինչև 2000 դրուշ՝ վարձքը կ'ըլլայ վեցուկէս դրուշ:

**ԱՐԺԷՔԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԱԾ ՊԱՐՈՒՆԱՎՈՒԹԵԱՄԲ ՆԱՄԱԿՆԵՐ (ԳԸՅԷԷԷ Ժ—Գ—Դ—ԴԷԷԷԷ ԷԷԷ—ԷԷԷ).** — Ծովեզերեայ և երկաթուղւոյ գիծերուն վրայ գտնուող քաղաքներու նամակատուններուն համար իւրաքանչիւր նամակի պարունակութիւնը 50,000 դրուշէն աւելի չըլլալու պայմանաւ (օսմ. ոսկին 100 դրուշի հաշուով), պանքնօթներ, արժեթուղթեր պարունակող նամակներ կ'ընդունուին, որոնց արժէքը



պահարանին վրայ Թուանշանով նշանակուած և  
ղրկողին անձնական կնիքովը առնուազն հինգ  
տեղերէ կնքուած պէտք է ըլլան: Այս նամակ-  
ներուն ծանրութեանը համեմատ Թղթաղրոշմ  
փակցնելէ զատ, կը վճարուի 1 զրուշ ապահո-  
վագին և յայտարարուած արժէքին իւրաքան-  
չիւր 1000 զրշ.ին ու կոտորակին համար 1 զրուշ:

**ԳՈՒԻ ԲՈՍԴԱԼ.** — Գոլի բոսդալը երկու  
տեսակ է, արժեքաւոր և անարժեք: Թէ ար-  
ժէքաւոր և Թէ անարժէք առարկաներ պարու-  
նակող Գոլի բոսդալը 5 քիլոյէն աւելի ըլլալու  
չէ: Ստակը կրնայ մինչև 10 քիլոյ ծանրութիւն  
ունենալ:

Ա. Շրջանակի համար 5 քիլոյին պէտք է տալ  
4, Բ. Շրջանակի համար 8, Գ. Շրջանակի հա-  
մար 12 զրուշ: Իւրաքանչիւր շրջանակի ամէն  
1000 զրուշին համար պէտք է վճարել 2 զրուշ  
իրբ ապահովագին:

Ստակ. — Ստակը եթէ 5 քիլոյէն աւելի ըլ-  
լայ, քիլոյ զլուխ Ա. Շրջանակի համար պէտք է  
վճարել 1, Բ. Շրջանակի համար 2, և Գ. Շրջա-  
նակի համար 3 զրուշ:

Գոլի բոսդալի մէջ ուզած ստակդ կրնաս  
դնել, ոսկի, մէծիտ, զրուշ, և այլն խառն, պայ-  
մանաւ որ ետքը ծրարին վրայ Թէ Թուանշանով,



Թէ գրով գրուի որչափ ոսկի, որչափ մէճիտ, որչափ դրուշ պարունակելը:

Ամէն մէկ դրամածրար առ առաւելն 50,000 դրուշ պէտք է պարունակէ:

Մէկ օրուան մէջ մէկու մը հասցէին կարելի է շատ մը անգամներ գոլի բոսդալ և դրամածրար դրկել:

Թղթատարական աշխատութեանց համար, իւրաքանչիւր ծրարին իբր կապողչէք կ'առնուի 60 փարա և դրկողին տրուելիք ստացագրին վրայ 10 փարանոց փուլ կը փակցուի:

Գոլի բոսդալը եթէ recommandé ըլլայ, Գոլի բոսդալ ընդունողը, իրաւունք կ'ունենայ առնելուն համար ստացագիր մը տալ դրկողին:

Կարասի. — Շոգենաւով կամ երկաթուղիով դրկուած կարասիները կամ ապրանքները պէտք է առ առաւելն 60 սանդիմ երկայն և 20 սանդիմ լայն ըլլան: Այն առարկաները զորոնք կարելի չէ կիսել, ինչպէս հովանոց, գաւազան, ևայլն, 1 մեդր երկայնութիւն պէտք է ունենան:

Այն ապրանքներն որոնք ուղղակի երկաթուղիով կամ շոգենաւով չեն կրնար երթալ, դրկուելիք տեղը երկրին ներսերը ըլլալուն պատճառաւ պէտք է որ 40 սանդիմ երկայն և 30 սանդիմ լայնք ու 20 սանդիմ խորութիւն ունենան:

## Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

—

**ՍԱԿԱԳԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ.** — Կոստանդնուպոլսոյ հեռագրատանց միջև փոխանակուած իւրաքանչիւր հեռագրի համար կ'առնուի 100 փարա, երբ հեռագիրը 20 բառէն աւելի չպարունակեր. 20 բառէն վեր իւրաքանչիւր 10 բառի համար կը վճարուի 50 փարա:


**ՆԵՐՔԻՆ ՍԱԿԱԳԻՆ.** — Միեւնոյն նահանգին հեռագրական կայարաններուն միջև քաշուած հեռագրի մը իւրաքանչիւր բառին համար պէտք է վճարել 20 փարա՝ 100 փարա յաւելուածական տուրքով, իսկ տարբեր նահանգներու հեռագրական կայարաններուն միջև քաշուած հեռագրի մը իւրաքանչիւր բառին 40 փարա, 5 դրուշ յաւելուածական տուրքով: Իսկ **ԻՊՏԱՆ** ընկերութեան ներքին ընդծովեայ պարաններէն անցնողները միեւնոյն նահանգին հեռագրական կայաններու միջև՝ բառը 40 փարա է, 5 դրուշ յաւելուածական տուրքով, և տարբեր նահանգներուն համար 70 փարա, 7 $\frac{1}{2}$  դրուշ յաւելուածական տուրքով: Եւրոպական և Ասիական Թուրքիայէն Արե-

ւելեան Րուսելի բաշուած հեռագիրներուն, Մուս-  
թաֆա Փաշայի ճամբով կը վճարուի բառին 60  
փարա, առանց յաւելուածական տուրքի:

Կիպրոսի հետ փոխանակուած հեռագիրները  
ներքին սակագնին ենթակայ են երբ ղրկուին Լա-  
թաքիոյ ճամբով:

**ՍՏԻՊՈՂԱԿԱՆ** (urgent) **ՀԵՌԱԳԻՐ.** —  
Կարելի է ստիպողական հեռագիր մը զարնել Թէ  
միջազգային և Թէ ներքին, եռապատիկ գին վճա-  
րելով: Ասոր համար հեռագրին վրայ հասցէէն  
առաջ պէտք է գրել **Տ-Ս-ՏԷԼ ԴԷՐ** կամ urgent  
բառերը:





ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ, ՊՐՈՒՍԱ

Ի. Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի

—

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ԾԱՅԻԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ

Ե Ի

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ծնեալ ի Վան 4 Ապրիլ 1820. Չեռնադրեալ  
Եպիսկոպոս 18 Հոկտեմբեր 1868. Ընտրեալ Կա-  
թողիկոս 5 Մայիս 1892. Օծեալ 26 Սեպտեմբեր  
1893.

---

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԲ Ս. ԵՐՈՒՍԱԳԷՄԻ

Ծնեալ Եզիպտոս 1819. Չեռնադրեալ Եպիս-  
կոպոս 2 Յունիս 1860. Պատրիարք 15 Նոյեմբեր  
1885.

---



Տ. Տ ՄԱՂԱԲԻԱ Ս. ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ  
Պատրիարք Կոստանդնուպոլսոյ



## Տ. Տ. ՄԱՂԱՔԻԱ

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻ Կ. ՊՈԼՍՈՅ

Ծնեալ Կ. Պոլիս 1841 Փետրուար 11. Չեռ-  
նադրեալ Եպիսկոպոս 1886 Յունիս 8. Պատրի-  
արք 1896 Նոյեմբեր 6:

ՀԱՅՈՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԹՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

- Տ. Մեարովպ Արեալ. Սուբիասեան (վախճան.)  
Ա. Ատենապետ
- Տ. Գրիգորիս » Յովհաննէսեան
- Տ. Վահրամ » Մանկունի Բ. Ատենապ.
- Տ. Գաբրիէլ Եպիսկ. Ճէվահիրեան
- Տ. Մովսէս » Կէօմրիւմեան
- Տ. Ղեւոնդ Վրդ. Դուրեան Ա. Ատենադպիր
- Տ. Գրիգորիս » Պալաքեան
- Տ. Յովհաննէս Ա. Գհ. Մկրեան
- Տ. Սահակ » Տէր Սարգսեան
- Տ. Կարապէտ » Սեբեան (վախճանեալ)
- Տ. Կարապէտ » Սանալիեան
- Տ. Միխայէլ Գհնյ. Ա. Ենեան
- Տ. Հմայեակ » Էնֆաէրեան Բ. Ատնդպ.
- Տ. Գրիգոր » Ճէպէնեան



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Գաբրիէլ	էժէնսի	Նորասունկեան	Ա. Ատնպո.
Հմայեալ	»	Սէժէրեան	
Սեպուհ	պէյ	Մախուս	
Տիրան	էժէնսի	Աշևան	Բ. Ատենապետ
Գէորգ	»	Ասլանեան	
Յարութիւն	»	Ասլանեան	
Վահան	»	Սուրէնեան	
Տոթ	Տիգրան պէյ	Անէմեան	
Միհրան	էժէնսի	Սէքեան	
Մկրտիչ	»	Ասասեան	Ա. Ատենադպիր
Արշակ	Խան	Գարակէօղեան	Բ. Ատնդպ.
Տիգրան	էժէնսի	Մանուկեան	
Տիգրան	»	Թոփաքեան	
Նազար	»	Երամեան	(վախճանեալ)



Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ.

Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՊԱՆԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒԼԻԵԻՈՅ

Ծնեալ Եղեգի (Խարբերդ) 1849. Չեռնադրեալ  
Եպիսկոպոս 1885. Ընտրեալ Կաթողիկոս 1902  
Հոկտեմբեր 12. Օծեալ 1903 Ապրիլ 20:



Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ. Ս. ԱՐԲԵՎԻՍԿՈՊՈՍ ԽԱՊԱՆԱՆ  
Կարողիկոս Կիլիկիոյ

2. ՀԱՅ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Տ. ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԲ.

ՍԱՊՊԱՂԵԱՆ

ԿԱՅՈՂԻԿՈՍ - ՊԱՏՐԻԱՐՔ  
Ծնեալ 1836. ընտրեալ 22 Յուլիս 1904

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

Կ. ՊԱՏՐԻԱՐՔ, Գահերէց

Ա Ն Դ Ա Մ Ք

Սահակ	Թ. գղ. Ծ. Վ.	Ճիզմէնեան
Նիկողայոս	Թ. գղ. »	Պագեան
Հ. Եղիշէ	Թ. գղ. Ծ. Վ.	Գաւթանեան
Պողոս	Գերայծ.	Գազրիկեան
Գեորգ	»	Թերզիպաեան
Յովսէփ	Ծ. Վ.	Աբիկեան
Յովսէփ	»	Ռոֆոսեան
Հ. Գրիգորիս	»	Գալէմֆեարեան
Հ. Եղիա	»	Քիլնեան
Յովսէփ	»	Արապեան
Հ. Սամուէլ	»	Գանթարեան
Ներսէս	»	Անէմեան Ատենաղպիբ

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ,

Կ. ՊԱՏՐԻԱՐԷ, Գահերէց

Ա Ն Դ Ա Մ Ք

Յովսէփ	Ծ. Վ.	Աբիկեան
Հ. Եղիա	Ծ. Վ.	Քիլնեան
Արամ	էժ.	Երամեան
Յովսէփ	»	Ազարեան
Միքայէլ	»	Մըսրըլեան
Յովհաննէս	»	Գարսաւեան
Արմենակ	»	Սազրզլեան
Գրիգոր	»	Սինապեան
Միհրան	»	Երազեան
Վիչէն	»	Գասապեան
Արսաւէս	»	Հիւրմիզ
Մանուէլ	»	Շաւեան



3. ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

—

**ԱԶԳԱՊԵՏՔ**

ՍՏԵՓԱՆ ՍԵՐՈՎԲԵԱՆ 1865—1865

ՂԱԶԱՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ 1865—1868

ՅԱԿՈՒՄ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ 1868—1888

**Ա. ՅԱԿՈՒՄ ԷՑ. ՊՕՅԱՃԵԱՆ**

Ընտրեալ 1889

ԱԶԳԱՊԵՏ ԸՆԴՀ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՅ ԹՈՒՐԲԻՈՅ

**Դիւան**

Կարապետ էժ. Յ. Սենեֆերիսեան

*Քարսոչիւր*

Առ աքել էժ. Կեօզիւպէօյիւսեան

*Գործակաւսար*

ԱԶԳԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ներկայացուցիչ *Բիւքանիոյ Եկեղեցեաց*  
Բրժ. Յակոբոս Հ. Ճէնիգեան  
Յովհաննէս էժ. Մինասեան

Ներկայացուցիչ *Կիլիկիոյ Եկեղեցեաց*  
Վեր. Յովհաննէս Գ. Գրիգորեան  
Կարապետ էժ Յ. Սենեւերիմեան

Ներկայացուցիչ *Խարբերդի Եկեղեցեաց*  
Աբեակ էժ. Գ. Շմաւոնեան  
Գէորգ էժ. Խարբուրլեան

Ներկայացուցիչ *Կեդր. Թուրքիոյ Եկեղեցեաց*  
Յարութիւն էժ. Ս. Կոստիկեան  
Պետրոս էժ Պ. Տոննեան

Ներկայացուցիչ *Մայրաքաղաքի ժողովրդեան*  
Յովհաննէս էժ. Կ. Թէլժէեան  
Միհրան էժ. Պ. Յովհաննէսեան

---

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀՈԳԵԻՈՐ ԺՈՂՈՎՆԵՐ

—

*Բիւքանիոյ Եկեղեցեաց Ժողով*

Վեր. Յակոբ Մ. Թաւնեան	Նախագահ
Նճան էժ. Գոնսայեան	Քարտուղար

*Կիլիկիոյ Եկեղեցեաց Ժողով*


Վեր. Ստեփան Թովմասեան	Նախագահ
Եղիա էժ. Պէհէսնիլեան	Քարտուղար

*Խարբերդի Եկեղեցեաց Ժողով*

Վեր. Պէտրոս Կարապետեան	Նախագահ
Պաս. Մ. Յ. Գաբրիէլեան	Քարտուղար

*Կեդրոնական Թուրքիոյ Եկեղեցեաց Ժողով*

Վեր Յակոբ Պիւլպիւլեան	Նախագահ
Վեր. Միհրան Գազաննեան	Քարտուղար





#### 4. ՅՈՅՆ ԵԿԵՂԵՑԻ

**Տ. ՅՈՎԱԿԻՄ Գ.**, Արքեպիսկոպոս և Տիեզերական Պատրիարք Յունաց. ունի 78 վիճակներ:

**Տ. ՓՈՏԻՆՈՍ**, Պատրիարք Յունաց Աղեքսանդրիոյ. ունի 3 վիճակներ:

**Տ. ՄԵԼԷՏԻՈՍ ՏՈՒՄԱՆԻ**, Պատրիարք Յունաց Անտիոքի. ունի 15 վիճակներ:

**Տ. ԴԱՄԻԱՆՈՍ**, Պատրիարք Յունաց Երուսաղէմի. ունի 12 վիճակներ:

#### 5. ՊՈՒԼԿԱՐ ԵԿԵՂԵՑԻ

**Տ. ՅՈՎՍԷՓ**, Էկզարք Պուլկարաց. Աթոռ Պոլիս. ունի 20 վիճակներ:

#### 6. ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ

**Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱՔԳԼՄՍԵՀ**, Պատրիարք Ասորւոց Անտիոքի. Աթոռ Տէյր էլ Ջաֆրան. ունի 16 վիճակներ:

#### 7. ՔԱՂԴԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

**Տ. ՄԱՐ ՇԻՄՈՒՆ**, Պատրիարք Նեստորականաց. Աթոռ Քոչանէս և Շէմտիմունի մէջ. ունի 2 վիճակ:

#### 8. ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻ

**Տ. ԱՄՊԱ ԿԻՐՂՈՍ**, Պատրիարք Ղպտիներու Աղեքսանդրիոյ. Աթոռ Գահիրէ. վիճակ Եգիպտոս և Եթովպիա:

9. **ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԱՐՈՆԻ ԵԿԵՂԵՑԻ**

Տ. ԵՂԻԱ ՊԵՏՐՈՍ ՀՈՅԷՔ, Պատրիարք. Աթոռ Լիբանանի մէջ. վիճակ 8:

10. **ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՄԷԼՔԻՅ ԵԿԵՂԵՑԻ**

Տ. ԿԻՒՐԵՂ ՃԷՀԱ, Պատրիարք. Աթոռ Շամ. վիճակ 12:

11. **ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԱՍՈՐԻ ԵԿԵՂԵՑԻ**

Տ. ԵՓՐԵՄ ԲԱՀՄԱՆԻ, Պատրիարք. Աթոռ Մէրաին. վիճակ 9:

12. **ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՔԱՂԴԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

Տ. ՅՈՎՍԷՓ ԷՄՄԱՆՈՒԷԼ ԹՈՎՄԱՍ, Պատրիարք. Աթոռ Մուսուլ. վիճակ 11:

13. **ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑԻ**

Տ. ԿԻՒՐՂՈՍ ՄԱԿԱՐ, Պատրիարք. Աթոռ Գահիրէ. վիճակ 2:

**ՀՐԵԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

ՄՅՇԷ ԼԷՎԻ, Բարունապետի տեղակալ. Աթոռ Պոլիս:



Ծանօթութիւնք և վիճակագրական տեղեկութիւնք փակուած են՝ 20 Օգոստոս 1907:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑԻ

Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

1908

Դ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ.

THE UNIVERSITY OF CHICAGO

1898

# ԲԱՐՈՅԱԽՕՍԱԿԱՆՔ



## Ծ Ա Ն ԻՐ Զ Ք Ե Զ

Յո՛ւշ, յո՛ւշ, յետո գարձիր, թո՛ղ տուր,  
մահ է, մի՛ հպիր, ձեռքերդ թօթափէ այդ  
զեղծմանց փոշիներէն, ընտանեկան սրահիդ  
սեմնց վերայ այս առած գրէ, ԾԱՆԻՐ ԶՔԵԶ:

Այդ իմաստուն առածը մի՛ մոռնար, կար-  
գա միշտ, չափ ու սահման գիր անտեսական  
կառավարութեանդ. հացդ չափով կեր, ջուրդ  
չափով խմէ, հանդերձդ չափով հագիր: Թող  
Հայոց կանայք քառասուն կանդուն հազար  
թերթիկ շրջագրեստը աասը կանդունի փո-  
խեն, որ ըստական շատ է այնչափ մարդոյ  
հասակի վայելչութեան, զոր Արարիչը չափով  
ստեղծեր է: Թող այդ մարդիկ իրենց սոյն  
սպրիկ նեղ ձե հանդերձը փոքր ինչ ընդլայ-  
նեն, որ անձկութենէն չպատուիս Թող չափ  
դնեն գարձեալ ընտանեկան այն ամէն պէտ-  
քերուն, գիտնալով թէ պէտքերն անսպառ.

են, զորս օր ըստ օրէ կը հնարէ Եւրոպայի ձեռ-  
արուեամ հանճարը, և մտրմնոյն ցանկուծ իւն  
և հաճոյք անհուն և անսահման են: Կի՞ծ է  
չափ շղենեք, մտրդ մի անգէտ մանուկ է, կը  
վաղէ միշտ դէպ ի սիրուն խաղալիկները:

Ուրեմն, պէտք է խոհական և կատարեալ  
մտրդ լինինք, սանձ դնենք մեր մանկամտու-  
ծեան, փորձառու՛ծ եամք և մեծամեծ տու-  
ժերով տեսանք և կը տեսնանք մեր ընտանե-  
կան ընդհանուր աղէտները թէ՛ նիւժ ապէս և  
թէ՛ բարոյապէս . . . :

Ո՛չ, ո՛չ, այնպէս մի՛ կարծէք, ո՛վ Հայոց  
ընտանիք, ճանչցէք ձեր շափն ու վիճակը,  
դուք շատ աղքատ էք ոսկւով և մտքով,  
աղքատ էք դաստիարակուծ եամք, աղքատ  
էք գործունեայ աշխատասիրուծ եամք, աղ-  
քատ էք արուեստական հանճարով, աղքատ  
էք իմաստուն տնտեսագիտուծ եամք: Առանց  
մտաւոր և նիւժական հարստութեան դու  
մի՞ծ է արժանի կը համարե՞ս զքեզ նոյն Եւ-  
րոպական ժողովրդոց ճոխ կեանքը վայելել:  
Ծանի՛ր, այդ կեանքը, այդ յառաջգիմուծ իւ-  
նը, ճակատի անխոնջ քրտինքով բազմակերպ  
արեան զոհերով, հարիւրաւոր տարիներու  
մէջ հաղիւ հալ կազմուած է, և դու դեռ

երէկ սկսեցիր նոր երախայի պէս քերական  
կարգալ . կը կարծես ու կը հաւատա՞ն թէ  
ուսեալ և քաղաքակիրթ Եւրոպացի դարձար :

Իս կը գովեմ քո եռանդ, որ կը ձգտիս  
դէպ ի յառաջդիմութիւն և քաղաքակիրթու-  
թիւն . միայն թէ սխալ ըմբռնած ես, որպէս  
թէ զեղիտութիւն, զեղծմունք, նորասիրու-  
թեան բուռն տենջանքը՝ ճշմարիտ քաղա-  
քակիրթութեան նմանողութիւն է :

Այդ նոյն իսկ քաղաքակիրթ ժողովրդոց  
մէջ սինլքոր մասին կարծիքն է և վարք : Ին-  
տելիւ եղիր ու տգնիւ ժողովրդոց բարի և  
պարկեշտ օրինակին հետեւի՛ր, որոց ամենայն  
ինչ կշռով ու չափով է, որոց ընտանեկան  
կեանքին յոյս և առաջնորդ՝ ուսումն, դաս-  
տիարակութիւն և տնտեսութիւն է : Քաղա-  
քակիրթ ժողովուրդը այս երեք բառերով կը  
վարէ իր ընտանեկան կեանքը, այս երեք բա-  
ռերն են, որով նոքա բարեբաւտակ և երջա-  
նիկ կ'ապրին աշխարհիս վերայ, վասն զի ուս-  
ման լուսով հաց կը գտնեն, դաստիարակու-  
թեամբ հոգին և սիրտը կրթելով բարի ընտա-  
նիք կը կազմեն, իսկ տնտեսութեամբ հացին  
սեղան և այլ կեանք պիտոյքները չափով ու  
կշռով կը մատակարարեն միշտ հոգալով :



ապագայի անստոյգ օրերն, որ անշուշտ կը պատրաստեն մտրդոյն համար կամ՝ երջանիկ բաղդ կամ թշուառ կեանք: Բայց մտրդ իւր ներկային մէջ կամ զգաստութեամբ, կամ ապշութեամբ իւր ապագայ օրերն ինքնին ձեռօք կը պատրաստէ, զի ներկայն ապագային հիմն է և ապագայն՝ ներկային յաջորդութիւն և շէնք:

Ուստի, ո՛վ դուք ընտանիք Հայոց, ուղղեցէ՛ք ձեր ներկայն որ ապագայն ուղիղ լինի, տնտեսեցէ՛ք ձեր ներկայն, որ ապագային հացը չպակսի: Մի՛ մոռնաք վերոյիշեալ երեք պայմանները, որ մեր թշուառ կեանքը կը բարւոքեն: Եւ պիտ է. — Լուսով հաց գտէք, գաստխորակութեամբ բարի ընտանիք կազմեցէք, իսկ իմաստուն տնտեսութեամբ հոգացէք միանգամայն ձեր ներկայն և ապագայն:

ԿԱԹՈՂՒԿՈՍ ՀԱՅՐԻԿ

—

Առաուծոյ հեռ խօսած էք: — Այո՛, աղօթած տտենաւ — է՛, Ան ձեզի պատասխանած է: — Անշուշտ: — Ապացոյց: — Ապացուցանե՞լ որ սա արեւը երկնից մէջ կը փայլի: Ապացուցանե՞լ: Բաւ չէ՞ զիտնալ որ ան կը լուսաւորէ և կը տաքցնէ զիս: Սուրբ Գիրք

միշտ ասանկ է: Անիկա հոգիս կը լուսաւորէ,  
սիրտս կը տաքցնէ. այս է ապացոյց որ ան  
Աստուծոյ խօսքն է:



Քեփլըր կ'ըսէ. «Տէրոջը իմաստութիւնը ան-  
հուն է, նոյնպէս Անոր փառքն սւ զօրութիւնը.  
Երկինք Աստուծոյ փառքը կը պատմեն: Արեւ,  
լուսին, աստղեր զԱնիկա կը փառաբանեն, և  
դուն, ո՛վ հոգիս, փառաբանէ Արարիչդ. Ա-  
նով կայ ամէն բան:»



Նեւտոն կ'ըսէ. «Արեգակին և մոլորակներ-  
ուն զարմանալի կարգուսարքը ամենակարող  
և ամենիմաստ Էակի մը գործն է միայն. այն  
անհուն Էակը կը կառավարէ զանոնք, ոչ իբր  
տիեզերաց հոգին այլ իբր տէր ամենայն իրաց:  
Ուստի Աստուած է ամենակարող և Տէր տիե-  
զերաց: Ճշմարիտ Աստուածը կենդանի Աստ-  
ուած է, իմաստուն և կարող:»



Հարուստ երկրագործ մը սովոր էր իր առա-  
ւօտեան ընտանեկան աղօթքին մէջ Կքաւոր-  
ներուն համար աղօթել: Սակայն աղքատ մը  
ներկայանալուն, «Աստուած տայ» ըսելով, կը  
ճամբէր: Օր մը աղօթելէն ետքը իր տղան

ըսաւ իրեն. Հայրիկ, գիտե՞ս ի՞նչ կ'ուզէիս —  
Ի՞նչ է փափաքդ աղաւս — կ'ուզէի քու ու-  
նեցած ցորենիդ տէր բլլալ: Եւ, ի՞նչ պիտի  
ընէի/ր — Այդ քատաց համար բրած աղօթքներդ  
գործնականի պիտի վերածէիս Հայրն ազգուե-  
ցաւ աղուն խօսքէն և անկէ ետքը իր դաւա-  
նանքին համաձայն տպրեցաւ:

Բենիամին Ֆրանքլին (տպագրիչ) իր մտ-  
հէն քանի մը տարի առաջ սա տապանագիրը  
պատրաստած էր.

Հոս կը հանդչի մարմինը Բենիամին Ֆրանք-  
լինի, նման հին գրքի մը կափարիչին, որուն  
թերթերը պատռած են. մաշած, գործած-  
ուած, «որդ» երուն յանձնուած: Սակայն այս  
գիրքը պիտի չկորսուի. հաստատ հաւատքս է  
որ ան կրկին պիտի լոյս տեսնէ, նոր և աւելի  
փառաւոր տպագրութեամբ, վերստին քըն-  
նուած և սրբագրուած: Ամէն:

Վիւրցուրկի համբաւաւոր բժիշկը Տոքթ.  
Շէօնպորն իր գործողութեան սրահին բացման  
առթիւ ըսաւ. Ամէն հիւանդ որ հոս կը մտնէ,  
թող հետք բերէ հաստատ հաւատք թէ Աս-  
ուած պիտի բուժէ զինք, և ամէն գործողու-

Թիւն կատարող բժիշկ երբ յաջողի, Գաղիոյ  
Թագաւորին վիրաբուժին Ամպրտա Ռոսէի  
նման ըսէ. «Ես խորհեցայ, բայց բուժողն  
Աստուած էր»)

Նէքտոր Հոռովմայեցի զօրավարը Տրովա-  
դայի պատերազմին ատեն Յոյներուն վրայ  
պիտի քալէր: Զինուորական հանդերձները  
հազնելէ ետև կնոջ վերջին հրաժեշտը կուտայ  
և կաթնատուին գիրկը հանգչող իր զաւակը  
կ'ուզէ վերջին անգամ իր գիրկը առնել: Փա-  
փուկ տղան տեսնելով իր հօր պատերազմիկի  
խոժոռ կերպարանքը, կը սոսկայ ու ճիշ մը  
արձակելով կաթնատուին գոգին մէջ կ'ապառ-  
տանի և դէմքը անոր մէջ կը ծածկէ: Նէք-  
տոր կը հանէ պատերազմիկի հանդերձները և  
նորէն կը մօտենայ իր զաւակին: Հիմա տղան  
այլ ևս չսոսկար հօրմէն տեսնելով անոր հայ-  
րական սիրով զեղուն գոզարիկ դէմքը, և կը  
նետուի հօրը բազկաց մէջ և երկու թաթիկ-  
ներով անոր վիզին կը փաթ թուր շայրն ալ  
համբոյրներ կը դրոշմէ զաւակին այտերուն  
վրայ և անհուն գոբովով կը գգուէ իր զա-  
ւակը: Այսպէս է Քրիստոսի յայտնութիւնը.  
մարդիկ կ'երկնչին, կը փաթչին մեր երկնուոր

Հօրմէն, երբ Նա կ'երեւի իր ահեղ, փառաւոր կերպարանքով, ամենակարող զօրութեամբ, արդարութեան ահեղ դահլէճը բազմած, իրր մաշող կրակ: Նա կը մերկանայ Նր փառքէն և ազդած ահէն և Քրիստոսով կը յայտնէ Ինքզինքը մեզի՝ սիրոյ ամենէն գողարիկ երեւոյթով: Յայնժամ հնար է մարդուս նետուիլ Անոր գիրկը:

---

Հին աւանդութեան մը համաձայն մարդ մը, որ թանկագին մատանի մը ծովը ձգած էր, խնդրեց ծովու չաստուածէն որ զայն ետ տայ: Չաստուածը մերժեց խնդիրքը: Ան ատեն մարդը թեւերը սոթթելով դոյլ մը առաւ և երեք օր անդադար և ամենայն աշխուժիւ ծովուն ջուրը պարզել սկսաւ: Ծովուն չաստուածն ահարեկեցաւ: «Կեցիր, մարդ, կեցիր,» դռչեց, և մատանին վերագարձուց մարդուն:

---

Քանի մը հոգի դացին գանգատիլ Թորոնթոյի եպիսկոպոսին թէ իրենց պատուելին ունկնդիրները կը ձանձրացնէ միեւնոյն քարոզը կրկնելով: Եպիսկոպոսը այս տարօրինակ պարագային առջև հարցուց թէ պատուելին

միեւնոյն քարոզը քանի՞ անգամ խօսած էր։ Անոնք հասկցուցին իրեն որ միեւնոյն քարոզը տասներկու անգամ տրուած էր։ Այն ատեն հարցուց եպիսկոպոսը. — « Ի՞նչ էր բնարանը : » Գանգատողներէն ո՛չ մին կրցաւ յիշել. « Գացէ՛ք ուրեմն, » ըսաւ եպիսկոպոսը բարկութեամբ, « գացէ՛ք և խնդրեցէ՛ք ձեր պատուելիէն որ նոյն քարոզը անգամ մըն ալ տայ, և յետոյ եկէ՛ք ու բնարանը ըսէ՛ք ինծի : »

—

Անձրեւոտ Աիրակի օրը եկեղեցի կ'երթամ, քանզի.

1. Աստուած օրհնեց Տէրոջը օրը և սրբեց զայն, և բացառութիւն չըրաւ անձրեւոտ Աիրակին։

2. Կ'ազնկալեմ որ իմ պաշտօնեայս հոն ներկայ ըլլայ. ինձ զարմանք պիտի ըլլար, եթէ նա օդին պատճառով տունը մնար։

3. Բացակայութեամբս պիտի կորսնցնեմ աղօթքները՝ որոնք Աստուծոյ օրհնութիւնը կրնային բերել իմ վրաս և քարոզը՝ որ մեծ բարիք կրնար ընձեռել ինծի։

4. Իմ ներկայութիւնս աւելի կարեւոր է այն Աիրակի օրերը երբ ժողովուրդը սակաւ է քան այն օր՝ երբ արդէն խռնուած է եկեղեցին։



5. Ի՞նչ աստիճան ալ որ ունենամ՝ եկեղեցիին մէջ, իմ՝ օրինակս անշուշտ ուրիշներու ալ պիտի ազդէ: Եթէ ես ետ կենամ, ինչո՞ւ անոնք չկենան:

6. Կարեւոր գործ մը երբ ունիմ, անձրեւոտ օրը զիս ատենը չպահեր: Եկեղեցիին պաշտամունքն ալ Աստուծոյ առջև խիստ կարեւոր է:

7. Զուարճասէր մարդոց մէջ կը տեսնեմ՝ թէ օդը ետ չպահեր փափկասուն կին մը պարահանդէսէն, երեկոյթէն կամ նուագահանդէսէն:

8. Այնպիսի օդը փորձաքար մըն է յայտնելու թէ ի՞նչ հիման վրայ հաւատքս հաստատուած է: Այս պիտի ապացուցանէ թէ ո՛րչափ կը սիրեմ՝ իմ Փրկիչս Ճշմարիտ բարեկամ մը քիչ անգամ զանց կ'առնէ ժամագրութեան մը ներկայ ըլլալ:

9. Անոնք որ ետ կը մնան եկեղեցիէն, որովհետեւ օդը տաք է, պաղ է կամ՝ անձրեւոտ է, շատ անգամ՝ գեղեցիկ օդ եղած ատեն ալ բացակայ կը գտնուին:

10. Թէպէտ իմ՝ ճամբաներս ինձ ուղիղ երեւնան, բայց Աստուած անշուշտ կը նկատէ իմ՝ շարժանիքներս. ուստի պէտք է աւելի



կատարեալ պատճառ ունենամ իմ զանցա-  
ռութեանս :

11. Մասնաւոր խոստում կայ թէ ուր որ  
երկու կամ երեք հոգի կը հաւաքուին Յիսուսի  
անունով՝ ինք ներկայ պիտի ըլլայ անոնց մէջ :

12. Անտեղի պատճառով բացակայու-  
թիւն մը՝ անմիջական ապացոյց մըն է հոգեւոր  
թուլութեան :

13. Չգիտեմ ո՛րքան կիրակիներ ևս պիտի  
պարգեւէ ինձ Աստուած : Ո՛հ թերեւս վերջին  
կիրակին ըլլայ այս երկրի վրայ որ ես անհոգու-  
թեամբ կ'անցընեմ, և ի՛նչ խեղճուկ պատ-  
րաստութիւն մը պիտի ըլլայ այս զանցառու-  
թիւնս՝ երկնից մէջ առաջին կիրակիս վայե-  
լելու :

Կ. Պոլիս

ՅՈՎ.ՍԷՓ ՀԱՅԿԱԶՆ

Իմաստութիւն է ինութեան համակերպիլ  
բոլոր իր վիճակներուն մէջ, որպէս զի կարե-  
նանք վայելել բոլոր բարիքը զոր Տէրը կ'ուզէ  
մեզի զրկել : Շատեր չեն սիրեր հովը : Ափս-  
փանք կը գտնեն անձրեւոտ օրուան մէջ, մաս-  
ծելով թէ անձրեւը կը կազդուրէ բոյսերը,  
կը լեցնէ ազրիւրները, և կը նորոգէ երկրի  
երեսը : Անձրեւին օգուաներուն վրայ անոնց

տեղեկութիւնը կը հաշտեցնէ զիրենք՝ ստքերու թացութեան և հովանոց կրելու անպատեհութեան հետ: Սակայն հովն ալ նոյնչափ բարերար է որչափ անձրեւը: Օդը մաքուր և առողջարար պահելու միջոցն է ան: Ծովէն կը ժողովէ և կը բերէ օզոնը, որ կը կազդուրէ մեր կեանքը: Երբ ողջունենք զայն իբրև մեր սպասարկուն, կը շարժէ մեր արիւնը, կ'երագէ մեր բազկերակի զարկը, և կորովով կը լեցնէ մեր ամբողջ մարմինը: Եւ եթէ ինչ ինչ պայմաններու տակ աղէտ և մինչև խսկ մահ յառաջ կը բերէ, նախապէս պահպանած և սնուցած է ամէն կեանք զոր կը վերջացնէ:

Ճրիարիխ Շթրաուս, բանապաշտ նշանաւոր Գերմանացին կ'ըսէ. « Բոլոր մեծ անձերուն մէջ, որոնց պարտական է մարդկութիւնն իր բարոյական գիտակցութեան կատարելութեան համար՝ Յիսուս կը գրաւէ վերջապէս ամենէն բարձր տեղը: Ան ներմուծեց մեր մշտատիպարին մէջ բարութեան քանի մը տարրեր, որոնք կը պակսէին Անոր գալէն առաջ: Արօնական այն ուղղութեամբ զոր տուաւ բարոյականութեան՝ աւելի բարձր նուիրագործում մը ընծայեց անոր, և Իր խկ անձին մէջ

մարմնացնելով ըստ թիւնը՝ կենդանի ջերմութիւն մը հաղորդեց անոր: Աստուած սիրութեան և ընկերսիրութեան, սրտի մաքրութեան և անհատական կեանքի վերաբերեալ ամէն բանի նկատմամբ ոչինչ կրնայ աւելցուիլ բարոյական այն ըմբռնումին վրայ, զոր Յիսուս Քրիստոս թողած է մեզիս »

Ճան Սթիւըրթ Միլ, Անգղիացի սկեպտականներուն կարողագոյններէն մին, հետեւեալ յայտարարութիւնը բրաւ Յիսուս Քրիստոսի նկատմամբ. « Անօգուտ է ըսել թէ Աւետարաններուն մէջ նկարագրուած Յիսուսը պատմական անձ մը չէ, և թէ չենք գիտեր որ հիանալի բաներուն ս'ըջափը ետքէն աւելցուած է Անոր հետեւողներուն աւանդութեամբ: Յիսուսի աշակերտներէն կամ՝ հաւատացողներէն ո՞վ կարող էր Անոր վերագրուած խօսքերն հնարել, կամ՝ Աւետարաններուն մէջ յայտնուած կեանքը և նկարագիրն երեւակայել: Անշուշտ ոչ՝ Դալիլեացի ձկնորսները: Նմանապէս ոչ՝ Սուրբ Պօղոս. որու նկարագիրը և ինքնայատուկ հակումները տարբեր տեսակէ էին: Նայնպէս ոչ՝ նախնի Քրիստոսեայ մտակեղծները, որոնց մասին ոչինչ

աւելի յայտնի է քան սա իրողութիւնը թէ  
իրենց վրայ գտնուած բոլոր բարութիւնը  
աւելի բարձր աղբիւրէ մը քաղուած էր  
Քրիստոսի կեանքն ու խօսքերն անձնական  
ընտանացութեան հանգամանք մը ունին խոր  
ներատետութեան մը հետ միացած, որով  
Նազովրեցի Մարգարէն, եթէ թողունք սո-  
բապ ակնկալութիւնը գիտական ճշգրտարա-  
նութիւն գտնելու հոն ուր բոլորովին տարրեր  
բան մը նպատակակէտ եղած է, նոյն իսկ  
Անոր ներշնչութեան չհաւատացողներուն տե-  
տութեամբ կը բարձրանայ բուն իսկ առաջին  
գասը ամենէն վե՛ստ հանճարի տէր մարդոց,  
որոնցմով կը պարծի մարդկային սեռը Երբ  
այս գերազանց հանճարը կը միանայ երկրի  
վրայ երեւցած հաւանօրէն բարոյական մե-  
ծագոյն Բարեկարգչին և Նահատակին յատ-  
կութիւններուն, կարելի չէ ըսել թէ կրօնքը  
գէշ բան մը ըրած է այս Մարդն ընտրելով  
իրբև մտատիպար ներկայացուցիչ և ա-  
ռաջնորդ մարդկութեան: Ոչ ալ հիմա  
գիւրին է նոյն իսկ անհաւատի մը համար  
առաքինութեան կանոնը վերացականէն  
թանձրացեալի վերածելու կերպ մը գտնել,  
որ լուսագոյն ըլլայ քան ջանքը այնպէս ապ-

րելու որ Քրիստոս հաւնի մեր կեանքին:»

Եթէ հեռագրատան ցրուիչ մը ձեր գուռը գայ, կը գոցէ՞ք զայն անոր դէմ և կը փախչի՞ք: Ի՞նչ օգուտ ունի այդ: Ձէք կրնար փոխել հեռագրին պարունակութեան բնութիւնը: Կ'առնէք հեռագիրը գողգոջուն կամ աներեր ձեռքով, և կը կարգաք ու կ'ընէք ինչ որ լուսագոյն թուի:

Նոյնպէս ընդունելու ենք մեր ցաւերն ալ և անոնք լրարեւներ են: Ըսելու ի՞նչ ունին արդեօք: Լնօգուտ է փախչիլ կամ լրարկանայ: Լնկեղծութեամբ, հանդարտութեամբ դիմաւորեցէք զանոնք: Հարցուցէք թէ ի՞նչ պատգամ կը բերեն ձեզի: Ըսէք. «Ո՛վ իմ ցաւս, ահա եկար: Ի՞նչ է պաշտօնդ: Ի՞նչ պատգամ կը բերես Հօրմէս: Ի՞նչ նոր գաս կ'ուզէ սորվեցնել ինծի:»

Կամ նայեցէք որպէս թէ ձեր լրարեւրին ուսերուն վրայէն անդին և ըսէք ձեր երկնաւոր Հօր. «Ո՛վ Տէր, խօսէ, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ:» Եթէ չընենք այսպէս, մեր երջանկութիւնը կը կորսնցնենք, և այն ատեն մեր ցաւն ալ: Պարտապ չհանենք Աստուծոյ շնորհքը, Աստուծոյ՝ որ մեր ցաւերուն

միջոցով իսկ կ'ուզէ մեզ Իրեն մօտեցնել :

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենէն մեծ գեան է Ժամանակ :

Ամենէն խոր սիկէանն է Մահ :

Ամենէն բարձր լեռն է Յաջողութիւն :

Ամենէն քաղաքակիրթ երկիրն է Այսօր :

Գաւառը ուր ոչ մէկ մարդ ստք գրած է՝  
կը կոչուի Վաղր :

Գաւառը ուր ոչ մէկ կենդանի բան կը  
բնակի՝ կը կոչուի Երէկ :

Քիչեր կը հասնին լեռնակատարը բաց ի  
անոնցմէ որ աչալըջութեամբ կը սպասեն  
անցնելուն անոր ոգւոյն պատեհութեան, որ  
վեր կը տանի տմէն անոնք որ զինք կը բռնեն :

Ամենէն մեծ անապատը կը կոչուի Կեանք :  
Եւ շատ ուխտասներ ունի : Ասոնք կը կոչուին  
Յոյս, Փառասիրութիւն, Սէր, Մարդասիրու-  
թիւն և Տուն, և ասոնց վերջինը ամենէն գե-  
ղեցիկն է : Ասոնցմէ զատ կան շատ ուրիշներ,  
տարածութեամբ փոքրագոյն, որոնցմէ կազ-  
դու բում կ'ընդունի ուղեւորը կեանքի յոյ-  
նեցուցիչ ուղեւորութեան միջոցին :

Գաի՛ր այնպիսի խոշորացոյց մը, որով զի-



տեղու առարկադ եղածէն միլիոն անգամ մեծ կրնաս տեսնել, և անով զննէ մեղուի մը խայթոցը և տես թէ ի՞նչպէս ողորկ ու հարթ է այն, որ անկարելի է անոր վրայ անհաւասարութիւն մը նշմարել: Յետոյ նոյն խոշորացոյցով զննէ կատարելապէս յղկեալ ասեղ մը, որ մարդու գործ է, պիտի տեսնես զայն անհարթ, անողորկ այն համեմատութեամբ, որով մեծ երեւցաւ:

Այս օրինակէն կ'իմացուի Աստուծոյ և մարդոց գործերուն մէջտեղ եղած տարբերութիւնը:

Կոյր աղջիկ մը բարի գործի մը համար 180 դահեկան բերաւ եկեղեցականի մը: «Քուն աղքատ աղջիկ մըն էս և կարողութիւնդ քեզի շնորհք այսչափ բան տալ,» ըսաւ եկեղեցականը: «Այո՛, բայց կարողութիւնս ինձի շատ լաւ կը ներէ այս գումարը տալ,» պատասխանեց աղջիկը: «Ի՞նչպէս» «Ես արհեստով կողովագործ եմ, տէր, և կրնամ լուսով ալ գործել, առանց լոյսի ալ: Արդ, աչք ունեցող աղջիկները ճրագի համար անշուշտ 180 դահեկանէ աւելի ծախսեցին այս ձմեռ, ծախք մը՝ որով էս աղտա էիս Ուստի



կը յուսամ որ պիտի ընդունիք նուէրս Քրիստոսի գործին համար:»

Երկար քարոզները կը յողնեցնեն մարմինը, և յաճախ մարդկային տկար բնութիւնները չեն կրնար մինչև վերջը մտիկ ընել զանոնք համըերութեամբ: Բայց Անգղիացի քարոզիչ մը միջոցը գտաւ քարոզը լմննայէն առաջ հաւատացեալներուն եկեղեցիէն դուրս ելլելը արգիլելու համար: Իր երկարապատում քարոզին բնաբան ընտրած էր «Աշխարհ կը շուտեցար ու պակաս գտնուեցար» (Գան. Ե 27): Երբ մէկ երկու հոգի կամաց մը դուրս կ'ելլէին, քարոզիչը յանկարծ ընդհատեց իր խօսքը և ըսաւ. «Աղէ՛կ, պարսններ, որովհետև կշռուեցաք, դուրս ելէ՛ք:» Աւելորդ է ըսել թէ այլ ևս ուրիշ մարդ մը չհամարձակեցաւ գէղի դուռը շարժում մը ընել:

### Յ Ա Ր Ո Ւ Յ Ի Ի Ն Մ Ե Ռ Ե Լ Ո Ց

1. Ի՞նչ է գիշերը, եթէ ոչ ցորեկի մահը: Ի՞նչ է առատօտը, եթէ ոչ գիշերի յարութիւնը: Ի՞նչ է դարունը, Յարութեան տեսարան մը: Դիտէ թրթուրն ու թիթեռնիկը:

2. Եթէ հանճարեղ արհեստաւորը քիչ մը հողն ու աճիւնը կրնայ դարձնել այնպիսի չքնաղաղիւս թափանցիկ ապակիի մը, զոր ամէն օր կը տեսնենք, եթէ փոքր սերմ մը որ չունենալով այնպիսի բանի մը երեւոյթ, կրնայ արտագրել աշխարհի գեղեցիկ ծաղիկը, և եթէ փոքրիկ կաղինը կրնայ յառաջ բերել այն ամեհի կաղնին, այլ ևս ինչո՞ւ կասկած չենք ի մասին յաւիտենական կենաց և փառաց սերմին, որ օրհնեալ հոգւոց հետ Քրիստոսի քովն է, թէ արդեօք պիտի հազարգակցի այն մարմնոյն որ արդէն իր տարերաց լուծեալ է:

ՊԼՔՍԹԻՆՌ

3. Նայէ հաւկիթի կեղեւին. անոր մէջ կայ արծիւ մը, որ մէկ թռիչով կրնայ խոյանալ վեր, բարձր քան որչափ չին կարող ուրիշ թռչուններ, և սեւեռել իր աչքերը միջօրէի արեւին վրայ:

ՈՄՆ

4. Չկրնա՞ր ըլլալ որ Քրիստոսնէական քաղաքակրթութեան գիւտերով եղած բնական զօրութեանց զարմանալի զարգացումը՝ մեր յարութեամբ առած հոգեւոր մարմնոց նշանը, նշմարանքը կամ առհասարակայն ըլ-

լայ: Մանրագիտակը, հեռագիտակն ու հե-  
ռաձայնը, մեր ճամբարդուծեանց այժմու-  
դիւրութիւնք և մեքսիկոյի քանի մը իրո-  
ղութիւններով մտաց իրարու հետ ունեցած  
կապակցութիւնը քիչ տարիներ առաջ լոկ  
մտացածին երազներ էին, բայց այսօր ամե-  
նուս ծանօթ իրականութիւններ եղած են  
անոնք: Մի՞թէ մենք յարութեան առաւօտուն,  
որուն վրայ հոս «ականջի լրով» միայն լսած  
ենք, պիտի չտանա՞նք հոգեւոր մարմնաց ծա-  
գող ճառագայթից նշոյլները:

ՓԷԼՈՊԷԹ

Ծ. Սփրճըն իր մէկ քարոզին մէջ  
մարմնոյ յարուքեան վերաբերմամբ հետա-  
գայ կէտերը առաջ կը բերէ.

Ա. Անարգ ցնցոտին թղթի գործարան  
տարուելով կը փոխուի ճերմակ թղթի, որուն  
վրայ կը գրուի Աստուծոյ խօսքը, ամենաազ-  
նիւ ճշմարտութիւններ, ամենարարձր բա-  
նաստեղծութիւններ և անսահման խոստում-  
ներ: Նոյնպէս մեր մարմինները ցնցոտիներու  
նման պիտի փոխուին հրեշտակային մարմնաց  
օժտեալ հրեղէն աչքք, արեւանման պայծա-  
ռութեամբ երեսներով և կայծակնանման  
արագընթաց թեւերով:



Բ. Տգեղ կահաւորուած և նուազ լուսաւորուած անարդ և անձուկ խրճիթը, որ անապահով վայր մըն է տիրոջ գանձուն համար, կալուածատէրը ժամանակ մը վարձուորն անկէ հանելով կը փոխէ զայն մարմարեայ պալատի, որուն պատուհանները կ'ըլլան ադամանդ և ձեղուններն յասպիտ ուր վերատին վարձուորն արժանի ատենին կը հրաւիրուի վերադառնալ հոն բնակելու համար: Այսպէս պիտի ըլլայ ասկէ երկինք փոխադրուողին վիճակը:

Գ. Յնցոտիներ հազնող զգուելի մուրացիկ մը իշխանի մը պալատ թող ընդունուի և իր ազտեղութենէն մարբուելով թող հագնի իշխանական ծիրանի, կոպէ սկեղէն գօտի, արծաթեայ հողաթափները թող փայլեցնեն անոր ոտքերը, սակիէ մանեակ թող կրէ ան իր վիզը և թող ունենայ ականակուռ պայծառ թագ մը իր գլխուն վրայ: Յայնժամ պիտի նմանի երկնից արքայական պալատան մէջ արեամբ փրկեալ իշխանի մը:

Դ. Աթրաթ Ֆորտի մէջ Մարիամ թագուհիին օրով երկու մարտիրոսներ ցիցի մը կապուեցան այրուելու համար: Ճիշդ այն պահուն երբ կրակն սկսաւ, մարտիրոսներ-

րէն մին, որ կազ էր, իր ձեռքի ցուպը նետե-  
լով պոռաց իր ընկերոջ, որ կոյր էր. «Քաջա-  
լերուէ՛, եղբայր, կրակը մեզ երկուքս ալ  
պիտի մարրէ:»

### Մ Ե Զ Ի Զ Ա Մ Ա Ր Մ Ե Ռ Ա Ի

Ով կիսանասին վրայ նաւ մը ժայռերուն  
զարնուելով մեծ ծակեր բացուեցան, ուսկից  
ջուրը ներս կը խուժէր: Անօգուտ էին ջրհան-  
ները. պէտք էր ծակերը խցել: Պարտ էր մէկը  
անձը զոհել ծակերը խցելու համար: «Ո՞վ կը  
համարձակի,» հարցուց նաւապետը: Խոր լուս-  
թիւն տիրեց նաւուն մէջ: Պահ մը յետոյ  
նաւազ մը յառաջ գալով պատրաստակո-  
մն թիւն յայտնեց վտանգաւոր փորձն ընե-  
լու: Նաւազը նաւուն յատակը լեցուած ջու-  
րին մէջ մտաւ: Երեք ծակ կար որ խցուելու  
էին. առաջինը և երկրորդը կրցաւ խցել:  
Վերջապէս երրորդն ալ խցել յաջողեցաւ քա-  
ջարի անձնուէր նաւաստին, սակայն ուժաս-  
պառ եղաւ: Ջրհաններն սկսան գործել, և  
նաւուն ջուրը պարօպուեցաւ. ազատուեցաւ  
նաւը բոլոր պարունակութեամբ: Երբ, սա-  
կայն, նաւազները վար իջան իրենց ազատա-  
բարը տեսնելու, ան մեռած էր արդէն: Ան-

չնչացեալ մարմինը վեր բերին, և երբ ցամաք հասան, մեծ հանդէսով անոր թաղումը կատարեցին: Գերեզմանին վրայ տապանաքար մը դրին սա՛ վերտառու թեամբ:

«Անոր մահով կեանք ստացանք:» Ազատուողներուն անուներն սպա մի առ մի փորագրուեցան սոյն տողին տակը:

Մերունի միախոնար մը կը պատմէ: Օտար երկրի մէջ ամայի տեղ մը անակ մը շինել պէտք եղաւ իմ բնակութեանս համար: Ես ոչ որմնագործութեանէ, ոչ ալ հիւանութեանէ տեղեակ էի: Շատ շնորհակալ եղայ երբ դրացի Ափրիկեցի երկրագործ մը ինձ խորհրդով և գործով օգնութեան հասաւ: Նախնական պատրաստութիւններէ եղան, շէնքին կմախքը կառուցուեցաւ և կատարելագործելու ձեռնարկեց ձերուկ Ափրիկեցին: Հարցուցի թէ ասանք դուռը ո՞րքան լայն և երկայն պիտի շինէ: Պատասխանեց, այնքան լայն որ դուռնէն դադաղ մը դուրս հանուի դիւրութեամբ: Միշտ յիշեցի այս պարզ ըստց խորհրդակց խօսքը, քանզի սահմանուած է մարդոց մէկ անգամ մեռնիլ:





## Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

### Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ե Ր Ջ Ա Ն Կ ՈՒ Յ Ե Ա Ն

Ֆրանքոյին իր գրասենեակէն կը դիտէր գործաւորները, որոնք տուն մը շինելու կ'աշխատէին: Անոնց մէջ իր ուշադրութիւնը գրուեց մէկը, որ միշտ ուրախ, զուարթ և երջանիկ էր: Օր մը կանչեց մտորակը և հարցուց իր երջանկութեան գաղտնիքը: «Ըսեմ քեզի գաղտնիքը» պատասխանեց գործաւորը, «աշխարհիս էն լաւ կի՛նն ունիմ: Երբ գործի երթամ, ան միշտ քաղցր խօսք մը ունի ինձ: Կը խրախուսէ, կը քաջալերէ զիս և փոքրիկս կը բերէ որ համբուրեմ: Երեկոյին երբ գործէս տուն վերադառնամ, կինս է որ զիս կը դիմաւորէ ուրախ, զուարթ և զիս կը համբուրէ ջերմիւ: Միշտ կերակուրս պատրաստ կը զբանեմ: Իմ բացակայութեանս ալ ամէն բան կ'ընէ ինձ հաճոյք պատճառելու համար: Ասոնք ամէնը զիս երջանիկ կ'ընէ և կ'արգիլէ ինձ իմ ընկերներուս դառն գտնուիլ:»

Մ Ե Ր Ս Ն Ո Ւ Ն Դ Ը

« Հացը կատարեալ սնունդ է և մարդ կըրնայ սպրիլ լոկ հացով ու ջրով : Բրինձն աւելի նշայ կը պարունակէ քան հացը և անոր չափ բորակածնային է, իսկ իւղի կողմէ անկէ վար չմնար : Թակլայի տեսակները շատ ճոխ են. բոլորովին իւղէ զուրկ չըլլալէ զատ, միտէն աւելի և հաւկիթին գրեթէ կրկնապատիկը բորակածնային կը պարունակեն և շատ ալ նշայ, միայն քիչ մը դժուարամարս են : Մեր կերակուրներուն մէջ կրնանք յիշել պղղուրէ փիղալը, որ սքանչելի կերակուր է, երբ միտով խառն ըլլայ և մսի ջուրով եփուած, վասն զի թէ՛ դիւրամարս է և թէ՛ սննդարար : Տորման կինայ կոչուիլ կերակուրներու դիցուհին, վասն զի միջուկը պղղուրի կամ՝ բրինձի և միտի խառնուրդ մը ըլլալով, կը ներկայացնէ թէ՛ բուսական և թէ՛ մսեղէն տարրեր : Տորման վերջին աստիճան համեղ, սննդարար և դիւրամարս է միանգամայն : Կերեւի թէ Հայերը, որ խոհարարութեան մէջ շատ աւելի քաղաքակիրթ են քան նոր աշխարհի բնակիչները, մեծ ծառայութիւն մը պիտի րնեն անոնց, սորվեցնելով շինել և ուտել մածուն, փիլղալ և տորմա : »

ՄԵՐ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ

Բարեկամ մը իրաւամբ դիտել տուաւ ինձի թէ մեր մէջ անանկուծ եանց կամ առեւտրական անկումներու գլխաւոր պատասխանատուներէն մին կ'ընն է. կ'ինը՝ որ անյագարար կ'ուտէ էրկանը գործը կարգին եղած տեսն. կ'ինը՝ որ շուսյլարար կը ծախսէ. կ'ինը՝ որ կը խաղայ, կը նուագէ ազնուապետօրէն. կ'ինը՝ որ ծայրայեղօրէն կ'արդու զարդուի, և ամենէն թանկագին փետուրներով կ'ուզէ աշտարակել իր գլխարկը. կ'ինը՝ որ կը մոռնայ խոհանոցը, ճերմակեղէնը, հացին դարակը, աղին ու պղպեղին ամանները, սուրճին դգայլ անուշեղէնին տեղը. և մանաւանդ այն կ'ինը՝ որ հարուստի սրտէն գուրս գալով հանգերձ, գեղանի ըլլալու ալ առաւելութիւնը ունի: Ահա այս պարագային, օրը մինչև իրիկուն արիւն քրտինք թափող խանութ պանը, վաճառականը, որ իր խեղճ ստորակարգ պաշտօնեաները կը չարչրկէ մէկ փարային համար, տանը մէջ բոլորովին տարբեր մարդ մը կ'ըլլայ. ո՛չ եկածը կը հարցնէ, ո՛չ գացածը կը փնտռէ: Տանը մէջ վրայ կուտայ արամբանա թիւնը զոր գործին մէջ ծայրայեղօրէն իսկ կը գործադրէր, և շրջափուռ հմայքին :

Տրտապոյրին տակ կը մոռնայ իր սյրական պարտաւորութիւնը. ծախքերը մեծ ծայրեր առած հսկայաքայլ կը յառաջդիմեն: Հապա կիներուն խաղամնլութիւնը: Բարձր դասու կիներուն համար միայն կ'ըսուէր թէ խաղամնլ են, բայց միջակ ու նոյն իսկ միջակէն վար կ'ներուեն մէջ ալ սկսած է ծայր տալ խաղամնլութիւնը. իրենց էրիկը քնացնելէ վերջ կը սկսին խաղալ: Իրենց զաւակներուն օրինակ կ'ըլլան այս կերպով, և փոխանակ բարեկրթութեան, կրօնքի և դաստիարակութեան դասերով զրաղելու իրենց զաւակներուն հետ, իրենց խաղընկերը կ'ընեն զանոնք, կամ բոլորովին մոռնալով անական հոգերը, կը թողուն որ պզտիկները անանկ կեցած տեղերնին մրտափեն, պազ առնեն, երեսի վրայ մնան: Կրներէն ա՞յս կը սպասէինք, ա՞յս է ֆեւիլիսիզմը, ա՞յս է ֆեւիլիսիսք կիներուն ազգեցութիւնը իրենց քոյրերուն վրայ: Եւ երբ սյրը՝ իրենց տկարութեան հմուքին ներքեւ՝ կը հաւատայ իրենց ամէն հոգ, շարաշար կը գործածեն վստահութիւնը, շատյլ ծախքերու, աւելորդ արդու զարդի համար գործածելով դու մարներ, սրտք իրենց ապագայ բարեկեցութիւնը կրնան ապահովել: Հացի պոյքարին անձնա-

աուր կ'ըլլան իրենց այրերը, չոս ու չոն վազելով օրական ծախքը չանելու և կամ քիչիկ մըն ալ խնայելու չամար: Մեղքնալու են թափուած քրտինքները, և զանանք արգիւնաւորելու չոգ տանելու են իրենց կողմէ:

Կնոջ ներշնչումը մեծ է ընտանիքին մէջ, բայց այդ ներշնչումը բարի ու օգտակար աւաջադրութիւններու չամար պէտք է գործածել:

Կ. Պոլիս

ԵՐ. Տ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

—

### ԿԱՅ ՏՈՒՈՂ ՄԱՅՐԵՐՈՒՆ

Կարիկ չափազանց գործածուքեկեկ առաջ  
եկած վնասները պզտիկ տոնց համար

1. Մանուկը ծնելէն մինչև վեց ամիս միայն իր մօրը կաթը պէտք է ծծէ: Վեց ամիսէն վերջը կաթէն զտա մսի ջուր, չաւկիթի դեղնուց, ալիւրի և արարոքի ապուրներ, ֆոսֆարիկ ֆալիկոն, չացի թաթախ, լաւ եփուած կանաչեղէններ, ընդեղինաց խիւսեր ալ տալու է: Միայն թէ այս ուտելիքներէն ամենէն դիւրամօրսները ընտրելով, քիչ քանակութեամբ պզտիկը պէտք է սնուցանել մին-

չեւ տարիուկէս, երբ պէտք է կաթ էն կարել  
զայն

2. Ձեմ ուզեր ըսել թէ կաթը, ընդհա-  
նուր առմամբ, փաստակար է: Պէտք է զայն  
գործածել գիտնալ, ոմանց համար լաւ է ա-  
նիկա, գիւրամարս ու օգտակար, ոմանց հա-  
մար ալ՝ չափէն աւելի փաստակար: Տղուն  
կազմը, հիւանդութեան վիճակը պէտք է հիմ-  
նական կերպով ի նկատ առնել, այսինքն  
պզտիկ մը միայն կաթ խմելով՝ երբ օրէ օր կը  
մեծնայ, չփսխեր, փորհարութիւն կամ պըն-  
դութիւն չունի, գործը (կղկղանք) շատ գէշ  
չհոտիր, կրնաս գիտնալ թէ կաթը անոր կազ-  
մին վրայ լաւ ազդեցութիւն ունի, ուրեմն  
անարգել, կրնաս զայն շարունակել: Ընդհա-  
կառակը՝ երբ տղան, առանց ուրիշ ուէ է հի-  
ւանդութեան, օրէ օր կը նիհարնայ, կը փսխէ,  
փորհարութիւն կամ պնդութիւն ունի, գոր-  
ծը չափէն աւելի գէշ կը հոտի, գիտցիր որ  
կաթը անոր գէշ կերպով կ'ազդէ: Պէտք է  
տղան կա'մ բոլորովին կաթէն կտրել և կա'մ  
քիչ քանակութեամբ կաթ տալով՝ ուրիշ ու-  
տեղիքներով ալ սնուցանել, տպա թէ ոչ,  
կրնաս պզտիկը կորսնցնել:

3. Ուրեմն թեթեւ անմարսողութեան



նշաններ ցոյց տուած ժամանակը պէտք է կամ ըստընդին և կամ մէկ քանի օրուան համար աղան կաթէն կարել և կամ կաթը քիչ քանակութեամբ տալով մնի ջուր, ապուր, հաւկիթ, և այլն, ալ տալ, որով անամար սողութիւնը պիտի անհետանայ ու հիւանդութիւնն ալ պիտի բուժուի:

4. Տքթ. Աինսն և Գառթթիէ կը յանձնարարեն վեց ամիսը ըստընդ մանուկները առանց մինակ կաթով սնուցանելու և կամ ծիծ տալու, կաթին հետ մէկտեղ զայն վարժեցնեն մնի ջուրի, հաւկիթի գեղձուցի, արարօրի, ֆօսֆարիև ֆալիէի, բնդեղինաց խիւսերու և լաւ եփուած կանաչեղէններու: Պէտք է ուշադրութիւն ընել սակայն և փորձելով ընտրել այն ուտելիքը, որ աղուն ա՛լ տակլի կը յարմարիս Կոյնպէս անոնց ստամոքսի ու աղեաց ամէն տեսակ հիւանդութեանց ժամանակ պէտք է կաթը կամ ըստընդին ջնջել և կամ շատ քիչ քանակութեամբ տալով՝ վերոյիշեալ ուտելիքներով աղան սնուցանել և աղեաց մէջ շմարտուելեզ մնացած մասն ալ անհետացնելու համար քիչ մը հընդիկ-իւղ ալ տալը գէշ չէ: Տղան հիւանդութեանէ աղէկնալէն վերջը՝ եթէ տկար ու ան-

արիւն մնայ, օրական 5—15 կրամ՝ ոչխարի  
հում միս, միսի հիւթ և կամ ինչաճ կա-  
նանչեղէններ տայ պէտք է:

5. Այն ժամանակ աղան, անմարտղու-  
թիւնը և կամ հիւանդութիւնը անհետանա-  
լով, ուրախ երեւոյթ մը կ'առնէ, փորհարու-  
թիւնը կամ պնդութիւնը կ'անցնի, փսիելը  
կը դադրի, դործը իր վերջին ծայր գէշ հոար  
կը կորսնցնէ և մորթը իր բնական գոյնը առ-  
նելով՝ աղան հանգիստ կերպով կը քնանայ,  
կ'աճի ու կը բազմանայ:

ՅՈՔԹ Ա. ՈՒՆՃԵԱՆ

Ք Ո Ւ Ն

Չափահասներու համար քնանալու ընդ-  
հանուր կանոնն է, «եօթը ժամ՝ քուն բաւ է  
ամենուն» Ասկայն 4 տարեկանը 12 ժամ  
քնանալու է, 7 տարեկանը՝ 11, 9 տարեկանը՝  
10, և 14—20 տարեկանը՝ 8—9 ժամ:

Լ Ո Յ Ս

Երիտասարդ Ամերիկացի մը 50,000 ֆր.  
գրաւ կը գնէ 10 տարի մութ խոցի մը մէջ  
բնակելու: Գրաւը կ'ընդունի Անգղիացի Լորա  
մը 10 սաք լայն և 45 սաք երկայն խցիկ մը  
300—Համագ. Օրոյ. 1808

իր տաճանամեայ ընտելարանը կ'ըլլայ: Բայց ի՞նչ  
աճուեիլ տեսարան: 10 տարի վերջ 35 տարե-  
կան երխտասարդը 70 տարեկան ծերունի մըն-  
էր եղած, մտղերը և մօրուքը սպիտակ, մար-  
մինը ծռած, դէմքը անգոյն, ձայնը դողդո-  
ջուն, և քալուածքը երեբուն: Լ.Ն՝յս, միշտ  
Լ՝յս փնտռեցէք:

### ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐԸ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ ՄԷՋ

Լուսինը շորած տանն երբ մէկը առաջին  
անգամ տեսնէ՝ իր մօտի ընկերին կամ բարե-  
կամին երեսը կը նայի և այդ ամսուն մէջ  
պատահած բարիքը կամ չարիքը անոր կը  
վերագրէ:

— Մեքենայէն դուրս ելած ցորենին մէջ  
կշկուրի կտոր մը կը գնեն, որպէս զի պերեֆեր  
իյնայ մէջը:

— Երբ աղայ մը թոնիրին վրայ շնալապղի  
(նստելու եղանակ մը), թոնիրին հացերը վար  
կը թափին:

— Եթէ մէկուն յօնքերը միացած ըլլան,  
անիկա իր գիւղին կամ քաղաքին աղջիկ-  
ներուն հետ պիտի կարգուի, ու եթէ անջատ  
ըլլան իրարմէ՝ ուրիշ տեղեր փնտռելու է իր  
բախտը:

— Գողցնողը երբ սուրբ աղբիւրի մը մէջ  
հաւկիթ մը ձգէ՝ դողն ալ անոր հետ հոն  
կ'իյնայ, ու եթէ մէկը այդ հաւկիթը առնէ՝  
դողը անոր կը փոխանցի:

— Պատահամա՞ր մըջիւն կլլողը՝ աշխատա-  
սէր կ'ըլլայ:

— Ժամուն մամը գողցողը՝ կը գողցնէ:

— Մարդ մեռած գիշերը՝ շատ երկար  
կ'ըլլայ:

— Երկուշարթի օր կանուխ մարդու բան  
չէն տար, վասն զի առնը պերեֆեր չմնար:

— Կաղանդի գիշերը լողցողը գրամ՝ կը  
գանէ:

— Արեամուտէն ետքը հայելի նայողին  
անդամներէն կամ զգայարանքներէն մէկը կը  
ծուր:

— Կրակին բոցը երբ ձայն մը կը հանէ,  
կը ճարճատի, գէշ նշան է. կը թքնեն վրան,  
որպէս զի չարը յաղթուի:

— Մայրը լուացուած ատեն եթէ զաւա-  
կը ձեռքը անոր լուացուած ջուրին տակ բռնէ,  
Աստուծոյ օրհնէքը վրան կ'ըլլայ, կը յաջողի:

— Իաշտերէ կամ պարտէզներէ կիսարոց  
(կէս վառած) փայտ պէտք չէ բերուի այն  
տունը՝ ուր աղջիկ կայ, վասն զի այդ տան  
աղջիկները անմնայ կ'ըլլան:

— Կաքուղը (կաքաւի սրսորդ) եթէ կաքաւի գլուխ ուտէ կաքաւ շատ կը բռնէ:

— Մաղ չուկեցող աղջիկները թող օձին շապիկը իրենց մազերուն մէջ պահեն, որպէս զի մազերնին երկննալով սիրական մը ունենան:

— Վախցողին ջուր կը խմցնեն:

— Վախցած մանկան վրայ պատարագիչը իր զգեստները թօթուելէն ետքը Աւետարան մը կը կարգայ գլխուն, և վերջը մանկան աչքը պատկերի մը հրաւիրելով՝ բացուած գիրքը յանկարծ ուժով մը կը գոցէ: Ասով վախը կը փոխի:

— Տղաձգանը առանձին չեն թողուր, քանզի ալքերը (ոգի մը) անոր սիրտը բերնէն կը քաշեն:

— Տղաձգանը 40 օր արեւը ելլելու չէ, որպէս զի մանուկը կամ ինք քառասունքկոխ չըլլան:

— Նորածին մանուկը առանձին թողելու չէ, վասն զի ալքերը իրենց պլանդակ զաւկին հետ կը փոխեն այն սիրուն, քրփշուկ (փափուկ) մանուկը:

(Շարունակութիւն 1909)

## ՆՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԲԱԺԻՆ

1. Մերունի ապրիլ երիտասարդութեան մէջ, որպէս զի կարելի ըլլայ երիտասարդ ապրիլ ծերութեան մէջ: **ԹԷՈՂԻԱ**

2. Երիտասարդ մը որ մտքուր, պարկեշտ և Քրիստոնէական կենցաղով չապրիր, կ'ունենայ տխուր ծերութիւն մը, քանզի ծերութիւնն երիտասարդութեան ապագան է:

**ՎԱՀՐԻՃ ՎԱՐԴԱՊԵՏ**

3. Երիտասարդութեան քանի մը տարիներու անհաշիւ, անպատասխանատու զուարճութիւնները՝ դառնորէն քաւել կուտան վաղահաս և տաժանելի ծերութիւն մը:

**Բ. Բ.**

4. Երիտասարդութեան տարիներու մէջ փեարազարդ բարձիկ, փափու կ'մահիճ, բեհեզեղեայ պատմուճան փնառողները՝ ծերութեան մէջ փուշէ մահիճ և ցնցափնեք կը դանեն:

\*\*\*



5. Երիտասարդութեան յատուկ է կեանքի սուղղութիւնը ցուցնող և բազմաբարձր որոշող մեծ տագնապը: Այս տագնապն և զայն անցնելու կերպը խորունկ ապաւորութիւն կ'ընեն կեանքին մնացեալ մասին վրայ:

**ՏԱՆՈՒՏԷՐ ՅԱՐՈՅ**

6. Կեանքը կը նմանի շէնքի մը: Եթէ կ'ուզենք որ շէնքի մը բոլոր յարկերը հաստատաւ ըլլան, պէտք է որ շէնքին հիմը առկուն և զօրեղ ըլլայ: Այսպէս ալ կեանքը երջանիկ ապրելու և բարեբաստիկ ծերութիւն մը ունենալու համար պարտաւոր ենք պատանեկութիւնն և երիտասարդութիւնը կոյս, մաքուր և արտաքին ազդեցութիւններէ զերծ պահել:

**ՏՈՔԹ. Ս. ԹԷՐԱՅԱՆ**

7. Երիտասարդութեան մէջ կատարեալ ժուժկալութիւնը, միշտ իրրեւ բարձրագոյն մտատիպար գնենք մեր երիտասարդներուն աչքին առջեւ՝ եթէ կ'ուզենք մեր ժողովուրդներն ազատել բարոյական ապակամութենէ: Եւ մեր երիտասարդները, հաւատալով թէ երիտասարդութեան մէջ հնար է ժուժկալութիւն, պարտին ջանալ որ բարձր և պատուա-

կան սկզբունքներու տէր ըլլան և սոյն օրհնեալ վիճակն ընդհանրացնեն մեր ժողովուրդներուն մէջ:

Յ. Գ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

8. Երիտասարդ մը մտրմնային զգացումներու հետեւելու չէ լսի բնագոյով: Պարտի դործածել իր կամքը: Պարտի հաշուի առնել պատշաճութեան և իրաւունքի սկզբունքը: Եւ, իբրև հետեւանք ասոր, պարտինք յիշել սա կարեւոր իրողութիւնն ևս թէ այս զգացումները զսպելը, կառավարելը յոյժ մեծ առնչութիւն ունի երիտասարդներուն բարոյական նկարագրին զարգացման հետ: Երիտասարդի մը բարձրացումը կամ նուաստացումը, կատարեալ նկարագրի տէր ըլլալը կամ չըլլալը, ըստ մեծի մասին սոյն զգացումները կառավարելու բնութենէն կախեալ է: Ոչ միայն անհատներուն, այլ ժողովուրդներու և ազգերու բարոյական վիճակը՝ երիտասարդներուն մէջ սոյն զգացման բարւոք կամ չարաչար կիրառութենէն կախեալ է:

ՆՈՅՆ



## ԱՌՏՆԻՆ ԴԵՂԱՐԱՆ

### ՅՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Եթէ մտրթոյ չոր և տաք է, տաք լոգանք պէտք է: Եթէ չես կրնար լոգանք բնել, դիր տարերդ տաք ջուրի մէջ, որուն մանանեխ խառնուած է: Փտթ թուէ տաք վառեղջի մը մէջ և տաքուկ անկողին մը մտիր ու տաք թէյ մը խմէ, որպէս զի քրտնիտ:

### ԴՈՂԱԼ

Սիկա թաց լաթ հագնելէ, խոնաւ տեղ նստելէ կամ օդի հոսանքի ենթարկուելէ առաջ կուգայ: Պէտք է քրտնիլ և մտրթին դարձողութիւնը խկոյն կանանաւորել. այս կ'ըլլայ տաք լոգանքով և տաք հեղուկներ խմելով:

### ԿԱՊՈՒՏ ՇԱԶ

Ենթակային ձայնը յանկարծ կը փոխուի, ջերմութիւն և դժուարաշնչութիւն կ'ունենայ: Մինչև վիզը տաք ջուրի մէջ բնկղմէ, սափորէ մը ելած տաք ջուրի շագին շնչէ, շնչափու-

դին վրայ թեփի կամ կանեփի սերմի խիւս  
դիր: Եթէ օգուտ չընէ՝ մանանեխի խիւս մը  
դիւ: Տուր փսխեցուցիչ մը: Բժիշկը պէտք է  
կանչուի:

### ԿՈԿՈՐԴԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ

Վերջին առջևի մասը ծածկելու շափ մե-  
ծութեամբ թեփի տաք խիւս մը դիր: Եթէ  
օգուտ չընէ և կուլ տալ կը դժուարի, դիր  
մանանեխի խիւս: Փորձէ կարկարա տաք քա-  
ցախով, որուն մէջ թէյ մը խառնուած է:  
Դիր տաքերդ տաք ջուրի մէջ, մանանեխ դնե-  
լով մէջը, ապա անկողին մտի, և հաւասա-  
րաչափ մեղր և քացախ խառնելով կեր:  
Բժիշկը կանչել մի՛ մոռնար:

### ՆՈՒԱՂՈՒՄ

Ենթական բացուած պատուհանի մը առ-  
ջև տար, կամ բացօդեայ տեղ մը, թույցուր  
վիղին և կուրծքին հանդերձները, պառկեցուր  
դուխը փոքր ինչ բարձր դիրքով, թափէ պաղ  
ջուր երեսին և ձեռաց օփերուն վրայ: Ճա-  
կատը քացախով կամ օղիով թրջէ, և փշէ  
շարունակ այս թրջած անդերուն վրայ՝ սաս-  
տիկ պաղի զգացում՝ յառաջ բերելու համար:

Երբ ենթական կրնայ կուլ տալ, պտղ ջուր  
խմցուր:

Ձ Ղ Ա Ձ Գ Ո Ւ Յ Ի Ի Ն

Ակուայ հանող աղաք ենթակայ են զքաղ-  
վնյիւ Երախան մինչև վիզը ջուրի մէջ գիր, տա-  
քութեան ստախճանը արմուկդ գիմանալու  
չափ բլլայ: Յետոյ սղնայարը սւթով շփէ ձե-  
թով և հնգիկ-իւղ տուր: Ակուայ հանող  
աղաք այս վիճակին մէջ մեռելանման կ'ըլ-  
լան, աչքերը կը գալարին, գիմագիծը ձգտում  
կ'ուեննայ և կը սեւնայ: Երբ մարտոզական  
գործարաններու խանգարման պատճառաւ  
զքաղմօ բլլան, վիզի երակները կ'ուռին և սրու-  
վայնը կարծր կ'ըլլայ: Այսպիսիներուն փսխե-  
ցուցիչ տալու է կակորդը փեռուրով մը զբրգ-  
ուելով, յետոյ հնգիկ-իւղ տուր:

Շ Ն Ջ Ե Ր Ա Կ Ի Ա Ր Ա Ի Ն Ա Շ Ո Ս Ո Ւ Յ Ի Ի Ն

Այսպիսիներուն արիւնը կը ցատկէ բաց  
կարմիր գոյն ունենալով: Իսկոյն դադրեցուր  
արեան հոսելը՝ կապ մը գնելով վէրքին արիւն  
հոսած տեղին վերէն: Ինչ լաթ որ ձեռքիդ  
մծա է, պատուէ կապ մը շինելու համար: Այր-  
կեան կորանցնել չըլլար: Կապը պնդէ փայտ մը

անցընելով մէջը ու դարձնելով, և հնար եղածին չափ շուտ բժիշկին դիմէ:

### ԲՈՆԿԱԾ ՀԱՆԴԵՐՁՆԵՐ

Ենթակային վրայ ծածկէ գորգ, վերմակ, վերարկու, ինչ որ ամենէն մօտ գանելու ըլլաս: Մէջը փաթթէ ենթական և գետինը պառկեցուր ու դլտորցուր, և մարէ կրակը: Յետոյ մեղմիւ հանուեցուր ենթական որ սյրած մորթը չպատուի: Ապա դարմանէ, ձէթ և հաւ կիթի ճերմակ է, միասին խառնէ մինչև որ թանձրանայ: Կ'ուռնենաս սպեղանի, եթէ այրածը շատ է, բժիշկին դիմէ:

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Նա որ կ'ուռնէ չանօթեցած  
Եւ կը խմէ դեռ չծարուած,  
Պիտի մեռնի չծերացած:

### ՏԿԱՐ ՍՏԱՄՈՔՍ

Մարտողութեան տկարութիւնը կը բուժուի ճաշէ և պառկելէ առաջ կէս թէյի դգալ իմենոն ուտելով և վրայէն գաւաթ մը ջուր խմելով:



Ա Կ Ա Ն Ջ Ի Ց Ա Ի

Սակուած սխտոր մը գիր ականջիդ մէջ,  
վրան ալ՝ բամբակ:

---

ԹԵԹԵԻ ՊԱՂԱՌՈՒԹԻՒՆ

Խոր շունչ առ, մարմինդ կը տաքնայ թ ը թ -  
ուածին ծծելով, ինչպէս կրակը կը վառ-  
իչելով: Գոցէ բերանդ և քիթովդ խորունկ  
շնչէ. կրկնէ մինչև նպատակիդ հասնիս:

---

Ա Կ Ռ Ա Յ Ի Ց Ա Ի

Կտոր մը ֆեսֆիրի բամպակի մէջ փաթ թէ  
և ականջիդ մէջ գիր:

---

ՔԻԹԷՆ ԱՐԻՒՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

Թարմ լեմոնի հիւթը քիթդ քաշէ, կամ  
պաղ ջուր հեար քացախ և պաղլեղ լուծելով:

---

Կ Ա Թ Ո Ւ Ա Մ

Ենթակային գլուխը բարձր պառկեցուր,  
հանդերձները թուլցուր, պաղ ջուրի մէջ  
թաթխած լաթ գիր գլուխը, շարունակ փոխէ:  
Մտքուր զով օդ, սրունքերուն ներքին կողմը  
մանանեխի թուղթ գիր, նոյնպէս վիզին ետին  
Բժիշկ կանչէ:

---

Մ Ի Շ Տ Ա Ռ Ո Ղ Ջ

Գլուխը զով, ստբերը տաք, մանաւանդ  
տղոց ստբերը, միշտ տաք պահել :


Խոնաւ ստբի համար, մաքրութիւն, ամէն  
օր գուլպայ փոխել, գաղջ լոգանք ստից, սա-  
ղիսիղի փոշի գուլպային մէջ :

Կար կարած ատեն երբ ձեռքերը թրջին,  
պէտք է բրինձի փոշիով ատեն ատեն ձեռքերը  
շփել :

Ամերիկացի բժիշկ մը ստամոքսի հիւան-  
դութենէ բուժուելու համար 50 օր ծով պա-  
հեց : Սոյն ժամանակին բժիշկը իր պաշտօնը  
կը վարէր և պտոյտի կ'երթար : Ամենէն երկար  
ծովապահութիւնը զոր գիտենք՝ 63 օր է :

Հարբուխի լաւ դարմանն է Ֆեսֆօրիի իւղ  
գնել, և նսւրը վրձինով քիթին ծակերուն  
մէջ քսել :

Քացխած ստամոքսի համար առաւօտուն  
գաւաթ մը տաք ջուր խմել :



# ՈՒՍՈՒՑԶԱԿԱՆ



## Վ Ա Ր Ժ ՈՒ Թ Ի Ի Ն

Սըբարտացի օրէնագէտ Լիբուրկոս օր մը իր քաղաքացիներն ի մի վայր հաւաքեց անոնց կարեւոր յայտնութիւն մը ընելու համար: Երբ բոլոր հրաւիրեալները հաւաքուած էին, երկու շուներ արձակել տուաւ: Երկուքն ալ մէկ մօրմէ սերած էին, բայց մէկը սրտի վարժուած էր, իսկ միւսը ծուլութեան, ուտելու և պառկելու: Յետոյ հրամայեց շուներուն ներկայութեան նապաստակ մը արձակել և պնակ մը կերակուր դնել: Որտի վարժուած շունը իսկոյն նապաստակին ետեւէն վազել սկսաւ, մինչ միւսը դէպ ի պնակը առաջանալով անյադարար լափեց անոր պարունակութիւնը: Լիբուրկոս յայնժամ հաւաքուած բազմութեան ուղղեց խօսքը և ըսաւ. «Այս շուները մէկ մօր կը վերարերին, սակայն մին իր կանուխ օրերէն սկսեալ սրտորդութեան վարժեցուցեր են, բոլոր կենացը մէջ այդ վարժութենէ չհեռանար, իսկ միւսը ուտելու և ծու-

լուծեամբ քնանալու վարժուած ըլլալով՝  
այսպէս ալ պիտի մնայ իր կենաց բոլոր օրե-  
րուն մէջ ։»

Տղաքները կրթելու համար կարեւոր դաս  
մըն է այս. ինչպէս վարժուի մանուկը, այնպէս  
կը մնայ բոլոր կենաց մէջ . առաջին ազդեցու-  
թիւններ, ըլլան բարի կամ՝ չար, կը մնան  
ցմիշտ : Սողամն կ'ըսէ . «Կրթէ մանուկը իր  
ճամբան սկսած ատենը, որ իր ձերութեան  
ատենն ալ անկէ չխտարի» (Առակ. ԻԲ. 6) :

## ՏՂԱՅՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

1. Արոշ կերպով և անպայման «ոչ» ըսէ,  
երբ տղադ սխալ կամ չար բան մը կը կամի ընել :
2. Տղուդ անհնարին կամ իր կարողութե-  
նէ վեր բան մը մի պատուիրեր, իսկ անմեղ ու-  
րախութիւն մը կամ փափաքները մի արգիլեր :
3. Մի թողուր որ տղադ պնդելով կամ  
քեզ համոզելով «ոչ»դ «այո»ի փոխէ :
4. Արկար բանակցութիւններով թող  
չյաջողի տղադ արգիլած բանիդ պատճառը  
գիտնալ : Տղադ «ինչո՞ւ համար» հարցնելու  
չէ բնաւ, բացարձակ և անմիջական հնազան-  
դութիւն պէտք է :

5. Կամակոր աղուդ մի՛ աղաչէր որ հնազանդիւ Սուտ սպառնայիք ալ մի՛ ընէր: Ըրած սպառնայիքդ ալ ի գործ գիրս:

6. Հոտ հրամաններ մի՛ տար, սակաւաթիւ հրամաններիդ ալ անօտառճառ կատարել տուր:

7. Զգոյշ կեցիր աղադ ծագրելով զրգուկէ և խտացնելէ, պատուոյ զգացում՝ արթընցուր անոր մէջ:

8. Խաղերով և ուրիշ անմեղ զուարճութիւններով աղուդ ձանձրոյթը միշտ փարսակէ ջանա:

9. Քու կամքդ ալ միշտ Աստուծոյ կամոց հպատակեցուր և կրթէ աղադ Տէրօջը վախով:

10. Կամակոր աղայոց հեռ աղօթէ և առանձին աղօթք ըրէ անոնց համար:

ՄԱՅՈՒՐ ԳԻՐ

Գծագրու թեան, նկարչութեան սկզբունքներուն վարժուիլ՝ անհրաժեշտ պէտքեր են արդի երիտասարդութեան համար:

Գծագրութիւնը այսօր ամէն արհեստի մէջ անհրաժեշտ տարր մըն է: Ոսկերիչը անմիջապէս պահանջուած գոհարեղէնին ձեւը գծե-

լով իր յաճախարդին, կը հրապուրէ զայն իրեն հետ գործ բնելու :

Նոյնպէս ալ երկաթագործը, մեքենագէտը, թիթեղագործը, կօշկակարը, աստղծագործը, դերձակը, և վերջապէս ամէն ձեռարուեստի հետեւող մարդ մեծապէս պէտքը կը զգայ գծագրութեան :

Իսկ գեղեցիկ գիրը յայտնի է որ մեծ գրամագլուխ մըն է այսօր ամէն կարեւոր հաստատութիւններու մէջ : Հապա նկարչութիւնը Ինչ բարոյացուցիչ ժամանց թէ՛ երիտասարդներու և թէ՛ երիտասարդուհիներու համար ճաշակը ս'ըջափ կը վսեմանայ անով : Մարդ ս'ըջափ պէտքը կը զգայ այս գեղարուեստին թէ՛ հարստութեան և թէ՛ աղքատութեան մէջ :

### ՄԵՐ ԴՊՐՈՅԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԳԻՐԸ

Բուսական հաղուագիւտ են մեր գարոցներուն մէջ գիւրքնթեանի և ճաշակաւոր գիր ունեցող աշակերտները : Բնական յարմարութեան պակասութիւն, ահա այն հեշտ չբովանդանքը, որով կը հանդարտեցնենք մեր խիղճը : Բայց եթէ պատասխանատուութեան զգացումն աւելի զօրաւոր ըլլար մեր մէջ, եթէ



սովորութիւնն ունենայինք մեր խղճի քննութիւնն ընելու անաչառ կերպով, այն ստեն անշուշտ գիտութեամբ թերութիւնը պիտի չվերագրէինք լսկ ընական յարմարութեան ազգակիւնս

Կայ մէթոտի խնդիրը, բանաւոր մէթոտով մը կ'ուսուցանե՞նք միշտ գիրքս Եւ յետոյ, պարզ գիրք չե՞նք զսֆեր յաճախ զարգացրինս Կայ դասերուն թիւը, կրտսեր դասարաններու մէջ ամէն օր գիրի գաս մը կարեւոր է: Եւ վերջապէս, կայ սերիշ պատճառ մը, թերեւս ամենէն կարեւորը, այն է՝ գիրի ընծայութեամբ շատ քիչ կարեւորութիւնը: Աշակերան անճոռնի կերպով կը զրէ սեւ տախտակին կամ թուղթին վրայ, և ուսուցիչը չգանիր ու գիտողութիւն չընէր: Այս կերպով ազան կը վարժուի յոռի գիրի և ազեղութեան, և ինքն ալ կարեւորութիւն չընծայեր գիւրընթեանի և ճաշակուոր գիրի: Քանի՞ վարժարան կրնանք ցոյց տալ, ուր աշակերաններն ունենան կանոնաւոր տեսակներ լուսանցքով, ծծուն թուղթով ու մարմար գիրով: Տեսա՞՞ք էք ի՞նչ գանկիք շիֆոններ են, ինչ որ մեր աշակերաները, տանց քաշուելու, իրենց ուսուցիչներուն կը ներկայացնեն և ինչ որ մեր ուսու

ներն առանց սիրա խառնուքի կ'ընդունին՝ համար անունով : Թող աշակերտը գիտնայ թէ իր ուսուցիչները չեն կրնար հանդուրժել անմաքուր գիրի, անհոգ կերպով գրուած համարի, աղտոտ տետրակի, և այն ատեն իրենց գիրին հոգ պիտի տանին ոչ թէ միմիայն գիրի գասի ատեն, այլ գպրոցական բոլոր գրաւոր հրահանգներու համար : «Պահեա»էն գիր պիտի չունենայ այն ատեն աշակերտը, այլ ճաշակաւոր գիր և ճաշակաւոր տետրակ ունենալը քաղաքավարութեան պարտք մը պիտի ընէ ինքզինքին համար : Այս կերպով, մաքուր և ճաշակաւոր կերպով գրելն ունակութիւն մը պիտի ըլլայ, ունակութիւն՝ որուն բարոյական կարեւորութիւնն աւելի մեծ է քան գործնական կարեւորութիւնը :

Յ. Թ. ՀԻՆԳՒՆԱՆ

### ՈՒՍԱՆՈՂԱՅ ԱԿՈՒԱՆԵՐԸ

Մօտերս Վիւրցպուրկի (Պալիէրա) Քաղաքային Ժողովին մէջ արուեցաւ որոշում՝ մը, որ արժանի է ուշագրութեան և նմանողութեան : Այս որոշման համաձայն քաղաքին հանրային գպրոցներու աղքատ աշակերտներուն աղաւները պիտի քննուին և խնամուին ձրիաբար՝

անոնց ծնողքներուն հաւանութեամբս Նպատակ կայ աշակերտներուն ականջի և կոկորդի ախտերն ալ դարմանել նմանապէս, եթէ աւաջին փորձը յաջողի: Հաւանօրէն թեթեւ ծախքով պիտի դարմանուին մանկանց ակռաները, այնպէս որ անոնք, եթէ պիտի ապրին, չտառապին դժուարամարտութենէ, որուն պատճառն է կերակուրն աղէկ չծամելը:

### ԸՆԹԵՐՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ո՛րչափ կրկնենք քիչ է: — Պէտք է կարգալ, մի՛շտ կարգալ, շարունակ կարգալ, որովհետեւ ընթերցումն է որ ամէն բան կը սորվեցնէ մեզ, — ուղղագրութենէն սկսեալ մինչև պարբերութիւններու քերականական և գրական կազմութիւնը:

«Խնդիր է որ շա՛տ թէ քիչ գիրք կարգալն է օգտակարը: Նշանաւոր մատենագիր մը կը յորդորէ քիչ գիրք կարգալ, և կը կարծէ որ հեղինակի մը ոգին թափանցելը երկարատեւ ընթերցումով միայն կրնայ բլլալ:»

Շատ ճիշդ խօսք մըն է այս և խորհուրդ կուտամ՝ ձեզ որ հետեւիք այս կանոնին: Բայց որ հեղինակները ընտրելու է: Ասիկա քիչ մը ճաշակի և մանաւանդ կարծիքի խնդիր է:

Ընդհանուր եղանակով մը, կարգալու է ինչ որ պարզ, անկեղծ, մաքուր և զազափարով ու զգացումով ուղիղ է: Այս կերպով ճաշակը կ'ազնուանայ և միտքը կը պայծառանայ: Երիտասարդները պէտք է զգուշանան անբարոյական գրուածներէ, որոնք յաճախ գէշ ալ գրուած կ'ըլլան: Այս թունաւոր աղբիւրները ամէն տեսակէտով փնասակար են ընթերցողին:

Պէտք է միտքը ազնուացնել և ոչ թէ անբանացնել:

«Լաւագոյն հեղինակներն ընտրելէ ետքը, պէտք է կարգալ զանոնք լուրջ և խոհուն կերպով մը: Ոմանք կը պարծենան որ կրցած են գիրք մը կարգալ քանի մը ժամուան մէջ: Այս արագութիւնը արժանիք մը չէ, որովհետեւ ամուլ կը մնայ, օգտակար չըլլար: Պէտք է յաճախ կանգ առնել և ուշագրաւ մասերը նորէն կարգալ, որպէս զի միտքը իւրացնէ ու մարսէ: Աւելի աղէկ է կարգալ գրիչ ի ձեռին, նշանակելով լաւագոյն հատուածները, որոնք այնպէս աւելի խորունկ կերպով կը քանդակուին յիշողութեան մէջ:»

«Վերջապէս խորհուրդ մըն ալ կու տանք անոնց համար, որոնք օտար լեզու կը սորվին: Կարգացէք ամէն օր, կէս ժամու չափ, բարձր

ձայնով, և ուշադրութեամբ կրկնեցէք այն  
բառերը, որոնց արտասանութեան մէջ պզտիկ  
սխալ մը կը նշմարէք: Այս կերպով ականջը  
տակաւ կը վարժուի նրբութիւնները որոշե-  
լու: Պէտք է նաև բառարանն ալ աչքէ ան-  
ցընել և նոյն լեզուին հմուտ անձերու հետ  
խօսելու առիթներ ստեղծել:»

### ԼԱԻԱԳՈՅՆԸ ԸՆՏՐԵԼ

Շատ լաւ պիտի լինէր եթէ մի քիչ հեռա-  
նայինք Ֆրանսական ժամանակակից գրակա-  
նութիւնից: Ֆրանսական ժամանակակից գրա-  
կանութեան ազդեցութիւնն երեւում է մեր  
նորահաս երիտասարդների բնագոյների ու բնա-  
ւորութիւնների մէջ: Այս ախուր կէտը յա-  
ճախակի նկատած եմ իմ գեղարուեստական  
ճանապարհորդութեան մէջ. այս երեւոյթը  
մեզի համար ազագույնում վնասաբեր կարող է  
լինել: Եթէ մի անհատ մի անգամ կարգւոյ  
հանճարտա Շէքսպիրի հոյակապ հրաշակերտ-  
ները, ուրիշ տեսակ պիտի դոսոյ ու մտածէ:  
Շէքսպիրի 30 հատոր գրուածների մէջ աիրա-  
պետող ոյժը բացայայտօրէն բարոյականու-  
թիւնն է: Շէքսպիրը կարողում է մեզի ներ-  
շնչել ազնուութիւն, բարութիւն, անկեղ-

ծուծիւն, գծուծիւն, արդարատիրուծիւն,  
անգլուրահաւանուծիւն, սիրոյ վսեմ՝ զգաց-  
մունքներ, խոհեմուծիւն, շրջահայեցուծիւն,  
նրբագնին մտածողուծիւն և մի խօսքով՝ ա-  
ռողջ մտածողուծիւն ու առողջ բարոյակա-  
նուծիւն: Գծրաղգարար, Հայերս շատ քիչ  
հետաքրքրու՛մ ենք Շէքսպիրով, Աէօթէով,  
Խրսէնով, Հաուամանով, Զուաէրմանով ու  
սոյնանման բարոյագէտ ու խորագնին հան-  
ճարներով:

Տողերիս գրողը Ֆրանսական ժամանա-  
կակից գրականուծեան մէջ այլասերման նը-  
շաններ նկատած է, և մեր յարգելի օրիորդ-  
ներն ու պարոններն անյագարար կարգում են  
սոյդ փնտասարեր ու մակերեւուծօրէն գրուած-  
ները . . . : Եզրակացնելով մտածումներս,  
կրկնում եմ՝ Ֆիզիքապէս առողջ, բարոյապէս  
ու մտաւորապէս կրծուած սերունդ ունենա-  
լու համար՝ անպատճառ պէտք է հետեւիլ  
Անգլիացի ու Գերմանացի լրջօրէն գրողների  
կարծիքներին, կարգալ նոցա գրուծիւններն  
ու համոզուիլ որ ժուժկալուծիւնը Ֆիզիքա-  
կան ու բարոյական օրէնքներից մին է:

Անժուժկալօրէն մտածողն ու ապրողը՝  
տակաւ առ տակաւ Ֆիզիքապէս, բարոյապէս



ու մտաւորապէս տկարանալու ու թուլնալու  
ենթակայ է... Է ետեւարար սյուպիսին մտա-  
ւորապէս ու ֆիզիքապէս կ'սյլլատերուի, իր  
գոյութեան օգտակար լինելու փոխարէն վնաս-  
ակար կը լինի և գժրախաների թիւին տե-  
սակը կը շատցնէ: Երբ հին ազգերը բարոյյա-  
կան ու ֆիզիքական կրթութեան մէջ անու-  
շաղիւր գանուեցան, գանդաղիլ սկսան, նոքա  
տակաւ առ տակաւ սկսան քայքայուիլ ու  
դիւրաւ ոչնչացան: Համայնեցիներն ու հին  
Յոյներն որպէս անհերքելի փաստ կարող են  
ծառայել: Մի անհատի բարոյական ու մտա-  
ւոր սյլլատերումն ու իր ֆիզիքական առողջու-  
թիւնը՝ իր վարած կեանքից կախում ունի:

Կոյութիւն չունի ֆիզիքական, բարոյյա-  
կան ու մտաւոր հաւասարակշռութիւն ու  
ներդաշնակութիւն առանց ժուժկալութեան,  
առանց մաքուր ու բարեկիրթ կենցաղավա-  
րութեան: Ուրախութեամբ ու փաստերով  
սրատրաստ եմ պատասխանելու իմ բժիշկ հա-  
կառակորդներին, եթէ պարոններն ընդդիմա-  
խօսելու շահախնդրութիւնից և կամ միամիտ  
ձեւանալու նրբին արուեստից վարակուած են:

Քանսիա


Կ. ԳԱԼՅԱՅԵԱՆ

Ողբերգութեամբ

ՋԱՆՔ, ՈՉ ԹԷ ԲԱԽՏ

Աշխարհի կենսագրութիւններուն մեծ և մշտաբաց գիրքն ուսումնասիրելով «բախտ»ի քիչ հետք կը գտնենք անոր էջերուն մէջ : Այստեղ ըն պատանեկութեան ատենն իսկ 11 ժամ կ'աշխատէր : Ծրանսացի մեծ գիտունն Փասթէօր ամբողջ ցերեկներ և գիշերներ կը մնար իր աշխատանոցին մէջ : Ակասի գիրք գիրքի ետեւէ կ'ընդօրինակէր երբ պէտք կ'ունենար ու շէր կրնար գնել, և ընդօրինակելու պահուն կը սորվէր զանոնք : Փրէսթօթ պատմիչը, գրեթէ ամբողջովին կոյր, իր ծանօթագրութիւնները կը պատրաստէր անհաւատարի խնամով և աշխատութեամբ : Մէկ գիրքի յօրինման 10 տարի նուիրեց, ամէն օր անընդհատ աշխատելով : Այնքան օրն իրուն կը գործէր ձեռքի ամենածանր աշխատութեամբ, և ժամերով կ'ուսանէր կրակի լուսով :

# ԱՌՏՆԻՆ ՇԻՒԱՆԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ



(Շարունակութիւն 1907էն)

Բժախնայիւր Տիւանդապատհար շատ բարե-  
տիրաւ, դժած անձ մը կրնայ ըլլալ: Սա այնքան  
կը փափաքի իր Տիւանդին օգտակար ըլլալ, որ  
չտփէն անդին կ'անցնի: Ամէն վայրկեան ներս  
ու դուրս կը վազէ. կը յոգնեցնէ իր Տիւանդը  
շարունակ հարցնելով թէ ուտելիք չուզէ՞ր,  
որ պարտաւոր է բերելու եթէ մղոններ խկ  
ճամբորդել պէտք ըլլայ: Կը վերցնէ Տիւանդը,  
անկողինը միշտ կը շտկուտէ, վարագոյրը մերթ-  
կը բանայ մերթ կը դոցէ: Կարճ խօսքով, սա  
անանկ մէկն է որ բնաւ հանդարտ չկրնար  
նստիլ և համբերութեամբ սպասել, այլ շա-  
րունակ կը շարժի: Այս ամէնը իր բարեօրտու-  
թեան արդիւնքն է թէ և, բայց Տիւանդին շատ  
նեղութիւն կը պատճառէ, և երբ սննեակէն  
դուրս կ'ելլէ, Տիւանդը մենախօսելով կ'ըսէ.  
«Յիրաւի դուն բարի կին մըն ես, սակայն եթէ  
փոքր ինչ հանդարտարարոյ ըլլայիր, ի՞նչ մեծ  
բարեբաղդութեան արժանացած պիտի հա-

մարէի իմ անձս՝ քեզ նման հիւանդապահ-  
հուհի մը ունենալու համար»

Ապա ունինք անհոգ շլիսի հիւանդապահը։  
Բժիշկը բնու վատահ չէ որ իր հիւանդը պէտք  
եղած քանակութեամբ դեղը ստացու։ Երբ  
միտքը իյնայ կուտայ դեղը, իսկ երբ մուցած  
ըլլայ՝ յաջորդ ժամուն երկու անգամը կու-  
տայ։ Մտքուր գաւաթ մը չգտնուիր երբ պէտք  
ըլլայ։ Կերակուրը կը տանի հիւանդին և երբ  
չուտէ, ժամերով հոն կը մնայ։ Անկողնին մէջ  
փշրանքներ լեցուն են, անանկ որ խեղճ հի-  
ւանդը աւաղի վրայ պառկած կը կարծէ։  
Կրակարանը մարած ածուխներով լեցուն է.  
անօթները անկողնին տակ դրուած են և սեն-  
եակը գարշահոտութեամբ կը լեցնեն։ Հացի  
և միսի կտորներ, ոսկոր գետինը ձգուած  
են։ Ասոր հեռեւանքով մուկերը աղատ ան-  
ցուդարձ կ'ընեն սենեկին մէջ։ Խեղճ հիւանդը  
կարող չէ արթնցնել հիւանդապահը, որ մու-  
կերը վանէ սենեակէն։ Յիրաւի վա՛յ այսպիսի  
հիւանդապահի ձեռք ինկած հիւանդին։

Կայ նաև անգուր հիւանդապահը, որ իր  
պարտքը կը կատարէ թէեւ, բայց ոչ թէ

սիրով, Բժիշկին պատուէրները կէտ առ կէտ  
կը գործադրէ: Ար ստիպէ Տիւանդը վայրկենին  
առնել գեղը: Երբ անկողնոյ սպասները փոխ-  
ուելու է և Տիւանդը կ'ըսէ թէ շարժումը ի-  
րեն վնաս կու տայ, կը պատասխանէ. «Ի՛նչ  
ընեմ, բժիշկը ասանկ պատուիրեց, ի՛նչպէս  
անոր հրամանին գէմ կենամ» Իր բոլոր գոր-  
ծողութեանց մէջ կատարելապէս հաւատա-  
րիմ է, բայց կը պահսին քաղցրութիւնը,  
գութը և կարեկցութիւնը:

Ի վերջոյ կան, թէ և փոքր թուով, անհա-  
ւասարիմ Տիւանդապահներ: Անոնք գինիին  
մեծ մասը իրենք կը խմեն, Տիւանդին կերա-  
կուրը իրենք կ'ուտեն, և բժիշկին ալ կ'ըսեն.  
«Տիւանդը կերու, որ առած անունդին նա-  
յելով ապաքինելու էր» Իրենց նեղութիւն  
կու դայ ստիպել Տիւանդը, որ առնէ գեղը, և  
որոշել ժամերը: Ար թափէ գեղը, անանկ որ  
երբ բժիշկը յաջորդ այցելութեան գեղին  
արուակին վրայ նայի, կը հաւատայ թէ իր  
հրահանգին համեմատ տրուած է գեղը և  
գոհ կ'ըլլայ:

Ասոնք ամէնը տեսած եմ: Անհասարակ Տի-

ւանդապահուհին ասէսով կերակուր տարած  
ատեն, ոտքը գորգին զարնելով, ամէն բան  
թափած ու ջարդուրուրդ եղած է: Անհոգ հի-  
ւանդապահուհի մը, տեսայ որ քրտինքով  
թրջուած աղան անկողինէն հանելով ավո-  
ռին վրայ նստեցուց, առանց վրան բան մը  
ծած կելու՝ անկողինը շինելու համար:

Անգամ մը փոքրիկ հիւանդ մը ունէի, ո-  
րուն կուրծքին վրայ եագը մը դնել պէտք էր:  
Ձեռքովս դրի և յանձնեցի: Հիւանդապահին  
որ անհոգ է եղեր: Յաջորդ օրը գասայ որ փոք-  
րիկը այնքան անտես եղած էր, որ եագըն  
կուրծքին վրայէն կռնակը փակչէր էր, և հոն  
այնքան վէրք մը բացած էր որ խեղճ աղան  
շարաթ մը անկարող եղաւ կռնակին վրայ  
պառկիլ: Ունեցած եմ՝ անհաւատարիմ՝ հի-  
ւանդապահ մըն ալ, որ գեղին շիշը կոտրեց,  
ուրիշ մը լեցուց շաքարջրով և պիտակը անոր  
վրայ փակեցուց: Բարեբաղդաբար աղան չմե-  
ռաւ, և խնդիրը ծանրակշիռ կերպարանք չա-  
ռաւ:

Հարկ չէ որ բժիշկին օգնող հիւանդապահը  
չատ ուսեալ ըլլայ սակայն պէտք է որ գոնէ  
առողջ մտքի տէր ըլլայ և առօրեայ սովորական



գործերէն հասկնայ: Պէտք է ձեռագիր կարգալ գիտնայ և գրէ որոշ ու պարզ կերպով, եթէ ոչ գեղերուն բաշխման ատեն չարաչար սխալներու մէջ կ'իջնայ: Պէտք է նաև առողջ վիճակի մէջ ըլլան հինգ դպաստանքները. տեսողութիւն, լսողութիւն, շօշափում, հոտառութիւն և ճաշակ:

—

**Ա.չԲ**, որ կարենայ հրահանգները կարգալ, կամ բարձր ձայնով կարգայ հիւանդին, և դէմքին փոփոխութիւնները գիտէ: Շուտ տեսնող հիւանդապահը չսպասէր մինչև որ հիւանդը խնդրէ: Նա կը հասկնայ անոր աչքին, շրթունքներուն և մտտերուն շարժումքէն: Իսկոյն կը հասկնայ թէ ի՞նչ կ'ուզէ:

—

**Ա.կանօ**, որ ամենաակար հառաչն իսկ լսէ, և շատօպէ ակար հիւանդը որ ձայնը բարձրացնել ստիպուի և կրկին կրկին նոյն բանը խնդրէ:

—

**Զգացում**, որ կարենայ ջերմութեան փոփոխութիւնը և հիւանդին մորթին զօրութիւնը զգալ, և չգործածէ ու է բան որ անոր մարմինը պիտի այրէ կամ պաղեցնէ:

—

**ՀՈՏԱՌՈՒՐԻԱՆ**, որ սենեակին օդին ամենաչնչին ապականութիւնը զգայ և դեղատուած ատեն հոտէն հասկնայ թէ դեղին մէջ ու է սխալ կա՛յ թէ չէ:

**ՃԱՇՏԱԿԻԿԻՒՄ**, որ անյարմար կերակուրները չտայ հիւանդին, և հասկնայ թէ հիւանդը կրնա՛յ մարտել զանհրա՛ւ:

Եթէ բոլոր այս յատկութիւնները և փոքրինչ հրահանգութիւն ունենայ, բժիշկին լաւ օգնական մը կրնայ ըլլալ: Հոս սակայն մէկ զգուշութիւն պէտք է. պէտք չէ իրեն ճարտարութեան վրայ մեծ համարում ունենայ, որ չյանդգնի բժիշկին հրահանգներուն հակառակ գործել: Ազատ է թելադրութիւններ ընել: Կրնայ ըսել. «Տոբ թոր, արդեօք սա աւելի լաւ չըլլա՞ր, կամ չէ՞ք կարծեր որ աւանց ագոր ալ կրնանք ըլլալ» Սակայն բժիշկէն պահանջել որ սա և նա ընէ, և երբ իր պահանջը չընդունուի իր միտքը դրածը ընէ, ագոր անկարելի է հանդուրժել: Եթէ բժիշկին վստահած հս հիւանդին կեանքը, պէտք է այլ եւս չմիջամտել և թողուլ որ ան իր պարտքը կատարէ:

## ԳՈՐԾԻ ՄԱՐԴՈՑ ԲԱԺԻՆ

### ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ

1 Ան որ կր բաղձայ անկախ գիրքի մը տէր ըլլալ պէտք է նախ կարճ ունենայ և զայն գործածէ իր փափաքին, յաջողութեամբ համար:

2. Դրան պէտք է անկախ գիրք մը ձեռք ձգելու և զայն պահելու համար: Եթէ, սակայն, դրամ չաճելը դիւրին ալ ըլլայ, գիտհնար չէ անկախ գիրքի մը տէր ըլլալ և մնալ անոր մէջ՝ ցորչափ դրամը չպահուի: Դրամ պահելը ամենէն դժուարին գործն է աշխարհի մէջ:

3 Ու սախի հիմնական օրէնքն անկախ գիրք մը ստանալու է: Պէտք է շահածէն նուազ ծախսել: Տարին 50 օսկի եկամուտ ունեցող անձը եթէ 51 օսկի ծախսէ, կործանու մը սկըսած է արագաբայլ հասնել իր վրայ: Իսկ 50 օսկի եկամուտ ունեցողն եթէ միայն 49 օսկի ծախսէ և 1 օսկին պահէ, այն ատեն կրջանկու թիւնը և յաջողութիւնը սկսած է ժողովիրեն, պայմանաւ որ այսպէս շարունակէ:

4. Ասոր կ'ըսեն խնայողութիւն, որ կը նշանակէ հարստութիւն, մինչդեռ շռայլութիւնը պատճառ է անյաջողութեան:

5. Խնայողութիւնը կծծիւնքիւն չնշանակեր: Զրկել անձը անհրաժեշտ պէտքերէ, զեղջել գործաւորներու վարձքէն և ուրիշ անարգ ու զղուելի արարքներ ընել՝ չէ խնայողութիւն: Ասոր նաւաստութիւն կ'ըսեն:

6. Կինը խնայողութիւն կ'ընէ փոխանակ Յի միայն Վ ճրագ վառելով, և թերեւս տարին քանի մը սակի խնայէ: Սակայն շատ սխալ է երբ այդ գրամը անպէտ արդու զարդի կը ծախսէ:

7. Վաճառականը թուղթի կտորներ և գործածուած պահարաններ կը պահէ, և անոնք կը գործածէ փոխանակ մաքուր թուղթիս կը կարծէ թէ խնայողութիւն կ'ընէ, մինչ անդին մեծածախ խնջոյքներ տալով և կառքեր ու ձիեր պահելով, անպէտ ծախքեր կ'ընէ: Ասանք Ծրանքիին կը կոչէ. «Փարայի մը խնաստուն և սակիի մը յիմար:»

8. Այս տեսակ խնայողութեամբ ոչ ոք յաջողած է: Ուրիշ բան մը ևս չու է հանդերձները ժամանակ մըն ալ հագնել փոխանակ նոր մը գնելու: Առ այժմ կարկտելով գոհ եղիր: Առանց ձեռնոցի ալ կ'ըլլայ: Կերակուրդ պարզ և սննդաբար ըլլայ: Ասով 5-10 փարա խնայելով հետզհետէ կը դիզուի խնայածդ և բաղձացած արդիւնքդ ձեռք կը բերես:

9. Վարժուչիւն պէտք է: Պօղոս առարկալ կ'ըսէ. «Ես սորվեցայ գոհ ըլլալ:» Անգամ մը երբ սորվիս, աւելի հաճոյք պիտի զգաս օրինաւոր խնայողութեան քան անմիաժախքերու մէջ:

10. Այս վարժութիւնը ընելու համար տետրակ մը պահէ, և ըրած ամէն ծախքերդ հոն նշանակէ: Ամէն Շր. երեկոյ աչքէ անցուր ըրած ծախքերդ և երբ տեսնես որ հաճօքի և զուարճութեան համար ըրած ծախքերդ անհրաժեշտ ծախքերէդ աւելի են, յաջորդ շարժումն մէջ ուղղէ սխալդ:

11. Անպէ՛ճ ծախքեր ընել կը ստիպուինք

միշտ՝ ուրիշները նկատողութեան ասնելով:  
«Ի՞նչ պիտի ըսէ դրացիս» Այս է մեր երկու-  
դը: Ֆրանքլին կ'ըսէ. «Ուրիշներու աչքն է որ  
մեզ կործանման կ'առաջնորդէ: Այս է պատ-  
ճառը որ շատերուն քիթը տիղմէն չազատիր»:

12. Կը տեսնես դրացիդ որ ատենօք քեզի  
վիճակակից էր, բայց հիմա քեզմէ հարուստ  
է: Ուստի կը խորհիս անոր առջև պզտիկ չե-  
րեւիլ: Ձի, կառք չես կրնար գնել, սակայն  
կը վարձես և անոր կ'երեւի որ դիանայ թէ  
իրմէ վար չես մնացած:

13. Շատ կը սխալիս այդպէս ընելով:  
Ի՞նչ ալ ընես, պիտի չհաւատայ որ դուն  
իրեն չափ հարուստ ես: Սա պիտի ըլլայ հե-  
տեւանքը քու փառամոլութեանդ որ դրամի  
վասնելով, խեղճ մայրդ կամ կինդ պիտի  
ստիպուի անհրաժեշտ պէտքերու մէջ խնայո-  
ղութիւն ընել: Այս վերջապէս մեծ պիտի ըլ-  
լայ անկումդ:

14. Ուստի իմաստունը այն է որ կը զգու-  
շանայ ունայն փառամոլութենէ և կ'անդի-  
տանայ ուրիշներու դատողութիւնները իրեն



նկատմամբ, և սա կանոնը միշտ իր աչքին առջև կը բռնէ: «Պէտք է ապրուստս համաձայն ըլլայ եկամնւտիս և պարտիմ՝ մաս մը մէկդի գնել անհրեւոս օրուան համար») Հետեւէ այս կանոնին և պիտի ըլլաս տէր անկախ և բարեկեցիկ գիրքի ու վիճակի:

15. Եթէ անգամ մը սկսիս այս կենսահան գիտութեան, եթէ փոքր գումար մը մէկդի գնես, կամ զայն շահու տաս և կամ շահուտր գործի մը գործածես, պիտի զարմանաս այսպիսի խնայողութեան պարգեւած հաճոյքը վայելելով: Այս գիտութեան կարեւորութիւն չտալով շատ մարդիկ աղքատ կը մնան և բազմաթիւ հարուստներ ալ կ'աղքատանան:

16. Վերջապէս գիտցիր որ յաջողութիւնը աւելի փորձանքներ ունի քան ձախորդութիւնը, մանաւանդ այնպիսի յաջողութիւնը, որ անակնկալ կերպով կ'ըլլայ: Ներսէս ձեռք ձգուած հարստութիւնը գիւրաւ ալ ձեռքէ կ'ելլէ: Հպարտութեան, շուտութեան և ունայն փառամոլութեան հոգին երբ թոյլ տանք որ տիրէ մեր վրայ, անբուժելի ախտ մը կ'ըլլայ որ կը սպառէ մարդուս

հարստութեան ակը և կը ցամփեցնէ աղբիւրը որքան ալ մեծ ըլլայ այն: Այնպիսիներ կը սկսին յաջողիլ և յառաջանալ, իսկոյն կը սկսին իրենց ծախքերն ալ աւելցնել, և շատ չանցած իրենց ծախքերը կը գերազանցեն իրենց եկամուտը: Եւ որքան ջանան արտաքինը պահելու, այնքան վար կ'իջնեն և վերջապէս կ'ընկղմին և իրենց յիմարութեան զոհ կ'ըլլան: (Շարունակել)

### ՅԱՃԱԽՈՐԴՅՇԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

«Մեր կսկսաճներուն մեծ մասը տեսակ մը մարդիկ են: Յաճախորդը սիրաշահիլ չեն զիտեր: Եւրոպացին հազար կտոր կ'ըլլայ, ինչ ընելիքը չգիտնար յաճախորդը համոզելու, անուշ-բերանելու, ձեռքէ չփախցնելու համար: Մեր կսկսաճները գրեթէ կոշտարար, կամ գոնէ պաղ կը վարուին: Գիտեցէ՛ք նոյն իսկ մանրավաճառները (սարքնի), Յոյնը, Պուլկարը, նոյն իսկ Անատոլուէն նոր եկած անվարժը մեր կսկսաճներէն աւելի անուշ լեզու ունի յաճախորդին հանդէպ: Հարկու լներ էք մերիններուն լեզուն՝ փողոցը դուռներուն առջեւ կամ շուկան՝ իրենց սրտդափն առջեւ: «Բուն ասիկա չես կրնար ուտել»)

«Քու ուտելիքդ աս չէ:» «Տունիդ հեօճերը  
բեր որ առնես ասիկա:» «Խոսա կեր, յարդ  
կեր:» Այս և այսպիսի գունադեղ բացաա-  
րութիւններ՝ տեղական ազգեցիկ բարբառով  
արտաբերուած, շատերուն բերնէն լսուած,  
առածի կարգ անցած բացագանչութիւն-  
ներ են:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ

Կը պատմուի թէ հարուստ ու յաջող  
մարդ մը, որ ամէն տեղ պտտած և ամէն բան  
տեսած էր և ժողովողի նման գտած էր թէ  
ամէն բան ընդունայն է, բոլորովին ձանձրա-  
նալով կեանքէն, յուսահատութեան պահու  
մը մէջ գետ մը նետուեցաւ հեղձամաս ըլլա-  
լու նպատակով: Անոր բարեկամները գետին  
մէջ խուղարկեցին անյայտացած մարդը, բայց  
հասանքն ապահով առած տարած էր զայն  
գիշերուան մթութեան մէջ հակառակ ե-  
ղերքը: Երբ մարդը սթամիեցաւ, որոշեց բոլո-  
րովին նոր կեանք մը ապրելու փորձ մը ընել:  
Մեռած կը կարծուէր ան: Ուստի հեռաւոր  
տեղ մը, անծանօթ, առանց գրամի մէկուն  
քով մտաւ իրբեւ հասարակ մշակ: Մինչև  
այդ աստի լարժուած չէր գործել: Հիմա ա-

աւա գործ ունէր: Առաւօտեան զով օդով  
կը քշէր իր լուծը արտին մէջ և խոշոր շունչ  
կ'առնէր ահօսներուն վրայ մինչեւ իրիկուն:  
Աեանքը բոլորովին նոր և օտարտախ բան մը  
թուեցաւ անոր: Նոր մտածումներ, նոր հե-  
տաքրքրութիւններ, նոր յոյսեր, նոր իղձեր  
արթնցան անոր մէջ: Եւ եղաւ որ ամիսներ  
ետքը մտորումն զգացումները բոլորովին փոխ-  
ուեցան, և երբ յետոյ իր նախկին վիճակը  
վերստացաւ, իր բարեկամները չկրցան ճանչ-  
նալ թէ նոյն մտորան է ան: Անոր համար  
կեանքին անէծքը իր գործը չէր եղած, այլ  
գործէ զրկումը: Ով որ լրջօրէն ծուլութիւնն  
ընտրէ իրրեւ իր բաժինը, անէծքը կ'ընտրէ:  
Սատանան միշտ ծուռ գործ մը կը գտնէ ծոյլ  
ձեռքերու տալու:

## ԱՂՔԱՏ ԲԱՅՅ ՀԱՐՈՒՍՏ

Անգամ մը երկրագործի մը հետ կը ճամ-  
բորդէի Անգղիոյ մէջ, և դրացիներէն ոմանք  
խօսքի նիւթ եղան: Գիւղին նշանաւոր մէկ  
մտորումն վրայ խօսելով հարցուցի. «Աարողու-  
թեան տէր մէկը չէ՞:» «Է՛հ, պարոն, շատ  
ստակ չունի, բայց սաստիկ հարուստ է,»  
պատասխանեց: «Ուրեմն մեծ հողատէր է:»

«Ոչ, ոչ, շատ հողի տէր ալ չէ, բայց տակաւին սաստիկ հարուստ է:» Երկրագործը ժըպտելով գիտեց պահ մը իմ շփոթութիւնս և սպա սպռնեա բացատրեց իր միտքը. «Կը տեսնէք թէ շատ ստակ չունի շատ հող ալ չունի, բայց տակաւին հարուստ է, վասն զի ըստ ըստ իր կեանքին մէջ երբէք անկողին չէ մտած<sup>9</sup> մէկու մը փարա մը պարտք չունի: Ուզածին չափ աղէկ կ'ապրի, և միշտ կը վճարէ իր առածին փոխարէնը: Ոչ մէկու պարտական է: Ամէն մարդու ճշմարտը կը խօսի և իր պարտականութիւնը կը կատարէ իր անձին, իր ընտանիքին և իր ընկեր արարածներուն նկատմամբ: Իր խօսքը իր մուրհակին չափ հաստատ է, և գիւղին մէջ ամէն մարդ, ամէն կին և աղայ կը յարգէ զայն և կը մեծարէ: Ո՛չ, պարտն, ո՛չ, շատ հող չունի բայց տակաւին սաստիկ հարուստ է, վասն զի ըստ ուզածը ունի:» Հաւանեցայ երկրագործին ըստը եզրակացութիւններուն, քանզի ամբողջովին ուղիղ գտայ զանանք:

Երբ մէկը ունի ամէն ինչ որ պէտք է իրեն և ամէն ինչ որ կ'ուզէ ինք, անշուշտ հարուստ է: Իսկ երբ չունի, անշուշտ աղքատ է:

# Յ Ո Ի Յ Ա Կ Ն Ե Բ

## I. ԱԶԳԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

ԵՐԿԻՐ	ՎԵՂԱՊԵՏ	ԿԾՆՔ	ՄԱՏՐԱՔՂ.Ք. ԲՆԱԿԻԶ	ՏԱՐԱԾՔ.	ԲՆ. ԵՐԿԻՐ
Անդղիտ թ.	Կառուքրատ Է.	Քողոքապահան	Լնտան	314,339	42,000,000
Արժանիք ինչ չ.	Քուրանի ժողովուրդ	Կաթն ուլիկ	Պա. - Այլքա	2,885,620	5,000,000
Ա.ս. Հունգ. Կ.	Յրանց Եղեք-Ք Ա.	Քող. Կաթն. Յն.	Վիեննա	673,091	47,000,000
Ա.Ֆրանսուսանի.	Նուրիս-Սուլթան	Խալախ	Գապուլ	558,000	5,000,000
Քանադա չ.	Կու. կրոն	Կաթն ուլիկ	Քանադա	82,600	300,000
Քարակու. էյ չ.	Փու. ան Է.ս. քու. քա	Կաթն ուլիկ	Ատու. նոթոն	253,100	700,000
Քերու չ.	Փու. սոյ	Կաթն ուլիկ	Լիմա	1,769,804	4,500,000
Քարթու. կալ թ.	Փարսու Ա.	Կաթն ուլիկ	Լիզյուն	92,157	5,500,000
Փարսուսուղ ի.	Նի. քուլա	Յու. նուր-քու. ան	Չեթի ինեէ	9,080	25,000
Փերմանիս Կ.	Վիլհելմ թ.	Քողոքապահան	Պերլին	540,743	60,000,000
Փոլանդիս չ.	Ռէյէս	Կաթն ուլիկ	Մերելին	1,203,100	4,000,000
Փոթնիս Կ.	Սու. քիլիէ	Կաթն ուլիկ	Սան-Սուլէ	54,070	350,000
Փու. սոյ չ.	Սու. ճե. ճիկ	Պու. սոյապահան	Սէուլ	218,650	6,000,000
Փու. սոյ չ.	Քարթու	Կաթն ուլիկ	Հալան	118,833	1,500,000
Փու. սոյ Կ.	Մերելիէ թ.	Քրիստոնէայ	Ատիս-Ապարա	540,000	4,000,000
Չանդիսուր Է.	Ալի Կիլն	Խալախ	Չանդիսուր	2,560	210,000
Չու. ինչ քրիստ. չ.	Չարքեր	Քող. և Կաթն.	Պէու. ն	41,419	3,500,000
Է. քու. սոթն ուր չ.	Քլաճա	Կաթն ուլիկ	Փու. իթ. օ	307,243	17,000,000
Խալիս թ.	Վիլհելմ ուր Էմմ. Փ.	Կաթն ուլիկ	Հու. սի	286,682	33,000,000



Լեւոնի կնքթ. Ի.	Սոհան Բ.	Կաթ ոլիկ	1,200	159	10,000
Լեւոնի կնքթ. Գ.	Կիւպրոն	Քողոքաւան	5,000	85,000	2,000,000
Լեւ. քահանայ. Ի.	Աւարիք	Կաթ. և Քող.	21,000	2,586	237,000
Կու. օթեւան. Գ.	Քաղաք	Կաթ ոլիկ	75,000	125,100	1,500,000
Հայթի Ի. Հ.	Փանակ	Կաթ ոլիկ	65,000	28,676	1,500,000
Հոյանտա Բ.	Վիլնէկլիշիա	Քողոքաւան	210,000	33,000	5,500,000
Հոնտուրաւ Հ.	Սիւքա	Կաթ ոլիկ	10,000	119,820	590,000
Ճարան Կ.	Մուճոճթթ	Պրտապաւան	1,500,000	417,422	46,500,000
Մարոք Կ.	Ապա Ի. Լ. Ա. Ղլիզ	Իսլամ	50,000	489,240	8,000,000
Մեքսիկոյ Հ.	Տիազ	Կաթ ոլիկ	350,000	1,987,201	13,500,000
Մից. Ննգ. ք. Հ.	Ռու. Ղլիզի	Քողոքաւան	300,000	9,383,029	77,000,000
Մանուգ. Ի.	Ալգիքթ	Կաթ ոլիկ	3,800	22	15,200
Յունաստան Բ.	Նարկիս Ա.	Յունաստան	130,090	64,679	2,500,000
Նիքարաղ. Հ.	Ջէլացա	Կաթ ոլիկ	30,000	123,950	500,000
Նորվեկիա Բ.	Հազն Կ.	Քողոքաւան	230,000	321,477	2,250,000
Շուէա Բ.	Օսթար Բ.	Քողոքաւան	305,000	450,574	5,250,000
Ս. քու. կու. էյ. Հ.	Պարէյ	Կաթ ոլիկ	260,000	178,700	960,000
Չիլի Հ.	Քիէօքօ	Կաթ ոլիկ	150,000	776,000	3,000,000
Չին Կ.	Քու. անկ-Սու.	Պրտ. և Կամի.	1,000,000	11,081,000	447,000,000
Պարսկաստ. Կ.	Մու. համէկա Ալի	Իսլամ	250,000	1,645,000	9,000,000
Պելճիա Բ.	Լէքսլա Բ.	Կաթ ոլիկ	570,000	29,456	7,000,000
Պոլիթա Հ.	Քանտօ	Կաթ ոլիկ	63,000	1,334,200	2,000,000
Պրագլիթա Հ.	Քրանչ. ակ՝ Քոլա	Կաթ ոլիկ	330,000	8,361,350	15,000,000
Ռուճանիա Բ.	Կարոլ Ա.	Պրտ. քիէ	290,000	131,020	6,000,000
Ռու. սիա Կ.	Նիքոլա Բ.	Յունաստան	1,270,000	22,429,998	130,000,000
Սալվատոր Հ.	Սուդալան	Կաթ ոլիկ	50,000	21,070	920,000

Սերպիս Թ.	Բեթել	Յունացական	Պելլիս	48,303	2,500,000
Սիամ կ.	Շուլալանի բուն	Պուտայական	Պանքոք	633,000	6,333,000
Սոմալիս Թ.	Ալքոնո Փ.Գ.	Կաթոլիկ	Մարիս	720,752	19,200,000
Վենեզուելա չ.	Գամպո	Կաթոլիկ	Գարգաս	1,027,030	2,500,000
Տանիմար-քաթ.	Փրեանդիք Ը.	Բողոքական	Գոթենհակ	39,780	2,500,000
Տաիվիգանա չ.	Մորոկո	Կաթոլիկ	Սան Տաիվիգո	48,578	505,000
Օման կ.	Աճիկա Սաչիս	Իսլամ	Մաչկաթ	194,200	1,000,000
Փրանսա չ.	Փալեա.	Կաթոլիկ	Քարիզ	536,408	30,000,000

ԾԱՆ. — Թ. = Թագաւորութիւն: չ. = Հանրապետութիւն: Կ. = Կայսրութիւն: Ի. = Իշխանութիւն: Յն. = Յունագաւան: Կաթ. = Կաթոլիկ: Բող. = Բողոքական: Պուտ. = Պուտայական: Կաթի. = Կաթոլիկ: չ. = չեանկապ:

## 2. Դ Ր Ա Մ Ն Ե Ր

Թուրքիա*	Լիբիա	100 Ո. Դ.	Ս. Դ.	Ֆր. Ս.
Անգղիա	Սթեյլին	400	—	22 72
Աթանիթին	Բէզո	440	—	25 22
Աւստրիա	Գուրան	9	68	2 20
Բելգիա	Սոլ	4	60	1 5
Բարթուկալ	Տէոթան	21	78	4 95
		2	20	0 50

Ո. Գ.	Ֆր.	Ս.
4	4	40
5	4	40
6	1	00
111	25	75
4	4	40
40	2	50
9	2	20
41	2	39
22	5	22
22	5	50
4	4	40
6	1	00
8	4	31
6	1	00
32	7	86
4	0	40
4	1	40
12	2	50

100 Սանթիմիտ  
 100 Բֆէննիկ  
 100 Օրէ  
 100 Ռ. Բ.  
 100 Սանթիմիտ  
 16 Աննա  
 100 Սանթիմիտ  
 100 Սէն  
 100 Սանթիմիտ  
 100 Սէնթիմիտ  
 100 Լէքիմ  
 100 Օրէ  
 100 Սանթիմիտ  
 100 Օրէ  
 1000 Քաշ  
 20 Շաշի  
 100 Սանթիմիտ  
 100 Բայո

Ֆրանք  
 Մարք  
 Քուրոն  
 Լիբրա  
 Լիբրա  
 Ռուբլի  
 Ֆլորին  
 Եէն  
 Բէզո  
 Տոլար  
 Տրախսի  
 Քուրոն  
 Բէզո  
 Քուրոն  
 ԹատէԼ  
 Աբան  
 Ֆրանք  
 Միլլայո

Գաղիա  
 Գերմանիա  
 Գանիա  
 Եգիպտոս  
 Իտալիա  
 Հնդկաստան  
 Հոլանդա  
 Ճաբոն  
 Մեքսիկոյ  
 Միաց. Նահանգք  
 Յունաստան  
 Նորվեգիա  
 Շիլի  
 Շուէա  
 Չին  
 Պարսկաստան  
 ՊէՆՏիքա  
 ՊրազիԼ

Պաւլկարիա	Լէլլա	100 Սանթիմ	Ռ. Դ. 4 40	Տր. 1	Ս. —
Ռուսանիա	Լէի	100 Սանթիմ	4 40	1	—
Ռուսիա	Ռուսլլ	100 Քարէք	11 74	2	67
Սերպիա	Տինար	100 Բարա	4 40	1	—
Սլոանիա	Բէլլէթա	100 Սանթիմ	4 40	1	—
Քուսա	Բէզո	100 Սանթիմ	24 78	4	95

ՄԱՆՔ — Ռ. Դ. = Ոսկի Գահեղանի Տր. = Տրանք Ս. = Սանթիմ:

Օսմ. օսա	1
	6
	44
	180
	495

3. Կ Շ Ի Ռ Ն Ե Ր

400 Տրամ	4280
1 Պատման	7692
1 Քանթար	56,450
1 Հին Ձէքի	230,818
1 Նոր Ձէքի	200,000

Կրամ

4. Ս Ն Ո Ւ Ն Դ Ն Ե Ր

Կը մարտուի	Ժամ	Րոպէ
Հաց, պանիր	3	30
Կաթ	2	15
Հում հաւկիթ	1	30
Խաշած հաւկիթ	3	30
Ոչխարի, եղի միս	3	—
Խոզի միս, երշիկ	3	20
Կարագ	3	30
Սագ, հնդկահաւ	2	30
Ձուկ	2	—
Բրինձ	1	—
Չոր լուբիա	3	45
Բաթաթէս	3	30
Կաղամբ, շոգամ	4	20
Խնձոր, տանձ	2	—
Կարկանդակներ	3	—

ՕՐԱՑՈՅՑ ԱՆԱՄՆՈՑ

Ձին կը ծնի 340 օրէն. հազուադէպ է 330 կամ 420 օր: Էշը՝ քիչ մը ուշ ձիէն: Կովը՝ 286 օրէն. հազուադէպ է 240 կամ 320 օր: Ոչխարը, այծը՝ 454 օրէն. հազուադէպ է 440 կամ 460 օր: Խոզը՝ 420 օրէն. հազուադէպ է 440 կամ 430 օր: Շունը՝ 63-65 օրէն: Կատուն՝ 56-60 օրէն: Հաւը 19-24 օրէն ձագ կը հանէ: Հնդկահաւը՝ 26-29 օրէն: Սագը՝ 28-33 օրէն: Բագը՝ 28-32 օրէն: Աղաւնին՝ 17-19 օրէն:

## Չ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ք. Շ. — Դ, և ա. Ժ Ե. 2 համարին մէջ յիշուած պիտին բուժման համար կը յանձնարարենք կարգալ և կէտ առ կէտ գործադրել Աշնան Տերեւի հրահանգները և յանձնուիլ ճարտար բժիշկի մը, որուն համար սչ թէ գրամը, այլ իրեն գիմնդին ապաքինումը գրլխաւոր խնդիր է:

Շ Ա Հ Է. — Աչքի տեսողութիւնը զօրացնելու համար պէտք է պառկելէ առաջ պաղջրով թեթեւ մը թրջել աչքերը: Ասով արիւնին աչքերու մէջ — հաւաքուիլը կ'արգիլուի, որ է գլխաւոր պատճառ անոնց բարբոթման: Թրը քանի մը անգամ, մանաւանդ, աչքերդ մասնաւոր կերպով յոգնեցնելէ ետեւ, եթէ սոյն պարզ գործողութիւնը քնեա, վստահ աւելի օգուտ պիտի տեսնես:

Մ Ե Ր Ո Ւ Շ Ե. — Ընկոյզի տեսակ պտուղները սքանչելի սնունդ կը պարունակեն: Այս ծանօթ է: Սակայն բժիշկները հիմա կը հաս-



տասեան թէ անոնք տեսակ մը աղ կը պարու-  
նակեն, որով շնչերակներուն ջիզերը իրենց  
առաձգականու թ իւնը կը պահեն: Ասիկա ձե-  
րերուն համար կարեւոր է, քանզի անոնց  
շնչերակները կը պնդանան: Անկողը գծու ա-  
րամարսու թ իւն առաջ չրերեր, այլ լու չծամ-  
ու ին է անոր պատճառը: Աղէ կ ձեծուած ըն-  
կողը սքանչելի սնունդ է ախորժակէ դադ-  
րած հիւանդներուն համար:



**ՊԱՄԵՐ.**— Ծերերը ձմրան մէջ արեւի  
ճառագայթներուն ազդեցութեան տակ գըտ-  
նուող սենեակներու մէջ բնակելու են: Արեւը  
և չափաւոր տաքութիւնը յոյժ կազդուրիչ են  
ձերերուն համար մանաւանդ ձմրան մէջ:



**ՊԱՐՅՉ.**— Զմեռը ձերերուն համար մահ-  
ուան եղանակ է: Ինչո՞ւ: Ծերացած մարմինը  
յայտնի է որ նուազ ջերմութիւն կ'արտադրէ  
քան դեռատիներունը: Ծեր մարդոց արեան  
շրջանը կանոնաւոր և զօրաւոր չէ: Աւտի ա-  
նոնց մարմը և անդամները շատ անգամ պաղ  
են: Հետեւաբար այն կենարար ջերմութիւնը  
պահելու են մանաւանդ ձերերը առողջապա-  
հական օրէնքներու համեմատ ապրելով: Մենք

հոս չենք կրնար աւելին ըսել: Գիտել բժիշկի:



ՕՐ. Ս. — Քանի մը ամիսէն պիտի ամուսնանաս, և ամանին անտեսութեանէ սչինչ գիտես: Խրատ կ'ուզես Շատ ուշ է. նախ մայրդ և ապա յաճախած վարժարանդ է յանցաւոր որ շատ մը աւելորդութիւններու մէջ կարելւորը և կենսականը անտես ըրած է: Ա՛լ զոքանչդ պակասը պիտի լեցնէ: Պէտք է համակերպիս ատոր: —

ՏԱՆՏԻԿԻՆ. — Ձէժը կզուած է, կը հոտի: Շուտով ամուսին փոշի խառնէ անոր հետ. գարշահատութիւնը կ'անհետանայ: Հարկաւ ձէժը քամոցէ անցնել պէտք է:



ԱՅՊԵՂՈՐԾ. — Տակառ մը գինիդ մղտանի (ֆիշֆիշկեմեմ) է: Ածուխի փոշի, և սչ ուրիշ բան, խառնէ գինիին հետ որ իր բուն համը և գոյնը կը վերստանայ:



ՍՐԵՈՒՀԻ. — Անժափանց շիշի մը մէջ լեցուր գաղջ քոյախ և ճերմակ աւազ (արեմա), ցնցէ զայն: Յետոյ գաղջ ջրով լուս Շիշը մաքուր և յատակ կ'ըլլայ:

**ԴԵՐԶԱԿԱՌԷԻ** — Կարի մեքենային կտոր-  
ները քակէ և դիր եռացող սօսայի ջուրի  
մէջ: Շփէ զանոնք վրձինով: Ազատա ջուրին  
տեղ մտքուր ջուր լեցուր: Յետոյ մեքենային  
խրաքանչիւր մասը տաք վառարանի մը քով  
չորցնելէ ետքը նորէն իրենց տեղերը զեակողէ,  
իւղէ և գործէ:

—

**ՀՐԱՆՑ.** — Ահա քեզի պարզ օգտաչափ մը:  
Պատին գամ մը զարկ: Վերձան մը կապէ գա-  
մէն: Ասոր ծայրը փոքր փունջ մը փետուր  
կապէ: Փունջին հասած տեղը պատին վրայ  
հասա դիծ մը քաշէ մատիտով: Անձրեւի ա-  
տեն փունջը գիծէն վար կ'երկարի, իսկ պայ-  
ծառ օդի տակն դիծէն վեր կ'ելլէ փունջը:  
Այս օգտաչափը 6-12 ժամ առաջ կը գուշակէ  
օդին վիճակը:

—

**ՆԱԻՍԱՐՅԹ.** — Սոխին հիւթը քսէ թղթի  
կտորի մը վրայ, որ մեատողի վրայ փակցնել  
կ'ուղեա: Մեատողը նախ լուա սօսայի ջրով և  
ապա թուղթը անոր վրայ փակցուր: Անհնար  
է որ զատուի: Ապա թիւ կամ գիր գրէ թուղ-  
թին վրայ:

**ՄՏԱՀՈԳ ՄԱՅՐ.** — Այո՛, մանուկներուն  
ակուսյ հանած ատեն մայրերուն բնական է  
մտահոգ ըլլալ: Պատճառը ակուսյին միտին  
ջերմութիւնն է: Արիւնը հոն հաւաքուած է:  
Պէտք է ուրիշ ուղղութիւն տալ արիւնին:  
Ուստի երախտային սրունքները փաթթէ պաղ  
ջուրի մէջ թաթխուած և լաւ քամուած լա-  
թերով: Ջերմութիւնը կ'անհետանայ, քանզի  
արիւնը դէպ և սրունքները կ'իջնէ:

—

**ՆԵՐՄԷԱ.** — Պաղը ստքերուն արեան շր-  
ջանի անկանոնութենէն և խափանումէն ա-  
ռաջ կու գայ սովորաբար Արդէն ստքերը  
շատ հեռի են սրտէն — ջրհանէն: Աւստի ա-  
րիւնը ամենէն ազար շրջանը հոն է որ կ'ընէ:  
Երբ դրսէն ալ պատճառներ ասոր միանան,  
ա՛լ եթէ կրնաս ստքերդ տաք պահել ջանա:  
Նեղ կօշիկները պատճառ են ստքերու պա-  
ղութեան: Ուստի, մանաւանդ, ձմեռը լայն և  
հանգիստ կօշիկներ հագնելու ետ Աւստի,  
իրիկուն ալ սովորութիւն ըրէ ստքերդ թանձր  
կոշա խափշոշով շփել:

—

**ՀՈՂԱԳՈՐԾ.** — Արտերուդ հողերը շատ  
կաւճա են: Մի՛ յուսահատիր: Մէկ արտա-

վար հողին հետ 250 քաշ չմարած կիր խառնէ: 4-5 տարի կը դիմանայ այս:

—

**ՄԵԻՏԱՍՍԵՐԴ.** — Դրամօժիտ փնտռելը կը նուստացնէ քեզ: Աւելի լաւ է որ կենդանաօրեայ աշխատութիւնով իր օժիտը ձեռք բերէ: քան թէ ամուսնանալէ մէկ երկու տարի վերջ սկսի իր բերած դրամօժիտը վասնել և սպասել իր անդործութեամբ, ծուլութեամբ ու անպէտ ծախքերով:

—

**ՏԵՍՈՒՉ.** — Դպրոցին արտաքննողներուն դարձահաստութիւնը դիւրին է անհետացնել: 250 կրամ՝ սիւլֆար սը զեկկը հալեցուր տար ջրով լեցուն փայտէ գոյլի մը մէջ: Թափէ դարձահաստ տեղերը և պատերը սրսկէ անով:

—

**ՕՐ. ՆՈՒՆԻՎ.** — Դուն ինքզ պատրաստէ տկուայի փոշին: 8 արամ՝ ամուսի բարակ փոշին խառնէ 8 արամ՝ բարակ շաքարի հետ: Կաթիլ մըն ալ գարեկնի ղոռնը դիր մէջը: Բոլորը լաւ մը խառնէ: Լեցուր տուփի մը մէջ և վրձինով շփէ տկուաներդ:

—

**ԽՈՂԱՐԱՐ.** — Հաւկիթը քանի մը շաքարով

կրնայ պահուիլ պաղ ջուրի մէջ: Հարկաւ ամէն օր ջուրը փոխելու է: Նոյնպէս՝ կարագը:

**ՀԻՒԱՆԳՈՒՊԱՀՈՒՀԻ.** — Ձկան իւզը դրժուար է խմցնել մանաւանդ տղայոց: Սակայն երբ շիշին մէջ քանի մը կաթիլ նաւեկի կամ անխառնի իւղ լեցնես և լաւ մը ցնցելէ ետքը ասա, ախորժեղի կու գայ խմողին:

**ՍՈՎՐԱՏ.** — Գլժասիրտ ըլլալ շատերը սխալ կը հասկնան և ատր մը հաց տալ, ահա ճշմարիտ գլժասրտութիւնը, քան հազարումէկ օրհնութիւն շնայլել, որ օգուտ չունին: Նախ կշտացնել և ապա ուզողութեան բերել:

**ՏԱՃԱՏ** — Միշտ գործ փոխելը նման է սուէնիկի մը տեղը շարունակ փոխելուն: Բնապիտի չաճի և ծառ ըլլայ այն: Երեւակայութեամբ շարժողը նման է անոր որ վառեակները կը համրէ դեռ հաւը չաճած իր հաւկիթները և չի սխաժ զմաննք: Այնպիսին միշտ խեղճ կը մնայ: Ունեցածն ալ վրայ կու տայ նման այն շուէնին, որ գետակի մը քովէն անցած ատեն բերանը բռնած միտին կտորին շուքը տեսնելով ջուրին մէջ, ձգեց միտը և անոր ետեւէն վազեց:



**ՄԻՄՈՆ.** — Ասթոր միլիոնատէրը բնիկ  
Քերմանացի էր: Ամերիկա գաղթելով մուշ-  
տակի առեւտրով զբաղեցաւ և անբաւ հա-  
րըստութիւն գիղեց: Անտէրպիլտ նաւաւոր  
մըն էր և շոգենաւային գիծ մը հաստատելով  
միլիոններու տիրացաւ: Ամերիկացիք զանիկա  
«ժեր, անգութ ծովահէն» կը կոչեն:

—

**ՋԵՆՈՅ.** — Քեզ նման 70 գարուն իր  
ետեւը ձգող մէկը ծով մտնելու համար հախ  
պարտի իր սիրտը քննել տայ բժիշկին, որ  
եթէ զայն կատարեալ առողջ գտնէ, պիտի  
արածնէ ծովու լոգանքը:

—

**ՏԻՎ. ԶԱՐՈՒՀԻ.** — Մուկերը փախցնելու  
համար մէկը կը յանձնարարէ անոնց պյցելած  
վայրերը պեկզիկի մէջ թաթխուած բամբակ  
գնել: Սակայն կարծեմ թէ պահ մը կը հե-  
ռանան մուկերը և երբ պեկզիկի հոտը անց-  
նի, նորէն պիտի պատուեն ձեզ իրենց պյցե-  
լութեամբ: Մուկերը սատկեցնելու համար  
ուրիշ մը կը յանձնարարէ լեզի նուշը լաւ մը  
ծեծել, այլուրի ու շաքարի հետ խառնել և  
թողուլ որ անոնք ուտեն: Այս ալ կասկա-  
ծելի կը թուի: Փորձեցէք: Ամենէն ստոյգ

կերպն է թակարդով ըսնել մուկերը և սպաննել:



**ԳՊՐՈՑԱԿԱՆ.** — Գրիչին ծայրը, աւրուեցաւ ըսելով, չեն նեւեր, եթէ աւրուած խակ են: Մաքրէ մեղանը, և զմեղի կամ խարտոցի միջոցով շիակէ ծայրը, կամ փաթ աթէսի մէջ միւէ գրիչին ծայրը և պիտի տեսնես որ քու չհաւնած գրիչդ լաւ գործ կը տեսնէ:



**ՀՆՏԱՔՐՔԻՐ.** — Զբօսաչրջիկները իրենց գացած տեղերը ահագին գուժորներ կը ձգեն: 1905ին Իտալիա այցելողները 300,000,000 Ֆր. ձգեցին:



**ՄՆՏԱՔՍԱՎԱՃԱՌ.** — Զուլցերիա առաջինն է բոլոր մետաքս արտածող երկիրներու մէջ: Տարին 80,000,000 Ֆր.ի մետաքս կ'արտածէ:



**ԿՆՆԴԱՆԱՐԱՆ.** — Կը սխալիք: Բոլոր առասուները չեն քնանար: Զուկեր կան, որ բնու չեն քնանար: Ոմանք միայն քանի մը վայրկեան կը քնանան: Տեսակ մը ճանճ կայ որ քունն ի՛նչ է չգիտեր: Նոյնպէս 3 5 տեսակ օձեր կան, որ երբեք չեն քնանար:

ՍԱՀԱԿ. — Ամէն տեղ կանոնաւոր կերպով  
անձրեւ չգար: Գայով ձիւնին, յայտնի է որ  
շատ տեղեր անոր ի՛նչ ըլլալը չեն գիտեր:  
Սակայն երկրիս կլիմայական փոփոխութիւն  
կրելը յայտնի է: Աւստրալիոյ Մելբորն քա-  
ղաքը 20 տարիէ ի վեր ձիւն չէր տեսած:  
1906ին հոն ալ ձիւն տեղաց:



ՌԵՏԱՆՈՐ. — Տարին 30-40,000 Ռուսեր  
կ'այցելեն Ար. երկիրը և իրենց ուխտը կը կա-  
տարեն Ար. Գերեզմանին վրայ Զատիկի ա-  
ւաւում:



ԳԱՐՆԳԻՆ. — Ամերիկայի անմահ նախա-  
գահին, Լինքոլնի, ազատած նախկին խափշիկ  
գերիներուն վրայ շատ սխալ գաղափար ու-  
նիս: 300 հասար գիրք հրատարակած են ա-  
նոնք: Ունին 500 բժիշկներ, Գրամատուէններ,  
գործարաններ ունին: 400 թերթ կը հրատա-  
րակեն և Նիւ-Կորքի մէջ ունին մեծ գրամա-  
տէրներ, բոլորն ալ սեւամորթ, որոնք նախկին  
գերի և սարսէկ խափշիկներու հարազատ զա-  
ւակներն են:



ԽՄԲԱԳԻՐ. — Ճարտնցիք վէպի սիրահար

չեն: Հոն փնտոււած գիրքերուն 21<sup>0</sup>/<sub>0</sub> գրտա-  
կան է, 20ը՝ գրական և լեզուաբանական, 18ը՝  
պատմական և աշխարհագրական և 1ը՝ կրօ-  
նագիտական:



**ՉՍԿԵՐԻԶ.** — Մարդարիտն ալ կը հիւան-  
դանայ և իր բնակավայրը, ծովը, կը բուժէ  
անոր հիւանդութիւնը: Աւսարիոյ հանգուց-  
եալ կայսրուհին անտաւ որ իր մարդարիտ-  
ները հիւանդացած են և պիտի աւրուին, մեռ-  
նին: Ուստի Աւսարիական ծովը իջեցուցին  
զանոնք վանդակով և 30 տարիէն պիտի կա-  
տարուի անոնց ապաքինումը:



**ՄՈՄԱՊԱՀ.** — Կը սխալիս, ոչ թէ մարդ-  
այլ անասուններն են որ կրնան տոկալ անօ-  
թութեան: Արծիւը 30 և «քօնտօր» արծիւը  
40 օր կրնայ տոկալ անօթութեան:



**ՕՐ. ԵՒՆԵՅԻ:** — Միայն Քորէայիներն են  
կարծեմ որ իրենց մաղերը չեն կտրեր, որպէս զի  
իրենց նախնիքները չանպատուին: Գլուխէն  
ինկած իւրաքանչիւր մաղը և եղունգի կտոր-  
ները կը պահեն՝ ամէն տուն պատրաստ կեցած  
դագաղի մը մէջ:

ԱՐՋԵՍՏԱՒՈՐ — Խայծ զանով (գարբան) զբազոզներ. ամենէն երկայնակեացներն են: Միջին հաշուով, 86 տարեկան կ'ըլլան: Մահը 80/0 նուազ է անոնց մէջ քան ուրիշ արհեստաւորներու մէջ: Խայծ զանի գոլորշին և հոտը շատ զօրացուցիչ է:

Վ.ԵՐ. Ս. Յ. — Ամենէն վիթխարի Ս. Գիրքը Սթոքհոլմի արքայական գրատան մէջ է: Մագաղաթի վրայ գրուած է, որուն իւրաքանչիւրը 89 սանթիմ' երկայն և 50 սանթիմ' լայն է: 160 եզի կաշի գործածուած է սոյն մագաղաթներուն համար: Կտիքը 10 սանթիմ' հաստ տախտակով շինուած է:

ՕՐ. ԳՈՋԱՐ. — Դո՛ւն պատրաստէ մազի ջուրը, որուն պէտք ունիտ: Առ 100 կրամ կլիստերին, 20 կրամ վարդի ջուր և 10 կաթիլ վարդի իւղ: Դիր զանոնք շիշի մը մէջ, ցնցէ զայն և պահէ:

ՐՆԱԳԷՑ. — Կրակին, լոյսին և արեգական ճառագայթներուն մէջ անկարելի է որ միքրոսոյ ըլլայ, քանի որ լոյսը և ջերմութիւնը իրր միքրոսոսպան ճանչցուած են: Կամ եթէ

սխալ է մեր ըմբռնումը, հաճեցէք առաջիկայ  
տարուան Օրացոյցով — կամ՝ առանց սպա-  
սելու՝ հիմն լրագրական յօդուածով մը —  
հակառակը ապացուցանել:

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ. — Սբ. Երրորդութեան  
վարդապետութիւնը բնաւ անհասկնալի չէ  
կարծեմ: Դուք Յակոբ կը կոչուիք: Ձեր ետը,  
էութիւնը, այդ անուան մէջ ամփոփուած է:  
Երբ քարոզչի պաշտօն վարէք, Վերապահուելի  
Յակոբ կը կոչեն ձեզ, երբ դասախօսի պաշտօն  
վարէք Բրոքեպոն Յակոբ կը կոչուիք, երբ  
բժշկութեան պարապիք, Տոքթօն Յակոբ կը  
կոչեն ձեզ: Ի քաց քողով ԲՈՒՈՐ պաշտօն-  
ները, ՅԱԿՈՒԲ էք դուք և ոչ ուրիշ բան: Նոյնը  
իմա՛ նաև Հօր, Որդւոյ և Սբ. Հոգւոյն նկատ-  
մամբ, ոչ թէ երեք այլ ՄԻ Աստուած, ինչ-  
պէս ոչ թէ երեք այլ ՄԻ Յակոբ էք դուք:

ՏԻՐԱՆ. — Ո՛չ, ո՛չ, մենք ո և է յարան-  
ուանութեան չենք պատկանիր: Մենք կը կոչ-  
ուինք Հայ. Աւետարանական Եկեղեցի, Հայ.  
Աւետ. Ժողովուրդ: Գոնէ մեր հայրերը այս-  
պէս կազմակերպեցին առաջին Հայ. Աւետ.  
Եկեղեցին: Ուստի այնպէս ալ պէտք է մնայ  
ցովիշտ:



ՊԱՏ. ՅԱՎՈՌ. — Իրաւունք ունիք, այսօր  
Հայ. Աւետ. եկեղեցական մը հազարումէկ  
խօսքերով և սպացոյցներով հաստատելու է  
իր եկեղեցական մը բլլալը մինչ միւս Քրիս-  
տոնեայ եկեղեցականները մէկ նայուածքով  
կը ճանչցուին: Ինչո՞ւ մեր եկեղեցականներն  
ալ միօրինակ տարազ չկրին: Հայ եկեղեցա-  
կաններու տարազը ինչո՞ւ չորդեգրենք: Տար-  
բերութիւն մը ընելու համար բաւական է  
փակեղին առջիւի կողմը ոսկեզօծ փոքրիկ խաչ  
մը զեւեղել: Պաշտամանց աստի ինչո՞ւ չարդ-  
վերարկու մը չկրեն Հայ. Աւետ. եկեղեցա-  
կանները, ինչպէս Արեւմտեան Աւետ. եկեղե-  
ցականները սովոր են ընել:

ՌԻՍԱՆՈՂ. — Անգղիերէն լեզուն սորվելու  
համար պարապ աեղը մի փնտեր ուրիշ գա-  
սագիրք: ՅՈսկեղէն Բանալի Անգղ. Լեզու ին  
արդէն Գ. տպագրութեան արժանացած է:  
Այս տպացոյց մըն է թէ ինչ մեծ ընդունե-  
լութիւն գտած է բոյսր վարժարաններու մէջ:  
Սոյն գիրք վաւերացուած է նաեւ Կեդր. Պատ.  
Ուսումն. Խորհուրդէն: Կարգալ, գրել, շարա-  
գրել և խօսիլ մէկ և միայն մէկ գասագիրք  
է որ կ'ուսուցանէ: Սա է ՅՈսկեղէն Բանալի  
Անգղ. լեզու ին

ԽՈՌՄԲ ՄԸ ԲԱՐԵՆԱԳՄՆԵՐ. — Մեր որբա-  
խնամ գործին աջակցել, մտանակցել, մեզի  
աշխատակից, գործակից ըլլալ՝ շատ գիւրին  
է: Բաւ է որ կաւնք ըլլայ: ՕՐԱՅՈՅՅերն և մեր  
ուրիշ հրատարակութիւնները ձեր շրջանին  
մէջ ծաւալել, տարածել և ընդհանրացնել:  
Այս շատ գիւրին է: Նաեւ գիմել մեզ և  
ստանալ ՔԱՐՏեր, որոնց միջոցով ձեր ծա-  
նօթներէն միայն 10 անձեր համոզէք որ ձեզ  
յանձնեն իրենց տարեկան նուէրները, զորոնք  
արձանագրելով Քարտին վրայ, գոյացած հա-  
տոյթը Մանսա-Բօսքի միջոցով մեզի կրնաք  
ղրկել: Ար յուսանք որ շատեր պիտի փափա-  
քին այս կերպերէն մին կամ միւսը ընտրել և  
գիւրացնել մեր ՅԱ տարիէ ի վեր ստանձնած  
և յառաջ վարած որբախնամ սոյն վեհ ձեռ-  
նարկը: Հարկ չկայ ըսել որ բարեգործու-  
թիւնը իր մէջ ունի քաղցր փոխարինութիւն  
մը, թէև Տէրն մեր Յիսուս Քրիստոս խոստա-  
ցած է ճոխ վարձատրութիւն:



# Մ Ե Ր Խ Ո Ղ Ա Ն Ո Ց Ը



## ՓԻԼԱՎՆՍՐ

### 1. ՊԱՐՍԿԱԿԱՆ ՓԻԼԱՎ

Երինձը լուս, մաքրէ, քամէ և սանին մէջ  
 դիր, առանց երեսը տափակցնելու: Աէջտեղը  
 փայտէ գգալ մը խոթէ, և սանը չափաւոր  
 կրակի վրայ դիր: Միտի կամ՝ հաւու կամ, եթէ  
 չկայ, պարզ ջուրը եփ հանելով սանին մէկ  
 քովէն լեցուր՝ առանց բրինձը տակն ու վրայ  
 բնելու, մինչեւ որ փայտէ գգալը մէկ քովէն  
 ծախ և ջուրին չափը:

Ուրիշ չափ մըն ալ կայ:

Մէկ շերեփ (ֆեփէ) բրինձի՝ երկու շե-  
 րեփ ջուր դիր: Միայն թէ բրինձի տեսակին  
 համեմատ ջուրին չափն ալ քիչ շատ պէտք  
 է աւելցնել կամ՝ պակսեցնել: Հետեւաբար  
 փխրալ եփողը պէտք է փորձով բրինձին ո՛ր-  
 չափ ջուր վերցնելը հասկնայ: Յետոյ սանին  
 բերանը աղէկ մը դոցէ և թող տուր որ եփի,  
 մինչեւ որ <sup>ք</sup>ջուրը քաշելու մօտենալով փխրա-

վին վրայ սկսի ծակախրքներ դոյանալ: Այն ա-  
տեն սանը մտղմտղ կրակի վրայ դիր և ջուրը  
հան քաշել տուր: Այդ միջոցին իւր սյրէ և  
տաք տաք բրինձին վրայ անցուր: Վրան  
քթ անէ մաքուր լաթ մը ծածկէ և սանը փակէ  
իր կափարիչով: Տ վայրկեանէն դոյալին կո-  
թով շուրջէն դէպ ի կեդրոնը Յ անգամ խառ-  
նէ: Յետոյ սանը նորէն գոցէ և 3-4 վայրկեան  
եաքը, այս անգամ փայտէ դոյալով, աղէկ մը  
խառնէ և մտղ դոյալով (սեալիկիւր գաշրի)  
հատիկ հատիկ բրէ:

## 2. ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՓԻԼԱՎ:

Գաւնուկին թոքերը աղէկ մը մանրէ և  
անանց երեքին մէկ ծանրութեամբ բրինձ լուս  
Յետոյ քիչ մը մտղի չափ բարակ սոխ, կտակմ  
(րերե օրու), աղ և սղպեղ իրարու խառնէ ու  
գաւնուկին շապիկը բանալով մէջը լեցուր  
քիչ մը իւղ, քիչ մըն ալ ջուր աւելցնելով:  
Չորս կողմէն ժողուէ, բարակ գերձանով մը  
կապէ և փուսք դրկէ:

## 3. ԹՈՒՋՈՒՆՈՎ, ՓԻԼԱՎ,

Պարզ ջուրով յիշալ եփէ առանց իւղի  
Փոքրիկ թուչունները իւղով տապկէ: Քիչ մը

լոյկիկի (soulapka) ջուրով և խղով սանին մէջ  
20 վայրկեանի շափ պճլատացուր: Յետոյ թա-  
ցանը (սաշցա) քամէ և թռչունները փխշավին  
մէջ խառնէ: Անդին թացանը եփէ մինչեւ որ  
կէս մնայ, և փխշավին վրայ անցուր:

## Տ Ո Ւ Մ Ա Ն Ե Ր

### 1. ՍԼԱԿԱՆՋԻ (Միտիա) ՏՈՒՄԱ

Կէսը խեփորով (գապուշ), կէսը սահուած  
200 հատ սլականջ առ: Խեփորներուն վրան  
մտքրէ, լուս և առանց իրարմէ զտակու-  
բաց: Յետոյ մէջի մտքը կտրէ և վազած ջուրն  
ալ ամանի մը մէջ ժողովէ: Ամէն մէկ խեփո-  
րով սլականջի համար մէյմէկ սոխ կտրէ կլոր  
կլոր, և ձէթին մէջ կարմրցուր մինչեւ որ  
դեղնի: 120 տրամ բրինձ և միւս 100 հատ  
սահուած, կտրտուած սլականջները մէջը դնե-  
լով մէկտեղ տապկէ: Յետոյ գինձ (ֆիշնիշ),  
պիստակ (ֆլւսք), աղ, պղպեղ, ազաաղեղ  
(ւնայսանոզ) և կտակ՝ աւելցնելով խառնէ ու  
վար առ որ պաղի: Ամէն մէկ սլականջի մէջ  
առածին շափ լեցուր այս խառնուրդէն: Յե-  
տոյ դոցէ և քով քովի սանին մէջ շարեյէ  
ետքը անոնց վրայ պնակ մը ու պնակին վրայ  
մտքուր քար մը դիր: Ապա սլականջներէն

վաղած ջուրը լեցուր վրան, մինչեւ որ սլա-  
կանջներուն վրան դոցուի: Եթէ ջուրը չբաւէ,  
պարզ ջուր պէտք է աւելցնել: Անկէ ետքը,  
սանը փակելով պէտք է եփել չափաւոր կրակի  
վրայ:

## 2. ՈՐԹԻ ՏԵՐԵԻՈՎ, ՄԻՍԷ, ՏՈՒՄՍ.

Շատ թարմ ու բարակ տերեւներ ընտ-  
րելով խաշէ: յետոյ պաղ ջուրէ անցուր զա-  
ննք: Միտին կակուղ տեղէն զառակելով ջի-  
ղերը և մորթը հանէ: Բարակ մը ծեծէ: Աղ,  
պղպեղ և միտին մէկ շորրորդին չնփ հացի  
միջուկ կամ խաշուած, ծեծուած բաժ աթէս  
և կամ բրինձ աւելցուր: Մէկ, կամ եթէ  
հարկ ըլլայ, աւելի հաւկիթով թրէ: Մէկ  
խաշոր կաղինէն քիչ մը աւելի չափով առ և  
տերեւով փաթթէ ու սանին տակ շարէ՝ տե-  
րեւին ծայրերը տակի կողմը բերելով: Յետոյ  
չափաւոր կրակի վրայ եփէ:

Ճիշդ այսպէս կ'ըլլայ նաեւ գոռմի և  
պտախնճանի տղման, միայն թէ պէտք է կան-  
խառ գոռմիին կամ պտախնճանին մէջը փորել  
և պտախնճանին միջուկը խառնել բրինձին  
հետ՝ առանց հաւկիթի:



### 3. ՈՐԹԻ ՏԵՐԵՒՈՎ, ԵՒ ԶԷԹՈՎ, ՏՈՒՄՍ.

Սոխը պէտք է շատ բարակ ու պզտիկ ջարդել և աղով ճղմել: Անոր կէսին չափ գիր ըրինձ, աղ, պղպեղ, բրինձին մէկ քառորդին չափ ալաադեղ և քիչ մըն ալ թարմ անանուխ (կանիկ) ու խառնէ: Յետոյ անկէ մէկ կաղինի չափ տերեւի մը մէջ գիր, փաթ-թէ ու քով քովի շարէ սանին մէջ միշտ տերեւին ծայրերը վար, տակն ու վրան տերեւ դնելով և աւելի վրան ալ պնակ մը ծածկէ ու քիչ կրակի վրայ եփէ:


## Փ Լ Ա Ք Ի Ն Ե Ր

### 1. ԼՈՒԹԻԱՅԻ ՓԼԱՔԻ


Լուրիան առջի իրիկու ընէ լուս և թրջէ: Հետեւեալ օրը կէս եփ ըրէ, ալաադեղը բարակ մը կտրէ և 1-2 սխառք ջարդէ: Սակպղինն ալ կտրէ ու սանի մը մէջ լեցուր: Վրան աղ, պղպեղ, ձէթ և ճղմնւած լոլիկի ջուր աւելցուր: Յետոյ պաքսիմաար ծեծելով վրան անցուր և շատ քիչ կրակի վրայ գիր մինչեւ օր եփի: Ասոր մէջ կտրելի է նաեւ սլակահնջ աւելցնել:

(Շ-բ-ն-է-լէ)

ՏԱՆՏԻԿԻՆ.



# Ա Ռ Ո Ղ Ջ Ա Կ Ա Ն



Պարսից Շահերէն մէկը արքունիքին համար բժիշկ մը կը փնտռէր: Երկրին ամենէն ճարտար համարուած բժիշկը բերին, որ Ասյսեր ներկայանալով ըսաւ.

— Ձեր Վեհափառութեան երկու հարցում ունիմ, որոնց պատասխանելէ ետքը սրշումն կը յայտնեմ:

= Ի՞նչ են այդ հարցումները, ըսաւ Ասյսրը:

— Նախ կ'ուզեմ գիտնալ թէ ե՞րբ կը ճաշէք:

= Այդ ի՞նչ զարմանալի հարցում է: Հարկաւ կը ճաշենք երբ անօթի ըլլանք: Նոյնպէս կը խմենք միայն երբ ծարաւի ըլլանք: Ուրիշ ատեն ո՛չ կ'ուտենք և ո՛չ կը խմենք:

— Շատ լաւ: Ա՛րքան կ'ուտէք երբ ճաշի նստիք:

= Սեղանէն կ'ելլենք գեռ բոլորովին չի կշտացած, պայթեալ աստիճան չլեցուած:

— Ուրեմն ես հոս գործ պիտի չունենամ, ոչ ալ ուրիշ մը, ցորչափ դուք այդ երկու

կանոններուն կը հետեւիք Պարսից և Մարաց  
օրէնքներուն նման անփոփոխ

Աին թէ աղջիկ շափազանց աշխատու-  
թեանէ պէտք է խուսափին, թէ՛ իրենց առող-  
ջութեան և թէ՛ բնդհանուրին շահուն հա-  
մարս Յիւրած աղջիկէ մը կամ՝ տկար կնոջմէ  
մը ոչինչ կարելի է սկնկալել, նոյն խկ իր  
մայրական պարտականութեան անթերի կա-  
տարումը:

Կանոնաւոր աշխատութեան հետ պտոյտ-  
ներու, մարզանքի անհրաժեշտ պէտքին ըմ-  
բանումը ու դործագրութիւնը պիտի նպաստէ  
ամէն տեսակէտով թէ՛ անոնց ֆիզիքականին  
և թէ՛ բարոյականին: ԽՕՄՆԱԿ

Չափազանց աշխատութիւնը չկրնար ա-  
ռողջ մարմին մը զեղծանել, ո՛չ ալ առողջ  
ուզեղ մը յոգնեցնել: Բայց ջղային դրութիւն  
մը որ քունով չկազդուրուիր և չզօրանար,  
խկոյն կը դառնայ, կ'ըլլայ յոսի վիճակ մը:

Գործող մարդոց շատերուն այնքան շատ  
մահանալը այս պատճառներուն կը վերագ-  
րուի: Քունէն յոփշտակուած ժամերը պէտք  
է որ իր տակոսներով իրեն վերագարձուի:

Բերնին մէջ գէշ համը, զոր կը զգայ մարդ  
երբ կ'արթննայ առաւօտուն, յաճախ իրեն  
պատճառ ունի ներկայութիւնը մանրէներու,  
որոնք կը հաւաքուին մինչ մարդ կը քնանայ:  
Երբ կ'արթննայ, շարունակական թուքը կամ  
հիւթը որ կ'ելլէ իր բերնէն, կը մտքրէ զա  
նոնք: Ակռաներուն աւելի աղէկ հոգ տանիլ  
պէտք է: Եթէ փասած տկուայ ունիս, պէտք է  
գարմանել: Ակուայի վրձին պէտք է գործածել  
աղէկ կերպով և յաճախ, մանաւանդ գի  
շերը: Ջուր խմել և ուտելիքի զգուշութիւն  
ընել միջոցներ են, որոնց պէտք է վստահիլ:  
Մարմնին մէջի մանրէներուն վրայ խօսելով,  
սակայն, պէտք է յիշել միշտ թէ անոնք կ'ա  
ծին այն մասերուն մէջ, ուր կեանքը տկար է:  
Ասիւրաբար բերնի գէշ համ կ'ունենան  
տկար անձեր, որոնք անփոյթ կը գտնուին բե  
րանը մաքուր պահելու կամ ուտեստի ընտ  
րութիւն ընելու մասին, վասն զի մանրէները  
միշտ կը գործեն հոն, ուր մարմնին հիւսկէն  
ները կարող չեն վանել զանոնք և հակա  
գործել անոնց ներգործութեան գէմ: Այս  
վերջին կարգէն եղող անձինք կ'ազատուին  
բերնի գէշ համէն, եթէ հաստատեն իրենց  
ընդհանուր առողջութիւնը:

Ընկոյղ, նուշ և ասոնց նմաններուն ճար-  
պը, շիժիկի, կաթիլիկի ձեւով ըլլալուն, մար-  
տոզական հեղուկներուն ազդեցութեամբ, հե-  
ղուկ և ծծուող նիւթի մը կը վերածուի Ըն-  
կոյղն իր մէջ պարունակած սպիտով մեծ դեր  
ունի իբրեւ սնունդ: Ընկոյղը կը փոխանորդէ  
միտին: Ընկոյղը կը պարունակէ 28 0/0 սպիտ  
(ուշադրութիւն, ընթերցող, այս 28 թիւը  
չմոռնաս): Իսկ միտերուն ամենէն ուժովն  
— եղան միտը — հազիւ 19 0/0 կը պարունակէ:  
Եւ ահա իրաւամբ ամենուն բերնին ջուրերը  
վաղցնող պիժթիքի, իւշպասքն, ևն., կը  
փոխանորդէ, և այս իրաւամբ պէտք է կոչել  
միտ բուսային:

Ընկոյղի նման, ամէն տեսակ պատուղներն  
ալ, նիհար եղան միտին չափ սպիտ կը պարու-  
նակեն և քիմիական ուրիշ նիւթեր ալ, որոնք  
իրենց բաղադրութեամբ, սննդական արժե-  
քով և օգտակարութեամբ, ամէն տեսակե-  
տով համարժէք են միտին: Կաղիններու շատը  
մեծ քանակութեամբ նշայ կը պարունակէ:  
Շատ քաղաքներու մէջ կաղինի ալիւրով հաց  
կը շինեն: Իտալացիները անով կարկանդակ  
կը պատրաստեն: Իտալիոյ հիւսիսային քա-  
ղաքներուն ժողովուրդին կերած հացին մէջ

կէս առ կէս կազինի այլուր կը գործածուի։  
Նախնի Հասկմայեցիները մեծ մասամբ կազի-  
նով կը սնանէին։ Նորվեկիոյ մէջ սովի ատեն  
խողկազին կ'ուտէին։ Բնախօսութիւնը կը  
սորվեցնէ մեզ թէ կերակուրներուն մէջի  
սպիտէն ետքը, ամենէն կարեւոր մասն է ճար-  
պը։ Աւելի գիւրին է ճարպով նշան փոխա-  
նորդել, քան թէ ճարպը՝ նշայով։

—

Երբ շատ տկարացած հիւանդի մը կաթ-  
կամ միտի ջուր կը տրուի, աղէկ է անմիջա-  
պէս ետքը 1-2 ումից անոյշ պաղ ջուր տալ,  
որպէս զի կաթը կամ միտի ջուրը կոկորդէն  
վար երթայ, վասն զի շատ անգամ՝ բերնին և  
կոկորդին մէջ կը մնան անոնք՝ իբր թէ փակ-  
չած բերնին թանձր լորձուէքին։ Շատ աղէկ է  
այսպէս ընել երբ կերակուրը յաճախ պիտի  
տրուի, վասն զի ջուրը կ'արգիլէ կերակուրին  
համին շարունակելը բերնին մէջ մինչև որ յա-  
ջորդ ճաշին ժամը գայ։ Հիւանդը այսպէս ա-  
ւելի պատարաստ կ'ըլլայ յաջորդ կերակուրին  
համար։ Տրուած կերակուրն'ը քայնքան յա-  
ճախ չեն թուիր, ինչպէս կը թուին երբ կե-  
րակուրին համը բերնին մէջ կը մնայ ճաշի  
ժամանակամիջոցին։ Եւ հիւանդը կը գժկա-



մակի ուտել, քանզի իրեն այնպէս կը թուի  
թէ շարունակ կ'ուտէ:

Հիւանդի մը ֆիզիքսպէս գոհացում արու-  
ուելու է ամէն կարելի կերպերով՝ կերակուր  
արուելէ առաջ: Առողջ անձ մը ընազդով  
կ'ընարէ լուացուելով զովանայ կերակուր  
ուտելէ առաջ, Նմանօրինակ պատրաստու-  
թիւն մը ըլլալու է հիւանդին համար ալ:  
Հիւանդապահը պէտք է որ սպունգով մեղ-  
միւ արագ արագ սրբէ հիւանդին երեսը և  
ձեռքերը, շիտակէ անկողնին ըստձերքը, կտաւ-  
ները և վերմակները: Եւ ուրիշ այնպիսի բա-  
ներ պէտք է ընէ, որ հիւանդը զովանայ և  
հանգստանայ: Յետոյ անմիջապէս կերակուրը  
արուելու է, և վտահ ենք թէ աւելի աղէկ  
ախորժակով և համով պիտի ուտէ քան երբ  
այսպէս առաջուց պատրաստութիւն չըլլայ:

Ք.

Չառամութեան հասած ծերը, արիւնա-  
սպառ վիրասորը և իր կենսական գործարան-  
ներէն մէկուն անբուժելի հիւանդութեամբ  
տառապող հիւանդը, արեան այսպիսի փո-  
փոխման մը կ'ենթարկուին որ կենսանորոգ

Թ թ ու ած ինը իրենց մէջ կը պակսի և անզգա-  
յացնող ածխածինը կը շատնայ: Այսպէս մարդ-  
օդ առնել, շնչել, զսվանալ կը ճգնի: Մորթը  
այրելու շափ կը աւաքնայ կամ քրտինքով կը  
ծածկուի: Հողեվարքի մը քով գանուողները  
կը զթան, կ'արգահաստին, կը ցաւին, վասնզի  
մահամերձին վրայ տեսնուած այդ նշանները  
սրտակեղէք են մարդու համար. կարծելով  
թէ մահամերձն ապրիլ կ'ուզէ, մահուան հետ  
կը կռուի և չկրնար յաղթել անոր. բայց ի-  
րականութեան այդպէս չէ: Երբ այդ վերս-  
յիշեալ նշաններն երեւին, ա՛լ ըսել է թէ  
գլխաւորաւ ածխածինը սկսած է իր գործին,  
կապտել զգացումը, բժացնել, չքացնել  
զգացողութեանը:

—

Երբէք չծիծաղող մարդը հիւանդատ է:  
Այնպիսին սովորեր է միայն անհաճոյ բաներ  
խորհիլ, միայն մեծ կողմերու վրայ նայիլ:  
Այնքան երկար ժամանակ սովորեր է տիրու-  
թեան որ իր երեսին մկանները պինդ, կարծր  
գիծերու շարք մը եղած են և չեն կրնար  
իրենք իրենցմէ թուլնալ:

Բոլոր ասոնք ծուռ բաներ են: Անբնական  
են: Ճշմարիտ է թէ մեզմէ շատեր բազմա-

զրազ ևն: Մեր կեանքը լեցուն է ծանր բեռերով, որոնք ամէն վայրկեան կը ճնշեն մեր վրայ և մեզի քիչ ժամանակ կը թողուն հանգչելու: Եւ, սակայն, ծանր գործը երբէք պէտք չէ որ վտարէ ծիծաղը հոգիէն: Պէտք է երջանիկ սիրտ մը կրել ամենաստատիկ յոգնութիւններու մէջ:

—

Պէտք է որ երգենք մեր գործին մէջ: Շատ աւելի աղէկ կը գործենք եթէ երաժշտութիւնը միշտ հնչէ մեր կուրծքերուն մէջ: «Տէրոջը ուրախութիւնը ձեր զօրութիւնն է» կ'ըսէ Նէեմիա ժողովուրդին, երբ կը յորգորէ զանոնք որ ուրախանան: Հոգիին ուրախութիւնը բեռերը կը թեթեւցնէ և գործերը կը գիւրացնէ:

Թերեւս հարկ է լռութիւն պահանջել ինչ ինչ հաստատութիւններու մէջ, ուր մարդիկ միասին կը գործեն. բայց այդ չէ բնական կերպը: Աշխատութեան արժէքը շատ կը բարձրանայ եթէ զուարթ երաժշտութիւնը խառնուի անոր հետ: Օրը գոնէ 20 անգամ ծիծաղիլ կը յանձնարարեն Չինացի բժիշկները առողջութեան պահպանման համար:

—

Ով որ բնութեան դէմ կը մեղանչէ, անպատճառ պիտի տուժէ: Բնութիւնը իր իրաւունքը կը պահանջէ: Երբէք աւարկութիւն, վիճարանութիւն և բացասական պատասխան չընդունիր: Առաւօտուն երբ կ'արթննաս, նախաճաշի մը պէտք ունիս: Բայց այնպիսի պարագաներու մէջ կը դանուխ որ նախաճաշը կը բացակայի: Ուստի առանց անոր կ'անցնես: Փոյթ չէ, կրնաս համբերել: Ծաշի ժամանակը կը հասնի: Բնութիւնը իր իրաւունքը, պէտքը կը զգացնէ: Կրնոյ ըլլալ որ այն ցերեկ ճաշ ալ չընես: Բայց ստամբոդ կը պահանջէ: Բնութեան իրաւունքն ու օրէնքն է այդ որ երբ մարդ անօթ ենայ՝ պէտք է ուտէ, երբ ծարաւ է՝ պէտք է խմէ: Սակայն չկայ: Անօթի ես, ծարաւ ես: Ահա կը սկսիս ընդհանուր տկարութիւն մը զգալ: Ոյժդ կը պակսի, աչքերդ կը նուաղին, գոյնդ կը դեղնի: Չարաչար կերպով պիտի տուժես, քանզի բնութեան դէմ մեղանչեցիր: Բնութիւնը խստապահանջ է: Պէտք է դահացնես զինքը, եթէ չես ուզեր փնասուիլ ֆիզիքապէս: Բնութիւնը իր իրաւունքէն, իրեն պէտք եղածէն աւելի չպահանջեր քեզմէ: Նա խիստ կը սիրէ չափաւորութիւնը: Եթէ չափէն աւելի տաս

իրեն, եթէ ուտելիքներով յղփամաս, նորէն կը պատժէ զքեզ: Գարձեալ տուժողը դուն կ'ըլլաս:

### ԿԱՆԽԱՀԱՍ ԾԵՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է պատճառը որ 30-40 տարեկան այր կամ կին կորաքամակ, զաւամած ծերունիներ եղած են իբր թէ 70-80 տարեկան եղած ըլլային: Թուենք պատճառներէն մէկ քանին.

1. Տարածամ' ծերութեան սերմերը պատանեկութեան մէջ կը ցանուին. ուշ անկողին մտնել, վատ ունակութիւններ — գիջութիւն մտնաւորացէս — (կարգա' Աշնան Տերեւները՝ գին 5 դ.՝), գրգռիչ կերակուր, սգելից ընդելիներ, չսփազանց աշխատութիւն մտաւոր և մարմնաւոր, կանուխ ամուսնութիւն — մտնաւանդ աղջիկներու — հոգեր, յուզումներ, կենսական ոյժը շուտընթացութեամբ վատնել, շարունակ պարել, գիշերներն անցնել կանանչ սեղանին առջին, թատրոնները, բազոսի տաճարին մէջ արքենալ, Ասոնք և ասանց նման կարգ մը վատ և յոռի ունակութիւններ շուտով կը սպառեն կեանքի ոյժը, կը կարծրանան և գիւրարեկ կ'ըլլան մարմինի

անօթները և երակները: Ասոնք պիտի ցամ-  
քեցնեն մարմինդ և շուտ թառամեցնեն:

2. 5-15 տարեկան աղայ մը պէտք է որ 4  
անգամ ճաշէ օրը. չորս ճաշ՝ աւելի արա-  
մաբանական եղանակով մը, որչափ անոնք  
չեն սովորարար: Շատ բնատանիքներու մէջ  
իրիկուան ճաշն է որ ամենէն առատը կ'ըլլայ:  
Ազատ հովարար, գէշ սովորութիւն: Տղայ մը  
որ կ'երթայ պառկելի՝ իր ընթրիքի վերջին պա-  
տառէն անմիջապէս յետոյ, պէտք է որ իր  
ստամոքսին մէջ ունենայ թեթեւ սնունդներ  
միայն — հաւկիթ, բանջարեղէններ և կաթե-  
ղէններ, որոնք զինք պարարացնելու յատ-  
կութիւնն ունին, առանց խանդարելու իր  
քունը:

3. Առաւօտուն զաւակներդ դպրոց կը  
զրկես հազիւ կշտացնելով զանոնք աման մը  
շոխալայով, քիչ մը ապուրով կամ շերտ մը  
հացով: Եւ կ'ուզես որ ասով, գիշերուան ան-  
սուտղութեան երկար ժամերէն յետոյ, մինչև  
կէս օր, անթուլանալի ուշադրութիւն մը բն-  
ծայեն մեզ, իրենց անարիւնութեամբ տկա-  
րացած, կծկաած և արիւնով գէշ սուտղուած  
ուղեղի բջիջները հասկնան և բմբռնեն հարիւ-  
րաւոր ձանձրալի և դժուարին բաներ: Անհե-



Թեթ է ասիկա պարզապէս: Այս մէթոսով,  
առտուրնէ մինչև կէսօր միտքը կէս-ձգտուով,  
կէս-արթնութեան մէջ միայն կ'ըլլայ: Երբ  
կէսօրուան ճաշն հասնի, ախորժակները շատ  
աստիկ կ'ըլլան: Մարտողութիւնը կը կրէ ան-  
որ հեռեւանքը, և ամբողջ օրը վտանգուած  
կը մնայ:

Եզրակացութիւն. — Առտուն գոլէ՛ճի ա-  
շակերտի մը նախաճաշը պէտք է որ բազկա-  
նայ 2 հաւկիթէ, շերտ մը հացէ՛ վրան լաւ  
տեսակ կարագ քսուած, ու, եթէ ոչ կտոր մը  
միսէ, գէթ աման մը կաթէ, որուն մէջ քիչ  
մը սուրճ խառնուած ըլլայ: Այսպէս կշտա-  
նալով, առտուն պիտի կրնայ ընծայել նուազ  
մտացիր ուղեղէ մը աւելի գործունեայ աշխա-  
տութիւն մը՝ նուազ յոգնութիւնով:

Փամը կին (Ղ. Ե.) երկարատեւ դասէ մը  
ելլելէ վերջ ու երկար սերտողութիւն մը սկսե-  
լու ատեն, գոլէ՛ճի աշակերտը պէտք է որ առ-  
նէ հանգստուէս սնունդներ ու ձմեռը խմե-  
տաք ըմպելիք մը: Կէսօրուան ճաշը պէտք է  
որ գլխաւորն ըլլայ, այս միջոցին պէտք է որ  
ուտէ միտի առատ պաշար մը, որ ճշմարտա-  
պէս նորոգիչ միակ սնունդն է:

4. Բազմաթիւ գոլէ՛ճներու մէջ պահած

են լուս թեան և ընթերցման վանական սովորու թիւնը նախաճաշի միջոցին: Ես այս բանը գէշ ու ճշմարտապէս քիչ մը բարբարոս կը գանեմ՝ այն խեղճ աղոց համար, որոնք զրօսանքներու ասեն միայն խօսելու գատապարտուած են, գրեթէ 3 ժամ՝ 24 ժամուան մէջ: Եւ գիտէ՞ք թէ ի՞նչ կ'անցնի կը գառնայ: Այս յաւելուածական գասէն կամ այս անգէպ քարոզէն մահացու կերպով ձանձրացած, աղաքը կը քաշաքոսեն իրենց կերակուրը, զայն շուտ աւարտելու և աւելի կանուխ զրօսանքի մէջ բլլալու համար, լուելեայն կը համաձայնին իրարու հետ: Պատասաները զոյգ զոյգ կը նետեն իրենց բերանը և շատ գէշ կը մտրտեն: Ասուգիւ պիտի ըսէին որ այն գրութիւնները, որոնց մէջ կը մնան Ծրանասցի ուսանողները, շունին ուրիշ նպատակ եթէ ոչ սպաննել մեր մէջ, երիտասարգութենէ սկսեալ, կետնքի ամէն ուղիղ զգացում, հանգիստ ծաւալումի և նախաձեռնութեան ամէն սկզբունք: Գողէ՛ճի մէջ ամէն բան կ'անցնի կէս-անգգայտ մի յամբընթաց վիճակի մը մէջ: Ուսանողները կէս մը կը խաղան, գրեթէ կ'աշխատին. քիչ շատ ուշագիր են, քչիկ մը կը մտրտեն, միտքին ու մտքմինին սնունդները

քիչ շատ կ'իւրացնեն: Պէտք է փոխել բոլոր  
այս բաները: ՍԵՂԲՈՍ

Թո՛ղ ամէն մարդ աշխատի ուրեմն իր  
չըջանակին մէջ Գինեհատից Ընկերութիւն մը  
կազմել: Թո՛ղ անդամները աշխատին հաւա-  
տարիմ գանաւիլ իրենց ուխտին և ուրճներն  
ալ անդամակից ընել: Ու կը սիրեմ հաւա-  
տալ թէ այն տանն միայն պիտի վերնայ մեր  
մէջէն գինեմոլութիւնը:

Մ. ԹԱԹԱՐԵԱՆ

Խորհած ես երբէք թէ շուկան կփուած  
խորտիկը կամ տունի յիշալը զոր կ'ուտես,  
քիչ վերջ պիտի ըլլայ մկան, սակօր և սիրտ,  
ը պիտի բաբախէ, ջիղ՝ որ պիտի զգայ, ու-  
ղեղ՝ որ ծնունդ պիտի տայ օրինակի համար,  
բարձր խորհուրդի մը կամ ազնիւ զգացումի  
մը, — այդ միտի կփուած կտորը զոր կ'ուտես:  
Արդ, մեծ կարեւորութիւն ունի թէ ի՞նչ տե-  
սակ կերակուրներով ամենէն աղէկ կրնանք  
սնանիլ:



## Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն



### Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ի Թ Ե Ա Ն Գ Ո Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ը Ե Ի Բ Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը Ս Տ Ո Ի Գ Ե Լ Ո Ի Մ Է Թ Ո Տ Ն Ե Ր

Տկարութեան ուէ պարագայի խկական վիճակը ստուգելու երկու որոշ մէթոտներ կան: Նախ մտիկ կ'ընենք հիւանդին կողմէ զգացուած անհանգստութեան և ցաւի նկարագրութեան և յետոյ հիւանդին բազկերակի զարկին, բարեխառնութեան ատտիճանին և ընդհանուր երեւոյթին մասին կը փնտաւենք սովորականէն տարբեր վիճակներ: Ուրիշ խօսքով իրար կը բերենք հիւանդին կողմէ մեղի տրուած ենթակայական նշանները և մեր կողմէ ձեռք ձգուած քննութիւններու աւարկայական նշանները: Գիտական լեզուով այս գործողութեան կ'ըսուի ախտաճանաչում:

Այս երկու տարբեր եղանակներով մեր հաւարած նշաններէն կրնանք հետեւցնել թէ ենթական ունի մարմնական անսովոր

վիճակ մը կամ հիւանդութիւն մը, և հետնապէս կարող կ'ըլլանք խեղճ գիմել պէտք եղած միջոցներուն:

Հոս ցոյց պիտի տանք քանի մը պարզ ու ընդհանուր սկզբունքներ, որոնց ուշադրութիւն ընծայելով ամէն մարդ կրնայ ինք իրեն համար ստուգել հիւանդութեան գոյութիւնը և բնութիւնը, և անոր համեմատ շարժիլ:

**ՅԱՒԻ ԶԳԱՅՈՒՄԸ.** — Յաւի զգացումը ընտելութեան կողմէ ազդարարութիւն մըն է մարդուն, որ ստիպուի իր ուշադրութիւնը դարձնել մարմինին տկար կամ ցատած մասին: Եւ արդարեւ այս ըմբռնումով, ցաւը մեզի բարեկամ նկատելու ենք և ոչ թշնամի: Կրակին գոյութիւնը ազդարարող մոխրին կը նմանի այն. առանց որուն կրակին աւերիչ ազդեցութիւնը շատ ուշ պիտի արժնցնէր մեզ:

Չափահասներու զգացած ցաւին տեղը, սաստկութիւնը, տեւողութիւնը և սկզբնաւորութիւնը մեծապէս կ'օգնեն ախտաճանաչումի և ուշադրութիւն կը հրաւիրեն գէտի այդ կէտը: Շատ մարդիկ սակայն, և մտանաւորապէս ջղային կիներ հակամէտ են չափազանցել իրենց զգացած մէկ պզտիկ ցաւը:

Իբրև ընդհանուր կանոն, հիւանդ մը որքան ծանր կերպով տկար ըլլայ այնքան քիչ հակամէտ կ'ըլլայ բարբառելու իր զգացումները: Իրապէս հիւանդ տղեկ մը կամ ցաւ ունեցող փոքրիկ մը կը մերժէ սնունդ, կը հեռանայ իր սիրական խաղալիկներէն, և կ'ունենայ լացի նսպաներ:

Մարմնական ցաւերը իրենց բնութեամբ որոշապէս կը տարբերին իրարմէ: Շարունակական, խուլ ցաւը յաճախ արդիւնք է յոգացաւի խոցող, տեղափոխուող ցաւը ջիղերէն է, և հիւանդութեան իրական պատճառը յաճախ ցաւին տեղէն չատ հեռի կրնայ ըլլալ, ինչպէս երբ փտած ախուայ մը ամբողջ ծնօտին ջիղերը գրգռելով կը ցաւցընէ ախուայէն հեռի մասերը: Զարնող կամ արոփող ցաւը սովորաբար կը յայտնէ բոր բոքում և մասնաւորապէս կը զգացուի երբ կարծր հիւսուածքի մը մէջ թարախ կը ժողվուի: Ոսկորի հիւանդութեան պարագային, ցաւը սովորաբար շատ աւելի անտանելի է գիշերը քան ցարեկը:

**ԲԱԶԱԿԵՐԱԿԸ.** — Բազկերակը կը զգանք ձեռքին բթամատի կողմի ոսկորին վրայ դնելով մատերնիս, և հսնկէ անցնող արեան



չնչերակին զարկը քննելով : Հասկնալու համար սիրտին և արեան շրջանի ուժը կամ տկարութիւնը, նկատի կ'առնենք զարկին արագութիւնը, կանոնաւորութիւնը և ուժգնութիւնը : Արագութիւնը կը գատենք համբելով զարկերուն թիւը, մէկ վայրկեանի մէջ, կանոնաւորութիւնը կը հետեւցնենք զարկերուն իրարմէ ունեցած հեռաւորութեան առնչութիւնը գիտելով . իսկ ուժգնութիւնը կը հաստատենք աստիճանաբար սեղմելով շնչերակը : Առողջ մարդուն բազկերակը մէկ վայրկեանի մէջ 70 80 անգամ կը զարնէ :

Տենգի միջոցին բազկերակին զարկը կ'արագանայ, և սովորաբար արագութեան սրտչ համեմատութիւն մը կայ զարկին և մարմնին բարեխառնութեան բարձրացումին միջեւ : Այսպէս մէկ վայրկեանին մէջ երբ 80—90 բլլայ բազկերակին զարկը, 38<sup>0</sup> բարեխառնութիւն կը ցուցնէ մարմինը, 90 - 110 զարկին՝ 38<sup>0</sup>—39<sup>1</sup> բարեխառնութիւն, և 120—130 զարկին կ'ընկերանայ 39<sup>0</sup> - 40<sup>0</sup> ջերմութիւն :

Բազկերակը դանդաղ զարկ կ'ունենայ երիկամային ու ջղային գրութեան հիւան-

գուժիւններու պարագային: Անկանոն զարկ  
կ'ուենեան սիրտի ու ստամբոսի հիւանդու-  
թիւնն ունեցողները ինչպէս նաև չափազանց  
ծխողներն: Բորբոքումներէ առաջ եկող բոլոր  
հիւանդութիւններու կ'ընկերանայ բազկե-  
րակի սրագ զարկը:

**ՇՆՁՈՒՄ.** — Առողջ և մտրմնական հան-  
դարտ վիճակի մէջ սովորաբար բուպէն 16 —  
18 անգամ կը կուտարուի շնչումի գործողու-  
թիւնը, որ կը բաղկանայ օդ ներս առնելէ և  
դուրս տալէ, ու ասիկա որոշ կերպով կը  
տեսնուի կուրծքին յաջորդական լայննալուն  
նեղնալը դիտելով: Շնչառութիւնը արագ  
կ'ըլլայ երբ թոքերուն մէջ ուէ հիւանդու-  
թիւն գանուի, և երբ մէկ կողմի թոքը հի-  
ւանդ ըլլայ, ու շագրութիւն քնելով պիտի  
տեսնուի որ կուրծքին այդ կողմը չի շարժիր,  
չընդարձակիր միւս առողջ կողմին նման:  
Երբ փորի գործարաններէն ու է մէկը բորբո-  
քած ըլլայ, այն ատեն ալ անշարժ կը մնան  
կուրծքին վարի մասը և փարին պատը:

**ԼՆՁՈՒՆ.** — Լեզուն կը քննուի չէ թէ  
միայն մարտողական գործարաններու մասին  
ծանօթութիւն ստանալու համար, այլ միան-  
գամայն գաղափար կազմելու համար ջղային

և մասնային գրութիւններու վիճակին նկատմամբս Հիւանդութեան մէջ՝ լեզուն կը ներկայացնէ հետեւեալ գլխաւոր մասնայատկութիւնները. — 1. Մէկ կողմին ծած ցողցողուն լեզուն կը ցուցնէ ջղային գրութեան հիւանդութիւն մը: 2. Ճերմակ խաւով մը ծածկուած գողգողուն լեզուն օտխորաբար նշան է անժուժկալ ունակութիւններու:

Լեզուն վրան ճերմակ խաւ մը կ'ունենայ մարմինին տենդոս վիճակներուն մէջ: Չոր կաս կարմիր լեզուն ազդարարութիւն մըն է ստամոքսային բորբոքումիս՝ խոշոր, թուլցած լեզուն հին անմարսողութեան նշան է: Թուխ չոր լեզուն կը ցուցնէ չափազանց տկարութիւն ծանրակիւ նշան մըն է: Չորութիւնը առանձինն յաճախ բերնէն շնչելու հետեւանք մըն է:


### ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Հիւանդութեան միջոցին կերակուր ուտելու փափաքը կրնայ զօրանալ կամ՝ կրնայ տկարանալ, և կամ՝ կրնայ ըլլալ որ փափաք զգացուի նոյն իսկ տարօրինակ բաներ ուտելու: Խմուած հեղուկին քանակը երբեք միօրինակ չէ, քանզի ատիկա կախում ունի օդին

բարեխառնու թե՛նէն, մարդուն արհեստէն և սովորութե՛նէն, բայց նոյն ատեն ջուրի չափազանց պատակը նշան է տենդի, ստամոքսի բորբոքումի և շաքարախախտ

Երբ փորի ցաւ կամ անհանգստութիւն պատահի. ուշադրութիւն ընծայելու է թէ ցաւը շարունակական է կամ թէ ընդհատ կերպով կուգայ, նաև թէ կերուկուր ուտելով կը սաստկանայ թէ կը նուաղի: Փորի ցաւերէն ոմանք կը թեթեւնան ճնշումով, մինչդեռ ուրիշներ կը սաստկանան:

Փսխելը կարեւոր և սովորական նշան մըն է շատ մը ստամոքսային հիւանդութիւններու, մանաւանդ տղաքներուն մէջ: Գիտելու է թէ ճաշելէ առաջ թէ վերջը կը պատահի. նաև թէ ցաւը կը թեթեւցնէ՛ թէ ոչ: Ամէն պարագայի մտնալու չէ քննել փսխումս նիւթը. որ կրնայ ըլլալ պարզապէս չի մարսուած կերակուր, մաղձախառն հեղուկ մը, կարմիր արիւն կամ թխորակ բաղադրութիւն մը: Ասոնք գիտել և բժիշկին բացատրել օգտակար է ամէն պարագայի տակ:

 ԱՂԻՔՆԵՐԸ. — Պէտք է գիտել թէ ինչքան ատենը մէյմը կը պարպուին տղիքները և թէ արտաքսուած նիւթերը ինչ բնութիւն

ունինն Առողջ մարդ մը սովորաբար օրը ան-  
գամ մը դուրս կ'երթայ և կղկղանքը կիսա-  
հեղուկ յատկութիւնն մը ունիւ Ամանք սովոր-  
ութիւնն ունին օրը երկու անգամ՝ կատարել  
այս գործողութիւնը, և սւրիչներ ալ երկու  
օրը անգամ մը Երբ լեարդը չի գործեր և  
կամ իր ճամբան խցուած է, մաղձը չի թա-  
փիր աղիքին մէջ և չի խառնուիր կերակու-  
րին, ուստի կղկղանքը կ'ստանայ ճերմակ կամ  
ճերմակի մօտ գոյն մը Երբեմն ալ կը պա-  
տահի սր լեարդը և մարսողական սւրիչ գեղ-  
ձեր անօրինակ կերպով առատ հեղուկ կ'ար-  
տադրեն և արդիւնքը կ'ըլլայ փորհարութիւնն  
Չի մարսուած կերակուրներ, մածուցիկ նիւ-  
թեր և արիւն կրնան գանձուիլ կղկղանքին  
մէջ, բաց կարծիր գոյնով արեան գոյութիւնը  
սպացոյց մըն է թէ հիւանդութիւնը կը գրա-  
նուի աղիքին վարի մասերուն մէջ Ստամոք-  
սէն և աղիքին վերի մասերէն եկած արիւնը  
իր գոյնը կը փոխէ թախի և կամ նոյն խակ սևի

### ՄԱՐՄԻՆԻՆ ԲԱՐԵԽԱՌՆՈՒԹԻՒՆԸ

Աստիճանը առողջութեան ասեւն 37 է  
հարիւրմասնեայ ջերմաչափով, և օրուան ըն-

Թացքին մէջ հաղիւ կէս աստիճանի փոփոխութիւն կը կրէ: Առաջները մարմինին տաքութեան աստիճանը ստուգելու համար շոշափումի զգայարանքը՝ ձեռքը կը գործած էին պարզապէս, հիմա սակայն այդ նպատակին համար շինուած մասնաւոր ջերմաչափեր կան, որոնք անութիւն կամ քերնին մէջ դրուելով անսխալ կերպով կը ցուցնեն հիւանդին բարեխառնութեան աստիճանը: Աւ այս պլանիկ գործիքին օգտակարութիւնը չափազանցել անկարելի է, քանի որ հասկցուած է թէ մարդկային հիւանդութիւններուն շատերը կ'սկսին մարմինին բարեխառնութեան աստիճանը բարձրացնելով, որով ջերմաչափը կ'ազդարարէ մեզի հիւանդութեան մը ներկայութիւնը երբ տակաւին ուրիշ վստահելի ու է նշան երեւան չէ եկած: Մարմինին ու է մէկ մասին մէջ բարբոքում առաջ եկած պահուն անպատճառ կը նշմարուի բարեխառնութեան աստիճանի բարձրացում:

Այս մէկ քանի պարզ մէթոտները կիրարկելով, մարդ կրնայ որոշել ու համոզուիլ թէ իսկական հիւանդութիւն մը գոյութիւն ունի թէ ոչ ու անոր համեմատ ընթացք մը



կը բռնէ, ու սլոսքանը միայն հասկցնել էր  
սյս տողերուն նպատակը:

Պարսիզակ

ՏՐ. Յ. Տ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՎԻՐԱՔՈՒԺՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԻ ՄԸ

Նիւ-Եորքի Բժշկական Ակադեմիոյ մէջ  
Իտալացի 13 տարեկան աղջիկ մը, Վինչէնցա  
Չէքսլա, անցաւ շատ մը բժիշկներու առջեւ  
իրբեւ հրաշալի օրինակ մը վիրաբուժական  
ճարտարութեան: Աղջիկը երբ վեցհարուած-  
եանի մը հետ կը խաղար, հրաղէնը պայծե-  
ցաւ և գնտակը մտաւ փորը, և գնաց կառչե-  
ցաւ ողնայարին մօտ: Բժիշկները վերցուցին  
Վինչէնցայի լեարդը, մէջը գանուած ծակը  
կարեցին, և զայն գարձեալ իր տեղը գրին ու  
փորը կարեցին: Գնտակը, զոր բժիշկները հա-  
նեցին, գանուեցաւ ողնայարին մօտ: Քիչ ժա-  
մանակ վերջ աղջկան մարմինին ստորին մասը  
անգամաւրուծուեցաւ և ուրիշ գործողութիւն  
մը կատարուեցաւ: Այս անգամ՝ բժիշկները  
անոր ողնայարին մէկ մասը հանեցին, նոյն  
խիկ կարելով ողնայարին լարը, ուր թիւնուած  
էր գնտակը — վէրք մը՝ որ սովորաբար մահա-  
ռիթ է: Աղջիկը ազատելու մասին շատ քիչ  
յոյս մնացած էր: 2 ամիս վերջ, սակայն, որու

միջոցին պառկած էր հիւանդը ջրային անկողնի մէջ, կ'ենթարկուէր շփումի և ելեկարականութեան: Աղջկան զգացողութիւնը վերադարձաւ անոր սրունքներուն և սաքերուն, և այսօր կրնայ կամաց կամաց քալել հիւանդանոցին շուրջ առանց արուեստական օգնութեան: Ախրարոյժները կ'ըսեն թէ ըստբովին պիտի առողջանայ հիւանդը:

### ՏԱՐՕՐԻՆԱԿ ՄԱՐԴ ՄԸ

Գարձեալ անակնկայներու երկրէն — Ամերիկայէ — է լուրը: Օրէկոն նահանգին Սալէմ քաղաքին մէջ մեռաւ 62 տարեկան ձորճ Լիրէրթ, որ երկար տարիներ մարդկային հեռաքրքիր առարկաներէն մին եղած է, և զոր հանգուցեալ Պարնրմ ցուցադրած էր: Լիրէրթ ունէր 2 սիրա և 3 սաք: Իր մահը ծանուցանող Ամերիկեան թերթերը կը հաւաստեն թէ Լիրէրթի աջ կողմի սիրաը իր մահէն 15 օր առաջ դադրեցաւ ըստախելէ: Չախ կողմինը շարունակեց մինչև և մեռած վայրկեանը: Լիրէրթ հիւժախտէ մեռաւ:

ԹՈՒԲԱԽՏԻՆ ԴԱՐՄԱՆԸ ՍՈՒՈՎ,

Թորախտին գէմ յանձնարարուած դար-

մանները օր օրի կ'աւելնան, սակայն աւերիչ  
ախար իր տխուր դերը կը խաղայ միշտ Անց-  
եալները Յոյն բժիշկ մը կը յայտարարէր թէ  
չամիչով կարելի է բժշկել այդ ախարս Այս  
անգամ ալ բոլորս ին նոր յայտնութիւնն մըն  
է որ կ'ըլլայ Բրոֆ. Կոլինսքի անուն գիտուն  
մը կ'ըսէ թէ 26 տարուան փորձերով հաս-  
տատուած է որ թոքախառն համար լաւագոյն  
դարմանը սոխն է, որ իր բուժիչ ազդեցու-  
թիւնը կը դործէ ոչ միայն առաջին, այլ եր-  
րորդ աստիճանին մէջ իսկ Բրոֆէսորը սոխը  
փորձած է Քուպայի և Հնդկաստանի մէջ և  
բացարձակ արդիւնք ձեռք բերած է Գէտք է  
այս բնական դեղը — սոխը — առանց եփելու  
աղի մէջ թաթիւել և ուտել: Խաշած սոխը  
իր ազդեցութիւնը կը կորսնցնէ: Առաջին աս-  
տիճանին մէջ կը բաւէ օրը 3 հաս սոխ ու-  
տել և ազդեցութիւնը շուտով կը տեսնուի  
Երկրորդ աստիճանին մէջ պէտք է ուտել իբրին  
քանակը աւելցնել: Այս պարագային դարմա-  
նումը 3 ամիս կը տեւէ: Իսկ երրորդ աստի-  
ճանին մէջ դանուող հիւանդները 4-5 ամիս  
սոխ ուտելով կը բժշկուին: Միայն թէ թոք-  
ախատուորը ոգելից բնուելիներ բացարձակա-  
պէս պիտի չգործածէ: Արեւին մէջ պէտք է

պատի և մաքուր օդ շնչէ: Հաւատարմ համար  
կը մնայ միայն փորձը:

## ՕՁԻՆ ԹՈՅՆԸ ԻԲՐԵԻ ԴԱՐՄԱՆ

Անգղիոյ Նմանարուժական (հոսիարարիֆ)  
Համաժողովին մէջ «Օձերու Թոյներ»ուն վրայ  
իր բանախօսութեան մէջ Տր. Սթանհէմ՝ ըսաւ  
թէ որքան որ թունաւոր օձերուն թոյները  
չեն գործածուիր ընդհանուր բժշկութեան  
մէջ, բայց նմանարուժականները զանանք ի-  
րենց ամենէն արժէքաւոր և բուժիչ դեղե-  
րուն մէջ դրած են սկսեալ ա՛յն ժամանա-  
կէն՝ երբ Քոնսթանթին Հէրինկ Հարաւային  
Ամերիկայի մեծ օձին—Լաքէսիս Թրիկոնսէ:  
Փալուս թոյնին ազդեցութիւնը բժշկական  
աշխարհին ուշագրութեան ներկայացուց:  
Ասիկա կ'ըլլար 1837ին, և քիչ ատենէն ու-  
րիշ օձերու թոյներն ալ աւելցան, մասնա-  
ւորապէս Քոպրա կոչուած օձին թոյնը: Քոպ-  
րան իր արժէքը ցոյց տուաւ ջղային հիւան-  
դութիւններու մէջ, մանաւանդ շնչառական  
կեդրոնին վրայ: Ուրիշ օձ մը Քրոսթալուս  
Հորրիտուս իր ազդեցութիւնը ցուցուց ար-  
եան թունաւորման և նեխման պարագանե-  
րուն մէջ: Լաքէսիս եւս իր օդ ասկարութեան

չըջանակը գտաւ ըստը այս պայմաններուն  
մէջ :

—

Քէմպրիճի Համալսարանին ուսանողներէն  
մին Մէտթ ընի Տրուխտեան ժայռերը այցե-  
լած ժամանակ, կիրճի մը մէջ կ'ընայով՝ հո-  
ղեվարք վիճակի մէջ փոխադրուեցաւ Ուէսդ-  
Քէնդի հիւանդանոցը, ուր Տր. Թրափէրս ա-  
նոր կուրծքը բացաւ և քաշեց դուրս հանեց  
սակորի երկու կտորներ, որոնք սրտին մէջ  
մխուտձ էին 3 սանդղակէ դր երկայն վէրք մը  
պատճառելով : Ախրարոյժը այս վնասուած  
սիրտը 19 տեղէն կարկտեց, և կ'երեւի թէ  
գործողութիւնն ալ յաջողեցաւ և կամ պի-  
տի յաջողի : Ար տեսնուի ուրեմն որ ձեւելու  
և կարկտելու արուեստը — վիրարութու թիւնը  
— ինչպէս կը կոչէր Մոլիէս, ո՛րչափ յառաջ-  
գիմնութիւնը բրած է :



# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## ՈՍԿԵՂԷՆ ՆԿԱՆԱԿԸ

Փոքր քաղաքի մը մէջ տանօք հացագործ մը կար, որ միայն իրեն ծանօթ գաղտնիքի մը միջոցով ա՛յնքան լաւ հաց կը շինէր: Քաղաքին բոլոր բնակիչները սւրիշ հաց չէին կրնար սւտել բայց միայն իրենը: Հացագործը իր գործը հեռոյճեակէ ընդարձակեց: Աւստի ստիպուեցաւ օգնական մը առնել, որուն յայտնեց իր գաղտնիքին միայն այն մասը, որ պէտք էր գործը յառաջ վարելու համար: Հապիւ թէ գործը կարգի դրած էր երբ հացագործը հիւանդացաւ: Անոր կեանքը վտանգի մէջ էր: Կինը և զաւակները իր անկողնին շուրջ կանգնած կու լային: Մահամերձը կանչել տաւ օգնականը, և ստպէս ըսաւ անոր

«Գիտես որ քեզի մեծ բարիքներ ըրած եմ: Բարձր թոշակ կը վճարէի քեզի, իբր հայր վարուեցայ քեզի հեռ, գաղտնիքիս մէկ մասը քեզի հաղորդեցի թէև, բայց դուն առաջնակարգ հացագործ մը կրնաս ըլլալ այսուհե-



տեւ. միայն եթէ բոլոր գաղանձքիս տեղեակ  
ըլլատ: Ուստի մեռնելէս առաջ պէտք է ամէն  
բան յայանեմ՝ քեզի, եթէ ոչ գործդ չյա-  
ջողիր:»

Օգնականը խռովեցաւ երբ այս խօսքերը  
լսեց:

Հացագործը շարունակեց.

«Գիտես որ գործս թէև լաւ էր, սակայն  
հարուստ չեմ, քանզի շատ առատածեռն  
էի, ինչպէս գիտես: Այն մը և 6 զաւակ ու-  
նիմ, որոնց վիճակը թշուառ պիտի ըլլայ երբ  
մեռնիմ. ուստի պէտք է անոնց ապագան ա-  
պահովեմ: Եթէ 50 սակի տաս ինծի, բոլոր  
գաղանձքը պիտի յայանեմ՝ քեզի, ուրիշ մը  
կ'ուզէ այդ գումարը վճարել, բայց առաջին  
իրաւունքը քուկդ է:»

Օգնականը յոյժ երախտապարտ եղաւ, և  
վստահեցուց իր հոգեվարք վարպեարը, որ ինք  
պիտի վճարէ 50 սակին և պիտի հոգայ նաև  
անոր կինը և զաւակները:

«Շատ լաւ,» ըսաւ հացագործը, «վճարէ  
դրամը որ յայանեմ՝ գաղանձքը, քանզի զօ-  
րութիւնս ապառելու վրայ է:»

Օգնականը արատաւալից աչքերով խոս-  
տովանեցաւ թէ 5 սակի իսկ չունի, և առա-

ջարկեց պարտամուրհակ մը տալ 6 ամիսէն  
50 սկիւն վճարելու պայմանով: «Հացով և  
ջրով պիտի ապրիմ» ըսաւ, «մինչեւ որ վճա-  
րեմ իմ պարտքս»:

Հացագործը, որ իր օգնականին համես-  
տութեան վրայ բնաւ չէր կասկածեր, հաճու-  
թիւն ցոյց տուաւ: Մուրհակը պատրաստուե-  
ցաւ, և օգնականը 5 սկիւ տւելի վճարել  
խոստացաւ 6 ամիս պայմանաժամին համար:  
Մուրհակը ստորագրուեցաւ և կնքուեցաւ 2  
վկաներու տաջեւ, և հացագործը յայանեց  
բոլոր գաղանխքը իր օգնականին:

Հացագործը իր կնիք տուաւ մուրհակը  
և ըսաւ գողգոջուն ձայնով. «Յուսամ որ ոչ  
թէ միայն այս գրամը պիտի ստանաս, այլ  
օգնականը ձեր մնայուն հոգատարը պիտի ըլ-  
լայ: Սակայն եթէ գրժէ իր խոստումը, որ  
բնաւ չեմ յուսար, Աստուած ձեր իրաւունքը  
պիտի պաշտպանէ: Երբէք վտաահութիւնդ  
չկորսնցնես Աստուծմէ: Մարգու մի՛ ապաւի-  
նիր Աստուծոյ երկիւղով ապրէ և Անիկա  
պիտի հոգայ, խնամէ ու պաշտպանէ դքեզ»:

Քիչ մը վերջը հացագործը կնքեց իր մահ-  
կանացուն:

Այսպիսի արելու ամուսին մը կորսնցնե-

լուն վրայ, խեղճ այրին ի սկզբան այնքան  
վշտացած էր, որ մուրհակի և դրամի վրայ  
բնաւ չէր խորհեր: Սակայն երբ 6 զաւակնե-  
րու պէտքերը զգալի ըլլալ սկսան, կինը լըր-  
ջօրէն գործի ձեռնարկել ստիպուեցաւ: Խա-  
նուծի գոյքերուն վաճառման առթիւ, ա-  
ռաջին անգամ ըլլալով, դիտեց այրին որ ա-  
նոնց արժէքէն շատ նուազ դրամ անցաւ իւր  
ձեռքը: Յետոյ երբ իմացաւ որ մուրհակին 2  
վկաները անօրէն և անխիղճ մարդիկ էին, իր  
մտահոգութիւնը սաստկացաւ: Սպասեց 6 ա-  
միս և ապա գնաց օգնականին ու խնդրեց դրա-  
մին վճարումը: Զարմանքով լսեց օգնականը  
այս պահանջը: Ուրացաւ թէ այդպիսի մուր-  
հակ մը ստորագրած չէր: Աեղծ կոչեց ստո-  
րագրութիւնը, և յայտնեց թէ 2 վկաները  
պատրաստ են երգնուլ որ անոնք տեսած չեն  
թէ իր ձեռքը իսկ թուղթին վրայ գրած ըլ-  
լայ: Խեղճ այրին աղերսեց, պաղատեցաւ որ  
յիշէ իր հոգեվարք ամուսինին անկողինին  
առջեւ պատահած դէպքերը, և իրեն տուած  
խոստումները:

«Գուն կա՛մ խենդ ես, կա՛մ թէ զիս կո-  
ղտօտել կ'ուզես,» գոչեց օգնականը, և ծա-  
ռաներուն հրամայեց որ դուրս նետեն կինը:

«Շատ լաւ,» բառ կինը, հառաչելով,  
«գատաւորը այս օրերս հոս կուգայ և ես  
խնդիրը անոր պիտի ներկայացնեմ: Աստուած  
ալ իմ իրաւունքս երեւան պիտի հանէ:»

Օգնականը ծիծաղեցաւ, քանզի գիտէր  
որ գատաւորը կրնար շահիլ: Աստուածային  
միջամտութեան դալով, անկէ վախ չունէր,  
քանզի անիրաւ, անօրէն մը Աստուծոյ արդա-  
րութեան կրնա՞յ հաւատալ:

Այրին տուն գնաց լալու և աղօթելու  
համար: Օգնականը ձեռքերը շփեց իր տարած  
յաղթանակին վրայ և սկսաւ նոր դաւադ-  
րութիւններ հնարել:

Գատաւորը քաղաք հասաւ, սակայն ի  
մեծ վիշտ օգնականին: Իրեն յուսացածը չե-  
ղաւ: Օգնականը հարցափորձելով հասկցաւ  
թէ իրեն ծանօթ և ակնկալած գատաւորը  
յանկարծ հիւանդացած էր և ուրիշ մը եկած  
էր անոր տեղ: Շուտով գատաւորին տունը  
գնաց, և ծառաներէն հասկնալ ուզեց թէ  
նոր գատաւորը ի՞նչ տեսակ անձ մըն էր:  
Սակայն անոնց հետ խօսած պահուն գատա-  
ւորը յանկարծ ներս մտաւ պարզ հա-  
գուստով:

«Գատաւորին քարաուղածըն է այս ան-

ձը,» հարցուց օգնականը ծառաներէն մէկուն  
Իեռ պատասխան չառած օգնականը,  
դատաւորը, որ լսած էր այս հարցումը, ա-  
ռաջ անցաւ և հարցուց օգնականին.

«Պարո՛ն, դատաւորին քարտուղարին  
հետ գործ մը սենիս:»

Օգնականը որ քիչ մը շուարեցաւ թէեւ,  
սակայն ըսաւ.

«Այո՛, աննշան գործի մը համար զինքը  
տեսնել կ'ուզէի»

«Օ՛ն հետս եկուր,» ըսաւ դատաւորը,  
«ես դատաւորին քարտուղարն եմ»

Իստաւորը չստեց, քանզի բուն դատա-  
ւորը իր քարտուղարը հոն թողած էր որ իր  
բացակայութեան տակն իր գործերը կատա-  
րէ: Ուստի ինք թէ՛ դատաւոր և թէ՛ քար-  
տուղար էր:

Օգնականը քաջալերուած քարտուղար-  
դատաւորին հետ գնաց: Արբ սենեակ մտան,  
օգնականը նկանակ մը գրաւ սեղանին վրայ:

«Այո՛ ի՞նչ կը նշանակէ,» հարցուց դա-  
տաւորը:

«Տէ՛ր, դատաւորին ընծայ է,» ըսաւ օգ-  
նականը:

— Ինչո՞ւ ընծայ կ'ընես:

== Քանզի կ'ուզեմ որ մեր միւս գատաւ-  
ւորին նման վարուի հետս :

— Ի՞նչպէս կը վարուէր ան :

== Գատաւորը բնաւ չէր հանդուրժեր որ  
իրեն բարեկամները վնաս կրեն :

— Աւրեմն ըսել կ'ուզես որ այս նկանակը  
գատաւորի՞ն տամ :

== Եթէ ապահով է այդպէս ընելը, քան-  
զի այդ ծանր հացի նկանակը ամէն ստամոքսի  
չարամարիբ :

— Իրաւ է, բայց գատաւորը զօրաւոր  
ստամոքս մը ունի և կը մարտէ ծանր հա-  
ցերն իսկ :

== Ինչ աղէկ բան, ես ալ կը փափաքէի  
որ իմ սակեղէն նկանակս թէ՛ իրեն և թէ՛  
ինծի նպատաւ որ ըլլայ :

— Անշուշտ Սակայն ինծի քիչ մը գրամ  
չե՞ս տար, որ հացը գատաւորին նուիրեմ քու  
կողմէ :

== Ամենայն յօժարութեամբ, եթէ օգ-  
նէք ինծի թշուառական այրիի մը դէմ, որ  
գրգանէս 50 սակի կորզել կ'ուզէ :

— Նախ գրամը :

Օգնականը փոքրիկ կապոց մը հանեց  
գրգանէն :



— Ոսկի՞ է:

— Այո՛, ոսկի է: Խօսք կուտամք որ գործը  
դատաւորին պիտի յանձնէք:

— Անհոգ եղիր: Սակայն վաղը եկուր և  
պատմէ ինձ խնդիրը որ դատաւորին ըստ  
այնմ ներկայացնեմ զայն:

Յաջորդ առաւօտ դատարանը բացուե-  
ցաւ և զանազան խնդիրներ ներկայացուե-  
ցան: Հացագործը շներկայացաւ մինչեւ որ  
իր սովորական գործերն աւարտեց: Հացա-  
գործը երբ դատարան մտաւ, տեսաւ որ այ-  
րին իր 6 զաւակներով հոն կեցած էր մուր-  
հակը ձեռքը բռնած:

Գատաւորը պաշտօնական վերարկուն հա-  
գած և գլուխը դատաստանական գդակ մը  
դրած էր, այնպէս որ հացագործը չէր կրնար  
ճանչնալ զանիկա հեռուէն: Սպասեց ան-  
համբեր մինչեւ որ ինք և այրին միասին ներս  
կանչուեցան:

«Ահաւասիկ, տէր իմ,» ըսաւ հացագործը  
համարձակութեամբ:

«Ահաւասիկ ես, տէր իմ,» պատասխանեց  
այրին ցած, տկար ձայնով մը:

«Գործի սկսելէ առաջ,» ըսաւ դատա-  
ւորը, «պէտք է դատարանի օրէնքները կար-

դամ՝ ձեզի, քանզի վերջերս բաւական զեղծութիւնք տեղի ունեցած են հոս»

Գատաւորը սկսաւ կարգալ և, ի մէջ այլոց, սա պարբերութիւնը մտանաւորապէս շեշտեց.

«Եթէ մէկը գատաւորին կաշառք տուած ըլլայ, պէտք է ծանր տուգանք վճարէ և տարի մըն ալ բանտարկութեան ենթարկուի»

Հացագործը երբ զայս լսեց, յուզուեցաւ և սկսաւ աւելի ուշադրութեամբ նայիլ գատաւորին երեսը: Սակայն գատաւորը իբր թէ կարեւորութիւն չէր տար իրեն:

Խնդիրը պատմուեցաւ գատաւորին: Այրին իր խօսքը լմնցնելէ ետքը մնւրհակը ներկայացուց անոր: Հացագործը երգում՝ ըրաւ թէ մնւրհակին ստորագրութիւնը իրենը չէր: Երկու վկաներն ալ նոյնը հաստատեցին: Ուստի գատաւորը ի նպաստ հացագործին վճիռ տուաւ:

«Ապացոյց չկայ այս մարդոց ըսածները հերքելու, կը ցաւիմ», ըսաւ գատաւորը այրին: «Կրնա՞ս, սակայն, ծանր հաց ուտել: Եթէ այս՝, նկանակ մը պիտի տամ քեզի, զոր այս համեստ հացագործը բերաւ ինձի երէկ գիշեր: Հոս ալ կապոց մը կայ, որ իմ

քարտուղարիս տուած էրս Այս ալ քու զա-  
ւակներուդ տուրս»)

Գատաւորը այսպէս ըսաւ և հացը ու  
կապոցը երեւան հանեց:

«Խիղճս,» շարունակեց գատաւորը, «չի  
թոյլատրեր կաշառք առնել, քանզի պիտի  
պարտաւորուիմ այն ատեն այս բարի մարդը  
թէ՛ տուգանքի և թէ՛ բանտարկուած եան գա-  
տապարտել: Միայն թէ նկանակ մը հացը չեմ  
կրնար մերժել:»

«Տէր իմ, տէր իմ,» կակազեց հացա-  
գործը, «կուտամ ինչ որ պահանջուի, միայն  
թէ նկանակս և կապոցը ետ տուէք ինձիս:»

«Մչ,» ըսաւ գատաւորը, աչքերը հացա-  
գործին վրայ ուղղելով, «նկանակս դրամի  
հետ չեմ փոխեր. կ'ընարեմ զայն այրիին  
տայ:»

Հացագործը չէր կրնար հանդուրժել որ  
նկանակը այրիին ձեռքին մէջ միջոց մը ըլլայ  
զինքը գատապարտել տալու համար: Աւտի  
խնդրեց աղերսեց որ նկանակը իրեն վերա-  
դարձուի, ինչ որ ալ ըլլայ պահանջուած  
գինը:

«Մնչ որ ալ ըլլայ գինը՛,» կ'ըսես հար-  
ցուց գատաւորը: «Լաւ բեր 55 ոսկի հացին

համար և կապոցին համար ալ՝ 10 սակի, և զանոնք պիտի ստանաս»

Հացագործը տուն վազեց, և արտորնօք վերադարձաւ գրամը բերելով:

«Առ...» ըսաւ դատաւորը սյրիին, «առ այս սակիները: Ասոնք աւելի ծառայութիւն պիտի մատուցանեն քեզ, քան այդ ստահակին նկանակը: Քու համբերութեանդ և հաւատքիդ նկատմամբ պատմած են ինձ: Դուն հիմա անոնց պտուղը կը վայելես»

«Իսկ դուն,» շարունակեց դատաւորը, խօսքը հացագործին ուղղելով, «արժանի էիր որ ծանր տուգանքի դատապարտէի զքեզ քու սակեղէն նկանակիդ համար: Ասկայն կը յուսամ որ միշտ պիտի յիշես թէ խորամանկութիւնը և խարդախութիւնը շուտով երեւան կուգան, և թէ այս կ'նջ վստահութիւնը Աստուծոյ վրայ աւելի օգտակար և նպաստաւոր եղան իրեն, քան քու ստախոսութիւնդ, անհաւատարմութիւնդ, անհամեատութիւնդ և խարդախութիւնդ՝ քեզի»

Դատաւորը այս ըսաւ և երկուքն ալ արձակեց դատարանէն:

## ՄԱՀԱՄԵՐՁ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՏԵՍԻԼՔԸ

Տարօրինակ լուր մը կուգայ Աքրինկդշնէ (Անգղիա), ուր մահամերձ աղջիկ մը գուշակած է իր անհետացած հօր ենթարկուած վիճակը: Այլըք Մարստէն անուն 53 տարեկան մարդ մը անհետացած էր Ադիվընսըն փողոցի իր տունէն, ուր կ'ապրէր իր 25 տարեկան հիւժախտաւոր աղջկան մօտ: Այս դէպքը ծայր աստիճան յուզած էր մանկամարդ կիներ, որ անցեալ օր յայտարարեց թէ իր հայրը տեսած է իր անկողնին քով, և շուրջը դրանուողներուն ծանոյց թէ անոր գիակը կը գանուի Օսլայդուիսի ջուրերուն մէջ, Ասքըն կամաւրջին տակ: 1-2 ժամ ետքը աղջիկը մեռաւ, և զարմանալին այն է որ ստուգիւ անոր հօր գիակը գանուեցաւ յիշեալ ջրանցին մէջ, ճիշդ աղջկան ըսած տեղէն:

—

## ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՈՂ

Ձկնորս մը, 20 ժամէ ի վեր կաթուածահար եղած՝ պողած ու փայտացած, պատանքով պատուեցաւ, և քիչ վերջը դագաղին մէջ դրուեցաւ: Թաղման հանդէսին ատեն դագաղին մէջէն խուլ ձայն մը լսուեցաւ:

Բացին գագազը, և հիւանդը կենդանացաւ ու  
առողջացաւ :

Աւետ. միտիոնար մը Պէրպէրայի մէջ հա-  
ւատած է որ ինք տկանատես եղած է 2  
ընկերու վերակենդանացումին, որոնք հող  
իջնելու մտ էին : Աւերակենդանացողներուն  
մէկը կրցաւ կրկնել բոլոր այն խօսքերը, զո-  
րոնք իր կինն ըսած էր երբ ինք քնէածուծեան  
վիճակի մէջ էր :

«Դուն կ'երթաս, բայց բարեբաղդաբար  
հարստութիւն կը ձգես ինձիս»

### ՎԵՀԱՆՁՆ ԹԱԳՈՒՀԻ ՄԸ

Հոլանտայի վիլհելմինա Թագուհին Հէդ-  
լօ պալատին մօտ չմշկած տան անտալոր հան-  
դիպում մը ունեցաւ : Թագուհին կը չմշկէր  
մեծ արագութեամբ, և իր այդ արագ ըն-  
թացքին՝ մէջ ընդհարեցաւ գիւղացի կնոջ  
մը, որ նոյնպէս հակառակ կողմէն կը չմշկէր :  
Ընդհարումն այն աստիճան սաստիկ եղաւ որ  
կինը մեծ դժուարութեամբ հազիւ կրցաւ  
ինքզինքը բռնել՝ չլինալու համար : Գիւղացի  
կինը, որ չէր ճանչնար միւս կինը, իր բերնէն  
եկածը դուրս տուաւ : Ահահանձն Թագուհին



առանց յուզուելու, ներում խնդրեց կնոջ-  
մէն և շարունակեց իր ճամբան: Քանի մը  
վայրկեան ետքը գիւղացի կինը մեծ երկու-  
ղով իմացաւ թէ իրեն ընդհարողը Թագուհին  
էր, և իր ցաւն ու զղջումը յայտնեց անգի-  
տակցաբար գործած անքաղաքավարութեան  
համար:

### ՄԱՀՈՒԱՆ ՄԱՆԳԱՂԸ

Աւստրիոյ ներսերը անշուք գիւղի մը մէջ  
կը բնակի կին մը, որուն ամուսինը Նիւ-Եոր-  
քէն պարբերաբար գրամ կը զրկէ իրեն՝ գիւ-  
ղին մեծաւորին միջոցաւ: Վերջերս ամուսինը  
սովորականէն աւելի մեծ գումար մը կը զրկէ,  
որ ամբողջովին իր կնոջ կը յանձնուի: Աինն  
ալ իր կարգին ինայոզական գրամատունը  
աւանդ կը ձգէ գրամը, քանզի անմիջական  
պէտք մը չունէր անոր: Յաջորդ գիշերը մե-  
ծաւորը գեղջուկ կնոջ խրճիթը կը մտնէ մահը  
յատկանշող կերպարանքով մը, ձեռքը ման-  
դաղ մը բռնած, և կը սպառնայ առնել տա-  
նիլ զինքը եթէ գրամը իրեն չտար: Աինը  
սարսափահար օր մը պայմանաժամ կը խնդրէ  
«Մահ»էն և յաջորդ առաւօտուն գրամա-  
տուն կ'երթայ ու գրամը ետ կ'ուզէ: Հոն

խեղճ կինը կը պատմէ խնդիրը պաշտօնեաներուէն, որոնք կը խոստանան հրեշտակ մը զրկել՝ մահը վաճառելու համար: «Հրեշտակ»ը ճիշդ ժամանակին կ'երևի սատիկանի կերպարանքով և կ'առաջնորդէ «Մահ»ը դէպ ի բանս:

### ԳՆՉՈՒ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ

Անբաժանելի կերպով իրարու միացած մարդկային էակներու երրորդ օրինակը՝ Վիեննայի մէջ պիտի ցուցադրուի: Զոյգ մը Գնչուքոյրեր են ասոնք, գիւղացիի մը աղջիկները, 25 տարեկան: Իրենց աղայութեան ժամանակ մեծաքանակ դրամ՝ առաջարկուեցան անոնց ծնողքին, մանաւանդ Բարիդի վիրարոյժներուն կողմէ, դործողութիւն մը փորձելու անոնց վրայ, բայց որովհետեւ իրարու փակած երկու աղջիկները առողջ էին և երջանիկ անոնց հայրը չէր հաւանած: Իրենց ցուցադրութեամբ դրամ՝ շահելով դաստիարակուեցան բաւական: Երկուքն ալ հիմա կը խօսին Անգղիերէն, Ֆրանսերէն և Գերմաներէն: Մին ջութակ կը զարնէ և միւսը՝ կիթառ: Տարբեր խառնուածքի աէր են: Մին ուրախ և շատախօս է. և միւսը՝ ախուր և հանգարտ: Առանձին շնչերակներ ունին և առանձին

կազմեր: Երբ մէկուն գլուխը ցաւի, միւսը  
ցաւ չիմանար: Մէկը աջ կողմը կը քնանայ և  
միւսը՝ ձախ կողմը, որքան որ կրնան: Անոնք  
իրենց ստերէն կապուած են իրարու:

## ՈՂՁ ԹԱՂՈՒԱԾ

Շուօ անուն 18 տարեկան երիտասարդ  
մը, որ վերնոտուծեան (սառա) ենթակայ  
էր յանկարծ մարեցաւ ու այլ ևս կեանքի  
նշան չառաւ: Անոր ընտանիքն և զինք շըր-  
ջապատողները, որ համոզուեցան թէ խեղճը  
մեռած է, թաղման պատրաստութիւններ  
տեսան: Թաղումը տեղի ունեցաւ՝ առանց  
բժիշկ մը տեսած ըլլալու գիտելը: Նոյն իսկ  
թաղումի պաշտօնական արտօնութիւնը արը-  
ուեցաւ: Ռիզամարին 8,000 հոգինոց քաղաք  
մըն է: Թաղումէն 3-ի օր վերջ մեռելաթաղը  
որ գերեզմանատան մէջ ուրիշ փոս մը կը  
փորէր: Շուօի գերեզմանին մօտերը, կարծեց  
թէ հեծեծանքներ կը լսէ: Ստակայի՛ բան: Այդ  
հառաչանքները 3 օր շարունակ լսուեցան:  
Մեռելաթաղը, բաթ իմացականութեան  
տէր մէկը, կարեւորութիւն չտուաւ անոնց  
ու շարունակեց իր գործը: Սակայն, այդ մա-  
սին ա՛յնքան խօսեցաւ գրացիներուն հետ, որ

Շովօի մեռնելէն 11 օր վերջ քաղաքագլուխը  
և սասիկանութիւնը գերեզման գացին ու  
բանալ առին անոր դագաղը: Շովսն, որ վեր-  
ջապէս և վերջնականապէս մեռած էր, աջ  
կողմին վրայ պառկած էր, և տեմուեցաւ որ  
խեղճ մարդը իր 3 օրուան զարհուրելի հոգե-  
վարքին առեն. պարապ տեղը պառայէ յոգ-  
նած, անօթութենէ ու ծարաւէ խելայեղ, իր  
մասներուն ծայրերը լափած էր:

### ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ՀՈՎԱՆՈՅԸ

Կը պատմուի թէ Անգղիոյ Թագուհին օր  
մը, իր սովորութեան համեմատ աղքատնե-  
րու անակներն այցելելու պահուն անձրեւի  
բռնուեցաւ յանկարծ: Ն. Կ. Վ. համառու-  
թիւն ծերուկ կնոջ մը լնակարանը մտաւ և  
բտաւ անոր.

«Կը հաճի՞ք ինծի հովանոց մը փոխ տալ:»

«Երկու հաս ունիմ՝» պատասխանեց պա-  
ռաւը, «մէկը նոր միւսը հինն Աս տաէք,  
կարծեմ՝ ա՛լ երեսը պիտի չտեսնեմ!»

Ծերունի կինը այցելուին յանձնեց հո-  
վանոցը, որուն կողերը կ'երեւէին մաշած կոշա  
կտաւին մէջէն: Այցելուն տաւ հովանոցը  
որ ոչինչէն աղէկ էր և ճամբան շարունակեց

անձրեւին տակէն Հեռեւեալ օրը Թագու-  
հիին ծառաներէն մէկը երբ վերագարձուց  
հովանոցը և խեղճ կրնն իմացաւ թէ ի՛նչ ա-  
ռիթ կորսնցուցած էր, գոչեց ցաւազին.

«Վա՛խ, վա՛խ, թէ որ գիտնայի թէ ու-  
ղողն ո՛վ էր, ամենէն աղէկ բանս կուսայի  
անոր»

Կինը փախցուցած էր իր պատեհու-  
թիւնը, չէր ճանչցած իր այցելուն:

---

## Գ Ի Տ Ա Կ Ա Ն

---

### ԳՈՒՆԱԻՈՐ ՄԵՏԱՔՍ

Տեսէ՛ք, ի՛նչ կը դրէ այս մասին Մ. Քու-  
միլ Ծլամարիօն,

1902ին փորձած էինք որ արգեօք կարելի  
չէ՞ր ուղղակի գունաւոր մետաքս ձեռք բերել  
չերամին սնունդը փոխելով: Այս նպատակաւ  
ազի շաքարի և բնասպիտի մէջ թաթխուած  
թթենիի տերեւներ կերցուցինք շերամներուն  
և արդիւնք մը ձեռք չբերինք: 1903ին կրկնե-

ցինք մեր փորձերը անխղիճի զանազան գոյներով՝ միամտեայ շերամներու վրայ: Թէեւ այս անսանիճները մեծ ախորժ մը ցոյց չառւին այս սնունդին համար, սակայն յաջողեցանք մեր փորձերէն օգտուիլ: Շերամներուն մարմինը կարմիր, նարնջագոյն կամ դեղին եղաւ, տրուած գոյնին համեմատ, և այս կերպով ստացանք խողակներ, որոնց մեծաքսը նարնջագոյն, սկեգոյն, և այլն, եղաւ:

Այս տարի շարունակեցինք փորձերը ուրիշ գոյներով: Ասպոյտը, մանիշակագոյնը և անխղիճի կանանչը փորձեցինք առանց յաջողութեան: Փորձը քանիցս կրկնեցինք և մեկնոյն արդիւնքը ունեցանք: Շերամները չեն ուտեր այս գոյներուն մէջ թաթխուած թթեանի տերեւները, և եթէ ուտեն ալ, քանի մը օր ետքը կը մեռնին: Այն տակն խորհեցանք որ հանքային գոյները աւելի աղէկ պիտի պատշաճին, և թթեանի տերեւները հանքային կարմրագեղով (ալ շոֆ) ծեփեցինք: Շերամները անյադարար կերան այսպէս պատրաստուած տերեւները և երբէք չնեղուեցան: Ամենէն աւելի յաջողեցան անխղիճի կարմիր, նարնջի կամ դեղին գոյները:



## ՄԱՀԱՄԵՐՁԻՆ ՉԳԱՅՈՒՄԸ

Արկածի մը առթիւ ինքզինքնին յանկարծ մահամերձ զգացողները վայրկենապէս կը վերյուշեն իրենց կեանքին մէջ տեղի ունեցած կարեւորագոյն գէպքերը — կամ ըսենք, իրենց ամբողջ կեանքը — այնպէս՝ ինչպէս կ'ըլլայ բանդադուշանքի տակն, ուր միակ վայրկեան մը բաւական է գէպքերու անվերջ շարք մը յիշելու:

Խեղդուելու մօտ գտնուող կամ երկածուղիին երկու գիծերուն մէջ մնալով կառախու մընէ կոխտուելէ մտապար ազատող անձեր այսպէս պատմած են:

Տր. Սոլիէ կը պատմէ թէ մոտֆիւսամու կին մը, զոր ինք կը գարմանէր, հաստատապէս համոզուած էր թէ պիտի մեռնէր: Հիւանդին տեսողութիւնն ու լսելիքը շափազանց սուր էին: Աինը օր մը ժամերով զգայալիրկ մնալէ ետքը արթնցած տակն գոչեց. «Ո՛հ, որչա՛փ հեռուները բարձրացայ որքա՛ն գեղեցիկ էր:» Եւ պատմեց թէ երբ ինքզինքը ա՛լ կորսուած կը զգար, շատ հեշտ և շատ հաճոյալի հանգիստի մը վայելքն ունեցած էր:

Տարակոյս չկայ թէ մեծ թատերագիրները, գիտական այս փորձառութեանց հա-

մեմատ, Օրլէանի Օրիորդին մահուան վայրկեանին մէջ զգացածը բնախօսական և հոգեբանական տեսակէաներով շատ ճիշդ նկարագրած են, սա խօսքերը վերագրելով անոր.

« . . . թեթեւ ամպեր վեր կը տանին դիտ: Մանրակուռ զրահը շղարշէ զգետ մը կը թուի ինձ . . . : Կարծատեւ է ցաւը և յաւերժական՝ խինդը »

Այսու հանդերձ բնկղմողները վերոյիշեալ երեւոյթներուն հետ կուրծքի ցաւագին կծկումներ ալ կ'ուենենան ըստ այդ ալ ո՛չ յաճախ Մեանողներու շատերն ալ երկարատեւ նախապատրաստութենէ մը ետքը կ'ողջունեն մահը: Ամենուս ալ գիտցած բանն է թէ տառապալի հիւանդութեանց ատեն մահը յաճախ կը խնդրուի իբրև ազատարար ոգի: Այդ տեսակ հիւանդներու մեանիլը տեսնողները կը հաստատեն թէ այդ ատեն մահուան վայրկեանը շատ հաճոյարեր, շատ երջանկաբեր կը նկատուի: Այլ այդ տեսակ մահամերձներն այլ ևս բժշկուած, նոր կեանք առածի պէս կը զգան ինքզինքնին:

Այս վիճակը ֆիզիքական տեսակէտով ալ կը բացատրուի, վասն զի մահը գրեթէ միշտ խոր նուազումի մը վերջնական վիճակն է:

# Գ Ր Ա Կ Ա Ն



ՍՐԲԱԶԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

(Արձակագիր)

ԴԷՊ Ի ՔԵՉ, ԱՍՏՈՒԱՎԾ ԻՄ

Ձե՛մ կրնար սպրիլ իմ մէջս, կ'ուզեմ  
փախչիլ ինքիրմէս: Հողիս նետասար թռչունի  
պէս թեւ առած կը թռչի յաւիտենական  
Լոյսին, դէպ ի Քեզ: Ու, թէեւ, ամպերն  
արեւը կը մթագնեն, ու հովերն վերի լոյսերը  
կը մարեն, ո՛հ, կը մթննայ ճամբաս, այլ ես  
կ'ուզեմ շարունակել ուղիս դէպ ի Քեզ:  
Ձե՛մ վախնար խաւար գիշերէնս Վաւարը՝  
Քեզմէ հեռի քեզմէ զուրկ մնայն է: Գիւ-  
շերը՝ Քեզ մոռնայն է:



Ի՛նչ որ կ'երացեմ, ի՛նչ որ կ'երեւակա-  
յեմ, ի՛նչ որ կը խնդրեմ, ու դեռ ի՛նչ որ իմ  
իղձերէս, իմ ցանկութիւններէս վեր են, իմ  
ձգտումներու հորիզոններէն անդին, անոնք  
ամէնը Քու մէջէդ կը բղխին: Գուն ինքդ ես  
անոնք: Ո՛հ, ես՝ անյոյս, անվստահ իմ վրայ,  
ես՝ անբոյն, անսպաստան, դէպ ի Քեզ կը

Թեւածեմի Քեզի հասնիլ կ'ուզեմ Քեզի յարիլ, Քեզ իմն ընելլ Ս.յս է կեանքիս նպատակակէտը: Շիտակ անոր կը վաղեմի Եւ ի՛նչ փոյթս թէ զրկու մներ, կորուստներ, նեաեր ու սլաքներ դիս հալածեն, թէ աշխարհ ու դաժան ցաւեր սեւ բողբ մը սպառնան, — ցա՞ւ, վի՞շտ: Յաւը՝ Քեզ թողուլն է, վիշաբ՝ Քեզմէ օտարանալն է:



Հոգիս Քեզ կը փնտռէ, դէպ ի Քեզ կ'ուզողուի, կուրծքը ալիքներուն տուող նաւուն պէս, որ դէպ ի ծովափը կը յառաջանայ, կամ նաւապետին պէս՝ որ չի նայիր մինչեւ իսկ արծաթ լուսինին, այլ կը սեւեռէ աչքը բեւեռի մշտավառ, մշտակաց կէտին, ու վերջապէս՝ նման արծիւին՝ որ դէպ ի արեւը կը ճախրէ: Ու թող մահը իր խոժոռերեսով, իր արհաւիրաց ստուերներով, իր խորունկ պող գետով կտրել փորձէ իմ անցքս: Բայց ես Քեզի պիտի գամ, իմ վերընթացքի ուղիս մէջ պիտի սրանամ, ճեղքեմ, անցնիմ՝ օգն ու ամպերը, լոյսն ու խաւարը, մինչեւ իյնամ գիրկդ, Քու մէջ, ո՛վ իմ կեանքս: Չեմ ընկրկիր մահէն, մահը՝ ապրիլն է, առանց Քեզի:



Ո՛վ Տէր իմ, չեմ ուզեր գալ Քեզի ու  
եւ դառնալ միայն աղօթքի կամ երկրպա-  
գուծեան միջոցով, այլ միշտ Քեզի գալ,  
չուե՛լ, միշտ չուե՛լ դէպ ի Քեզ: Իմ կեանքս  
շարունակական արշաւանք մը, վաղք մըն է  
դէպ ի Քեզ նման գեօին, որ ծովը կը յառա-  
ջանայ, նման ծառին, որ դէպ ի վեր օդին մէջ  
կը բարձրանայ: Ո՛հ, Քեզի միշտ մօտ գալ, ու  
տակաւին շատ մօտ գալ, յաւիտեան գալ:  
Այս է սրտիս ճամբան. հոգւոյս ընթացքը  
դէպ ի Քեզ: Ու ես քանի դէպ ի Քեզ կը  
շարժիմ, դժս կը նորոգուի, արծիւներուն  
պէս թեւերով վեր կ'ելլեմ ու չեմ թուլ-  
նար, կը թռչիմ ու չեմ յոգնիր:



Խոցուած եմ, ո՛վ Տէր. ու վիրաւորուած,  
անյոյս եմ ու անմխիթար անապահով և ան-  
պաշտպան կը զգամ: Ո՛ւր գիտեմ ես ո՞ւր  
Բարիք կը փնտռեմ, այլ Քեզմէ դուրս ամէն  
բան չարիք է՝ նոյն խկ բարիքը: Ուստի ես  
տկուտ կը կրճտեմ մեղքին դէմ, ոչ թէ  
դժոխքին վախէն. այլ վասնզի մեղքը կը զա-  
տէ գիտ Քեզմէ, ու դժոխքը քաղելն է այն  
ճամբուն մէջ, որ չի տանիր դէպ ի Քեզ:

Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆ  
(ԳԻՍԱԿ)

ԽՕՍԻ ԸՆԴ ՇՈՒՇԱՆՈՅ

«Նայեցե՛ք դաշտի շոշաններուն»

(Մատթ. Զ. 28)

- 1 Ո՞վ առաւ, քնքոյշ շուշան,  
Քեզ գարնան սրբուն գասրիկ,  
Այդ գեղն ու փայլ եղական,  
Այդ կերպարան գեղեցիկ,  
Այն որ կուտայ աստեղց շող,  
Եւ արեւու լոյս պայծառ,  
Այն որ ծաղկանց կուտայ ցող,  
Եւ մարց մանկիկներ կայտառ:
2. Ո՛րքան անբիծ ես, շուշան,  
Անմեղութեան դու ախար,  
Զուարթ ու թիւնդ աննման,  
Ո՞րպէս արդեօք ստացար  
Ծաղկանց մէջ ծնայ ես,  
Գաշտաց օդը ծծեցի,  
Երկնից ցողը լուաց զիս,  
Արփւոյն շողերն ըմպեցի:
3. Զքեզ, շուշան գեղանի,  
Աստուած ո՛րչափ է օժտեր,  
Սակաւօրեայ ծաղիկ մի,  
Ո՛րքան ունի վայելքներ:



Սակաւօրեայ այս շուշան  
Քեզ կ'աւանդէ վսեմ գաս,  
վերնախնամ տեսչութեան  
վաստահ լինիլ հանապազ:

Պարսիզակ

Ս. Մ. ԳԱՅՍ. ՊԵԱՆ

ՀԱՐՅ ԱՌՎԱՐԴՆ

1. Գեղեցկաթոյր դու վարդ սիրուն,  
Որ բոյր սիւսես շուրջ դքեւ,  
Է՞ր դիտփուկ ձեռն կոյսերուն  
կամիս խայթել յարատեւ:

2 Է՞ր չկամիս որ ամէն մարդ  
Գգուէ դքեզ կաթոզին.

Այլ պատասխան տաս, սիրուն վարդ,  
Խայթիւ՛ նոցա համրոյրին:

3. Յարմա՞ր են այդ կոշտ, սուր փուշեր  
Քո բոյրին քաղցր, հոգեզմայլ,  
վայել են այդ խայթիչ ճանկեր  
Թոյրիդ չքնաղ, գեղամփայլ:

4. Պատասխանեց վարդն գեղանաղ  
Մեղաքաղցրիկ ի ձայն ինչ,—  
«Պատճառն գիտնալ թէ կամենաս,  
Ըսէ և դու թէ առ ի՞նչ:

5. Գթած Աստուած ընդ միշտ մարդուն  
Յոսկի բաժակն խնդութեան

Հեղու կաթիլ մի դառնութիւն  
Եւ այնպէս տայ քամել զայն:

6. Է՞ր 'նդ սիրափթիթ և քաղցր ժպտին  
Տայ և տրտօսք ու ս'հեր,

Է՞ր վիշա, հառաչ տայ երջանկին.»

Հարց տանեմ քեզ, է՞ր, ս'հ, է՞ր ... :

Ասարագար

Յ. Ս. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

ԱՆՈՒՆ ՄԸ ՔԱՆԴԱԿԵԼ

1. Գրեցի անունս աւաղի վրայ՝  
Յուսալով թէ միշտ հո՛ն պիտի մընայ,  
Այլ բարէ՛, շուտով ծովըն մակընթաց  
Անզօր գըծերըս վրտարեց ի բաց:
2. Քանդակեցի զայն ծառի մը վրայ,  
Յեա բազում ամաց երբոր ես դարձայ,  
Ծառն այլ ըստուերն այլ էին կորսուած,  
Որօցմով երբեմն դաշտն էր ծածկուած:
3. Քանդակեցի զայն մարմնորի մը վրայ,  
Սա յուսով թէ հոն յաւերժ կը մնայ,  
Իւս'դ, շարժըն զայն ի հիմանց քանդեց,  
Սեւ հողերու տակ թաղեց ու ծածկեց:
4. Ի գերեւ ելան ասոնք ամէնքն ալ,  
Կ'ըզձայի հոգւով, ս'հ, անմահանալ,  
Եւ անունս ընել մըշտընջենական,  
Ի՞նչ ընել, — գրել է ի սիրտըս մարդկան:

5. Լուսաշող, փայլուն, խոշոր տառերով,  
 Վարուք անարատ, խօսքով և յուսով  
 Եթէ քանդակեմ ի մարդ զիմ անուն,  
 Յայնժամ անմահ եմ յաշխ առե՛նուհա  
 Թարգ. Անգղ.

Նիկոմիդիա

Ա. Վ. ՊՈՏՈՒՐԵՆԱՆ

ԹԱՓՈՒԻ ՈՐՐԱՆԸ

(Կարիսէիս յիշատակին)

1. Ձմեռ կեանքիս ու ձմրան մէջ  
 Գարուն բերող, ս'վ մանկիկ,  
 Օր մը յանկարծ ճիշդ տան մէջ  
 Տուաւ կեանքիդ աւեաիքս
2. Աչքի լոյսեր, խինդ ու բերկրանք  
 Օրօրոցիդ շուրջն առին,  
 Կեանքի ցաւեր ու տառապանք  
 Մտացանք ակայդ նոր դառինս
3. Տգէտ լեզուս նոր բացուեցաւ,  
 Օրերդ երգեց քեզ համար,  
 Քնոյ հանգիստն ու ամէն ցաւ  
 Մտացաւ դարուն ու ամառս
4. Գարնան հասկեր ու ծաղիկներ  
 Ա'լ չունեցան հրապոյր,  
 Սարեակէն լաւ ճիչ, ճառողներ  
 Ունէր բերնիկդ ի համբոյրս

5. Շրթանցդ բոսոր վարդը չունէր  
Ո՛չ զուարթունք քո ժպտոց  
Կլոր դէմքէդ կը ամբողջէր  
Երկնից լուսնեակն ի քթիթ :
6. Մետաքսած ել գանգուր մազեր  
Կապոյտ, աչեղ, սեւայօն,  
Գիրդ միսերով, զոյգ թաթիկներ  
Ճանկաւէին հոս ու հնա :
7. Կուրծքիս վրայ սեղմած ատեն,  
Բարասէր սիրտս հեւ ի հեւ.  
Կ'աղօթէի չարէն, վատէն  
Տէրը պահէ քո արեւ :
8. Եւ մեծացար, սիրո՛ւն սրգեակ,  
Կեանքս ու արեւս դարձար.  
Բայց օր մ'աւա՛ղ, իմն հոգեակ,  
Յանկարծ հիւանդ արթնցար :
9. Տագնապեցար, տառապեցար,  
Զո՛ւր ճշեցիր ու լացիր,  
Գոյնդ գնաց, մարմնս դարձար,  
Զմեղ ըրիր մտացիր :
10. Գեղ ու դարման օգուտ չըրին,  
Շարած մ'ամբողջ աիւ, գիշեր,  
Խեղճ ծնողքդ ինչե՛ր չըրին,  
Ա՛լ կսկիծէս չեմ յիշեր :
11. Մազիս հիւսքը ծանր թուէր,

Բայց արդ ծածկէ քեզ մի քար,  
Երգող թռչունս ո՞ւր է չուեր,  
Ա՛լ իմ գարունս ետ չի գար:

12. Ձմեռ կեանքիս ու ձմրան գէշ  
Գարուն բերող, ո՞վ հրեշտակ,  
Է՞ր թողուցիր զիս սուգի մէջ,  
Ինչո՞ւ մտար հողին տակ:

Կարիև

Ս. ՇԷՀԲԷՐԵԱՆ

### ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔՍ

Տրտունջներ ունիմ՝ արտիս մէջ գաղանի,  
Ի՛նչ մքիս մի նայիք կեղծ է շատ անգամ.  
Հանգարտ կապոյտին ծովուն՝ ես կ'զգամ՝  
Խորը փրփուր կայ, փրփո՛ւր անայի:  
Արցունքներ ունիմ, լաց մը լուռ. անձայն,  
Չոր աչքերուս մէջ մի փնտռէք ի զուր.  
Պայծառ երկինք մը ինչպէս իր ախար  
Ամպերն ունի որ անարցունք կու լան  
Ի՞նչ շահ. լացեր եմ՝ թէ տար, անոր  
Որոնք հեգնանքի արհամարհանքով  
Կ'ասողնաեն թմրած վշտերս՝ անգորով,  
Ու կ'անցնին կ'երթան խոց մ'ալ տալով նոր:



Արհամարհանք մ'ալ թող ինձի ներեն  
Որ ուզգեմ՝ կեանքին, լոյսին, քեհասար.  
Որ գէթ լուսլու քաջս թեանս համար,  
Ի՛նչ ԲՁԻՆՔՍ ՍՓՈՓԵՄ ՄԻԱՄԻՏՕՐԷՆԵ:

Գոնիս

Հ. ԽԱՆՔԱՄԱՐԻ

(ԱԿԻԻԼԻՆԷ)



# Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն



ԲՆԱԿԻԶՔ ԱՇԽԱՐՀԻ

4,563,446,000

Քրիստոնեայ	558,862,000
Պապական	272,638,500
Բողոքական	166,066,500
Յզևնադաւան	120 157,000
Մահմէտական	216,630,000
Հրէա	11,222,000
Պուստայական	137,935,000
Հինասու	209,659,000
Քանֆուսիոնականք	23,816,000
Թաօիսիթք	
Շինիթ սիսիթք	24,000 000
Ֆէլիշ կամ	157,069,500
Ոգեպաշաք	
Զանազանք	15,352,500

Քրիստոնէկից մեծագոյն մասը կը բնակի  
 Եւրոպայի և Ամերիկայի, Մահմէտականնե-  
 րու 141,000,000ը Ասիայի և Եւրոպայի և  
 50,000,000ը Ափրիկէի մէջ, Հրեայք մեծ



մասամբ կը բնակին Եւրոպայի և Ամերիկայի մէջ, և յմնացեալ կրօնքները՝ Ասիայի և Ափրիկէի մէջ։ Ոգեպաշտներուն երկիրը Ափրիկէ է, ուր 97,000,000 բնակիչ կայ։

Հին Եգիպտացի ազջիկները իրենց երեսը ճերմակ և կարմիր կը ներկէին, շրթ ունքները՝ ծիրանի, մազերը ու երանգները՝ գեղին։ Նաև հիւնայով երբեմն կ'ոսկեզօծէին զանոնք։ Մուսլիմներէն այս հաստատուած է։

Ամերիկեան նոր յիմար սովորութիւն մըն է 24 ժամու մէջ միայն 4 ժամ բնանալ։

Օձերը, մեռած թէ կենդանի, քնացած թէ արթուն, միշտ բաց աչքեր ունին, քանզի աչքի կափարիչ չունին։

Սանտուիչ կզզիներու բնակիչները 12 գիր ունին, Պիրմանցիք՝ 18, Ֆրանսացիք՝ 25, հաս մըն ալ կայ որ կասկածելի է, այն է W գիրը, Անգղիացիք, Հոլանտացիք և Գերմանք՝ 26, Սպանիացիք և Աբլամիները՝ 27, Աքանաինալիանք և Արարացիք՝ 28, Պարսիկներն և Ղպաիք՝ 32, Վրացիք՝ 35, Հայերը՝ 38, Ռուսերը՝ 41 և հին Մսկոֆցիք՝ 43։

Ամենէն շատ գիր ունեցող լեզուն Սանսկրիտն է. 50 գիր ունի: Բայց գիրերուն շատ կամ քիչ ըլլալը փաստ մը չունի: Բառի կողմէ Անգղիերէնն ամենէն հարուստ լեզուն է:

---

Հաշիւ եղած է որ 3որդանան գեար տարին 6,500,000 թոնօ ջուր կը թափէ Մեռեալ ծովուն մէջ:

---

Ամենէն շատ Դեռնոց կը շինուի Քերմանիոյ մէջ, ուր այս աղբանքին համար միայն 1,000է աւելի գործարան կայ:

---

70 տարեկանի հասնող 1,000 հոգիէն 43ը կա՛մ եկեղեցական են կա՛մ քաղաքագէտ, 40ը՝ երկրագործ, 33ը՝ գործաւոր, 32ը՝ զինուոր, 29ը՝ փաստարան կամ ճարտարագէտ, 26ը ուսուցիչ և միայն 24ը՝ բժիշկ:

---

Վերջերս կատարուած վիճակագրութենէ մը հասկցուած է որ ամբողջ աշխարհի մէջ տարին 33,000,000 մարդ կը մեռնի: Ըսել է միջին հաշուով օրը՝ 91,534, ժամը՝ 3,730 և մէկ վայրկեանի մէջ՝ 62 հոգի:

---

Գերմանական Թրանսպորտային ընկ.ի շոգենաուերը իւրաքանչիւր ճամբորդութեան միջոցին 50,000 կտոր ճերմակեղէն կը տանին: Ա. կարգի 150, Բ. կարգի 700 և Գ. կարգի 959 ճամբորդի համար 10,000 սաւան պէտք է, քանի որ Ա. և Բ. կարգերու սաւաններն ամէն օր կը փոխուին, 5,000 բարձի երես, 10,000 երեսի սրբիչ և 10,000 սեղանի անձեռոց, մնացածն ալ խոհանոցի և միւս սպասաւորները կը գործածեն: Այս ճերմակեղէններուն արժէքը 1,000,000 Ֆրանքը կ'անցնի, և ամէն ճամբորդութեան միջոցին 1,200 1,500 կտոր կը գողցուին: Այսպէս Գերման շոգենաուային ընկերութիւնը 20 000 Ֆրանք կը կորսնցնէ:

—

Ամբողջ աշխարհի մէջ 3,064 լեզու և 1,000է աւելի կրօնք կայ: Էրիկ մարդոց թիւը կանանց թիւին հաւասար է: Մարդկային կեանքի տեւողութիւնը միջին հաշուով 33 տարի է, և 1000էն մէկ հոգի միայն 100 տարի կ'ապրի:

—

Եւրոպայի և, թերեւս, աշխարհի ամենէն հարուստ քաղաքը, բաղքատարար Զուիցի-



ՍՏԵՓԱՆ Է.Յ. ՄԵՐՈՎԲԵՐՆ

Ազգապէս Բողոքականաց Թուրքիոյ 1850—1865  
Ծնած 1797ին — Մեռած 1865ին

300—Հ-Տ-ԿԳ. Օրշ. 1808

40

ընդ Պալ քաղաքն է: 124,000 ընտկի շներէն  
180 միլիոնատէր կան, 174 հոգի՝ 500,000—  
1,000,000 ֆրանք տնեցողներ: 170 հոգի  
500,000 ֆրանք, և 895 հոգի ալ 100,000—  
500,000 ֆրանք ունին: 10 տարուան մէջ  
քաղաքին հարստութիւնը 300,000,000 ֆրք-  
աւելցած է:

---

## Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

---

### 1. ՎՍԵՄ. ՅԱԿՈՒ ԷՖ. ՄԱՏՅԷՈՍԵԱՆ

Յակոբ Էֆ. Մատթէսեան ծնած է 1833  
Նոյ. 13ին Լանկա, Կ. Պոլիս: Հայրը կարինէ  
գաղթած էր մօշը (իր) հետ, որ քաջապաշտ  
կին մըն էր և ապրեցաւ 105 տարի: Հայրը  
արհեստով գերձակ պարզ մարդ մը, որ կրօ-  
նական ինդրոյ մէջ շատ չէր մտնէր, ապրեցաւ  
95 տարի Իսկ մայրը Կ. Պոլսեցի Պարուծ Ճի-  
ներուն գերդաստանէն խտաակրօն և իր դա-  
ւանութեան հաւատարիմ կին մըն էր, թէև  
ոչ մոլեռանդ, քանզի Բողոքականաց կրօնա-



ՎՍԵՄ. ՅԱԿՈԲ ԷՅ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ  
Ազգապետ Բողոքականաց Թուրքիոյ 1868—1888  
Ծնած 1833ին — Մեռած 1906ին



կան պաշտամանց կը յաճախէր, որով իրենց որդին Յակոբ էֆ. շատ կանուխէն ծանօթացաւ Աւետարանին գաղափարներուն: Իր առաջին դպրոցը եղած է Լուսաւորչեան վարժարանը: Տր. Համլինի Պէպէքի վարժարանին մէջ իր նախակրթութիւնը ստանալէ վերջ 1848ին, երբ դեռ 15 տարեկան էր, Ամերիկա ճամբորդած է կազմարարութիւն սորվելու նպատակաւ: Նիւ Եորքի մէջ այդ արհեստին 4 տարի աշակերտելէ վերջ կ. Պոլիս դարձած և վէզիր խանի մէջ հաստատուած է իբրև արուեստագէտ կազմարար: Չունէր մեծ գրամագլուխ, բայց ունէր ինչ որ լաւագոյնն է, գործի մարդու տաղանդ, և իր արհեստը լաւ սորված էր, որով յաջողութիւն գտնելու դժնդակ պայքարները չունենալով սկիզբէն իսկ յաջող հանդիսացաւ և մինչև վերջը պահեց իր արուեստին մէջ առաջին դիրքը: 1856ին ամուսնացաւ Օր. Իսկուհի Գալուստեանի հետ, որ իբր 50 տարի կենակցեցաւ անոր հետ: Ունեցաւ 8 զաւակներ, որոնց 3ը զինք կանխեցին ինչպէս և իր կինը: Իր անդրանկին Օր. Պոյժառի մահը իրեն թելադրեց «Խորհուրդք Հաւատացելոյ» անուն գիրքը գրել, որով ուղեց իր մեծ վիշտին օփոփանք գտնել: 1868ին Ազգապետ ընտրուեցաւ



ՎՍԵՄ. Ա. ՅԱԿՈԲ ԷՅ. ՊՕՅԱՃԵԱՆ  
Ազգապէս Բողոքականաց Թուրքիոյ  
Ընտրեալ 1889

35 տարեկան հասակի մէջ և 1870ին շնորհիւ Վեհ. Սուլթանին մասնաւոր արածնութեան պտոյտ մը ըրաւ Փոքր Ասիոյ և Սուրիոյ մէջ և սյցելեց Բողոք. Եկեղեցիներու մեծագոյն մասը: Այս կարեւոր պաշտօնը 20 տարի արժանաւորապէս վարելէ վերջ 1889ին Աղգապեաութեան հրաժարելով շարունակած է իր նախկին արհեստը և զարգացնելով զայն առաջնակարգ հաստատութեան մը վերածած է գործակցութեամբ իր որդւոյն: Յակոբ էֆ. Հայ Բողոքականութեան պատիւ բերող և սիրելի գէմք մըն էր, լաւ արհեստագէտ, միանգամայն ուսումնասիրող քրիստոնէսոյ մը, անասցիւս վարքի և բարքի տէր, գործի մարդ, տիպար ամուսին և սիրելի ու օրինակելի հայր: Օրուան աշխատութիւններէն կը հանդէս մխրճուելով ամենէն խրճին իմաստասիրական և տառաւածարանական նորագոյն հրատարակութեանց ընթերցման մէջ, գրելով իր խորհուրդները և տպաւորութիւնները՝ զանոնք սերիշներու եւս հաղորդելու փափաքով: Յաճախ տեսնուած են իր օգտաշատ հատուածները հանդէսներու մէջ: Ինք թէ՛ կը կարդար և թէ՛ կը գրէր ոչ թէ իր սենեակը առանձնանալով այլ իր զաւակաց ներկայութեան, մինչ անոնք իր շուրջը կը խաղային և թւչնոց նման կը ճառագէին: Կարծես անոնք



ՏԱՎՌԻՏ ԳԱԶԱՐՈՍ ԷՖ. ՊՕԳՈՍԵԱՆ  
Ազգապէս Բողոքականաց Թուրքիոյ 1865—1868  
Ծնած 1828ին

էին զինքը ներշնչողը, քանզի առանց ամենա-  
փոքր տրտունջ մը յայտնելու կ'աշխատէր և  
ստէպ իր ժպտուն ակնարկով յաւէտ իր դո-  
հունակութիւնը և երջանկութիւնը կ'ուզէր  
ցոյց տալ, յաճախ յագեցում իսկ տալով  
անոնց տղայական հարցումներուն և ընդմի-  
ջումներուն:


Յակոր էֆ. մեծ եռանդ ցոյց կուտար նաև  
կրօնական դորձերու մէջ: Բաւական ժամա-  
նակ վերատեսուչ եղած է Կիրակնօրեայ դըպ-  
րոցի, և մեծ յաջողութիւն ունեցած է բազ-  
մաթիւ պատանեաց և երիտասարդաց բարձր  
վարքի և կեանքի բարձրագոյն նպատակ մը  
ներշնչելով: Իր ուրախութիւնը չափ չունէր  
երբ Աստուածաշունչի Ընկերութիւնը հաճե-  
ցաւ իր ծախքով հրատարակել գրաւար  
Աստուածաշունչը և գիւրամատչելի ընել  
զայն ժողովրդեան ամէն գասակարգին հա-  
մար, քանզի ինք ևս շատ աշխատած էր այդ  
գործը ի գլուխ հանելու համար: Խիստ շատ  
անձկութիւններ կրած և անքուն գիշերներ  
անցուցած էր նաև Բերայի Աւետարանական  
եկեղեցիին շինութեան և Հայերէն նոր Եր-  
գարանին հրատարակութեան համար: Եր-  
կուքն ալ իր ամենաօրելի աշխատութիւն-  
ները եղած էին իր նախաձեռնութեամբ սկըս-  
ուած ըլլալուն, և կը ցանկար իր բոլոր սրտով

ատանց աւարտումը տեսնել իր մահէն ա-  
ռաջ: Սակայն վերջերը, իր մահէն քանի  
մը ամիս առաջ, կ'ըսէր. «Նախագգացում  
մը ունիմ թէ պիտի չապրիմ՝ մինչև ատանց ա-  
ւարտումը:» Իր հիւանդութեան վերջին օրերը  
իւր միտքը գրաւուած էր եկեղեցիին խորհուրդ-  
ներով: Մեծ փափաք յայտնեց և յորդորեց  
իւր շուրջը գտնուողները որ ամէն ջանք  
ի գործ գրուի, ամէն բան վայելչութեամբ  
շինուի և պարտք չդիզուի: «Պարտք մի ընէք»  
կ'ըսէր: Այսպէս հոգիով և մտքով թափին  
և օգտակարին համար աշխատելէ վերջ,  
օրհնելով իր գաւազները և բարեկամները, իր  
աշխատութիւններէն հանդէս աւ 1906 Մա-  
յիս 22ին (Ն. Տ.) 72 տարեկան հասակին մէջ:

## 2. ՎԵՐ. ԳԱՐԱ ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՅԻՒՆԵԱՆ

Վ. Եր. Գ. Գ. Յարութիւնեան, որ Թուրքիոյ  
Հայ-Աւետարանական 2 ամենէն ծերունա-  
զարդ պաշտօնեաներէն մէկն է, գաւառներու  
եկեղեցիներուն մէջ ձեռնադրուած իրր առա-  
ջին հովիւն է: Անոր ձեռնադրութեան թուա-  
կանն է 1856 Մարտ 2, յորմէ հետէ 50 տարի  
չարունակ պաշտօնավարած է միւլանոյն եկե-  
ղեցւոյն մէջ: Իր հովուութեան սկիզբէն Յո-  
րեղեանը 1906 Մարտ 2ին արժանավայել և  
ազդեցիկ կերպով կատարուեցաւ Այնթապի





ՎԵՐ. ԳԱՐՍ. ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹՅԱՆԵԱՆ  
Ծնած 1825ին — Մեռած 1906ին

Աւետ. Եկեղեցեաց կողմէ: Իր եկեղեցին միշտ յառաջդիմող ժողովուրդ մը եղած է: Հետեւաբար հարկ անհրաժեշտ եղաւ 1865 ին իր ժողովուրդը երկու մասի բաժնել, որոնցմէ իր հովուութեան ներքեւ գանուող մասը այժմ «Այնթապի Հայիկ Եկեղեցի» անուանով ծանօթ է: Եւ այս է հիմա Թուրքիոյ ամենէն մեծ Աւետ. Եկեղեցին, որուն անհատները կը հաշուուին 2,000է աւելի: Իբր ընկեր հովիւ 1892ին Վեր. Մանասէ Կ. Փափազեան հրաւիրուած է Վեր. Գ. Գ. Յարութիւնեանի մօտ, յորմէ հետէ Հայիկ Եկեղեցիին գործերը կը վարէ Վեր. Մ. Կ. Փափազեան և Վեր. Գ. Գ. Յարութիւնեան ալ հովուութեան գործերուն կը մասնակցի: Վեր. Գ. Գ. Յարութիւնեան ծնած է 1825ին և Աւետ. Եկեղեցիին յարած է 1848ին: Այս պատճառով թէև իր ազգականներուն կողմէ շատ մը հալածանքներու ենթարկուեցաւ, սակայն ետքը թէ՛ իր ժողովրդեան, թէ՛ քաղաքին հասարակութեան և թէ՛ բոլոր իր ծանօթներուն սէրն ու համակրանքը գրաւեց: Այնթապի Աւետ. գործին մէջ անոր պատուարէր ծառայութիւնը և Կիլիկիոյ շրջանակին մէջ Աւետ. ժողովրդոց վրայ ըրած բարերար ազգեցութիւնը՝ մեծա-



ԲՐՈՅ. ԱՆԻՔՍԱՆ Յ. ՊԵՋՃԵԱՆ  
Ծնած 1837ին

պէս դնահատուած է: Վեր. Գ. Գ. Յարու-  
թիւնեան, որ իր երիտասարդութեան ատեն  
ազգեցիկ քարոզիչ մը, ինչպէս նաև յաւէա  
կարող և հեռատես հովիւ մը հանդիսացած է,  
իր հեղահամըրը բնաւ որութեամբ, անկեղծ  
հոգիով և աղօթասէր կենցաղով ամենուն  
սիրելի եղած է:

### 3. ԲՐՈՖ. ԱԼԻՔՍԱՆ Յ. ՊԷՋՃԵԱՆ

Այս մեծ անձը կիլիկիոյ Եկեղեց. Միու-  
թեան շրջանակին մէջ ամենէն կարեւոր դէմ-  
քը եղած է՝ կրթական գործի տեսակէտով,  
Բրոֆ. Ա. Յ. Պէջճեան 1852ին Տր. Կ. Համ-  
լինի աշակերտ եղաւ՝ Պէպէքի Վարժարանին  
մէջ, ուր մնաց 4½ տարի: Անոր մտերիմ ըն-  
կերներէն էին ներկայ ազգայեան Վսեմ. Յա-  
կոբ էֆ. Պոյաճեան, և իր համըաւաւոր եղ-  
բայրը, Վեր. Թովմաս Պոյաճեան, Վեր.  
Մարտիրոս Գ. Շմաւոնեան, Խարրերդի Եկե-  
ղեցեաց «Պապա»ն և Յովհաննէս էֆ. Արս-  
լանեան, որ մտերու մեռաւ Ամերիկայի մէջ:  
Բրոֆ. Ա. Յ. Պէջճեան 1856ին Այնթապ վե-  
րադարձաւ, և միսիոնարաց բացած Ասա-  
ուածարանական Վարժարանին, որուն նա-  
խագահն էր Տր. Շնայարը, գիտական ճիւ-  
ղին դասատուն եղաւ: Այս պաշտօնը վարեց

10 տարի, Կիլիկիոյ Աւետ. Եկեղեցիներուն  
Տոգեւոր պաշտօնեաներուն ըստը առաջին սե-  
րունդը այս վարժարանին սաներն էին: 1866ին  
Աստուածարանական վարժարանը Մարաշ  
փոխադրուեցաւ և գիտական վարժապետը,  
Բրոֆ. Ա. Յ. Պէղճեան ալ ընտանեօք հոն  
հաստատուեցաւ. ու 5<sup>1</sup>/<sub>2</sub> տարի իր սիրական  
պաշտօնը վարեց: Բրոֆ. Ա. Յ. Պէղճեան  
1872ին Ամերիկա գնաց՝ Եէյլի Համալսարանին  
Շէֆֆիլտ (Գիտական) ճիւղին աշակերտելու,  
ուրկէ վկայեալ Այնթոպ վերադարձաւ 2  
տարի ետքը: Կ. Թ. Գոլէճի նախակրթարանը  
1874ին բացուեցաւ, և անկէ ի վեր Բրոֆ. Ա.  
Յ. Պէղճեանի կրթական ընթացքը այն Գո-  
լէճի պատմութեան մէկ մասը, մէկ շատ կա-  
րեւոր մասը կազմած է: Կիլիկիոյ շրջանակին  
մէջ կրթական գործին հիմնադիրը Բրոֆ. Ա.  
Յ. Պէղճեան եղած է: Իր ազդեցութիւնը  
Աւետ. Եկեղեցիներու վրայ սահմանափակ-  
ուած չէ: Ամբողջ ժողովուրդը իրմէ ներշնչ-  
ուած է դատախարակութեան գործին մէջ,  
Խոճաներ շատ ունինք, բայց ինքը ԽՈՃԱՆ է:  
Կը մազթեւոր որ դեռ երկար տարիներ ողջ  
մնայ, և իր աշխատութեան պտուղները տեսնե-  
լազմութիւ Գոլէճներու և Աստուածարանա-  
կան ճեմարաններու ուսանողաց կեանքին մէջ:  
Երբ Կիլիկիոյ Մեծ Գատախարակը վերջնապէս



ԲՐՈՅ՝ ՆԻՍՈՂՈՍ ԷՅ՝ ԹԷՆԷԲԷՃԵԱՆ  
Մնած 1863ին



բաժնուի մեղմէ, պիտի զգանք թէ մեծ դէմք մը անհետացած է:


#### 4. ԲՐՈՑ. ՆԻԿՈՂՈՍ ԹԷՆԷՔԷՃԵԱՆ

Բրոժ. Ն. Թէնէքէճեան Ազգապետ է Մամուլէթ-իւլ-Ազիզի կուսակալութեան Աւետ. ժողովրդոց և Բրոժէսոր՝ Եփրատ Գոլէճի Ընդհ. Ազգաց Պատմութեան (Տին, միջին և նոր) և Օսմաներէն լեզուի Ծնած է 1863 Յունիւլ. 2ին: 1880էն ի վեր շարունակ կը պաշտօնավարէ նոյն հաստատութեան մէջ: Իր ճիւղերը կատարելապէս մշակած է յարատեւ աշխատութեամբ: Իր արտադրածն ու պաշտօնին բացարձակ արժանիքն ունի:

#### 5. ԲՐՈՑ. ԽԱԶԱՏՈՒՐ ՆԱԶԻԿԵԱՆ

Բրոժ. Խ. Նահիկեան ծնած է 1858ին: 1880էն ի վեր ուսուցիչ է: Ամերիկայի մէջ ընդունած է համալսարանական կրթութիւնն: Եփրատ Գոլէճի Աստղագիտութեան, Բնագիտութեան, Կուսակիւնաշափութեան, Երկրաչափութեան, Տամարակալութեան և Ալճէպրայի դասերը կ'աւանդէ: Բացատրելու իր ինքնատիպ և զուարճալի մէթոտը՝ աշակերտները կը հիացնէ: Կատարելապէս վերլուծած է իր ճիւղը:





ԲՐՈՅ. ԽԱՉԱՏՈՒՐ ԷՅ. ՆԱՀԻԿԵԱՆ  
Ծնած 1858ին

# 1907Ի ՕՐԱՑՈՅՑԻՆ

Մ Ր Յ Ա Ն Ա Կ Ա Ի Ո Ր Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ո Ի Ն  
Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ը

— 0 —

## 1. ԹԱՓՈՒՐ ՕՐՐԱՆԸ

Օրրանիդ քով սիրտով նրկուն  
Կը գիտեմ յար գէմբրդ տըժ գոյն,  
Որդեա՛կ, չունիմ՝ ես մըխիթար,  
Պէտք է սղրամ՝ ա՛լ ընդերկար:

Ասկից վերջը, սիրո՛ւն զաւակ,  
Իմ խուցիկիս մէջ վայրահակ  
Պիտի սղրամ, լամ՝ անկայուն՝  
Յաւով, վիշտով անվերջ, անհուն:

Աշխարհիս մէջ վաղասըլաց  
Բաժինըս է սղր, կսծ ու լաց,  
Որոնց մէջը անտարակոյս  
Պիտի հալիմ՝ տըխուր, անյոյս:

Միակ խինդը սա իմ՝ կեանքիս  
Լոկ գո՛ւն էիր, սիրուն որդիս,  
Որ օրրանըդ թողած թափուր՝  
Չեմ գիտեր թէ ո՞ւր թըռար, ո՞ւր...

Ո՛հ, հազար ու բիւր երանի  
Թէ քու տեղըդ ես մեռնէի.  
Ու սիրելի՛ս, դուն ինձ փոխան՝  
Ապրէիր քու կեանքդ սիրական:

Ինչե՛ր կ'ըսեմ, ա՛հ, չեմ գիտեր . . .  
 Ես այսպէս լամ, մինչդեռ սիրտեր  
 Խնդան թող, հո՛ն, ինձմէ անդին.  
 Ձեմ բողձար ես անոնց կեանքին

Օրորանիդ վըրայ հակած,  
 Ու կարծես, ո՛հ, խելագարած  
 Քեզ կը գիտեմ ես հերարձակ,  
 Կեանքիս ջահը, սի՛րուն որդեակ:

Ու այժմ գուն ա՛լ հլածեցար  
 Ընելով զիս սարսափահար,  
 Մինչ կը ժրպտին քեզ նրմաններ  
 Օրրաններուն մէջը երեր:

Պիտի տանին քեզ, որդեա՛կ իմ,  
 Վերջին անգամ քեզի փարիմ.  
 Հողն սեւերես, հողը խոնավ՝  
 Պիտ՝ ըլլայ քեզ անկողին լաւ:

Ո՛հ, Աստուա՛ծ իմ, խըլեցիր զայն,  
 Ի՞նչ պիտի տաս անոր փոխան.  
 Վի՛շա, ցա՞ւ և կամ արդեօք արցո՞ւնք  
 Ողջունող իմ սա սե արբունք . . . :

Ասարազար

Գ. Յ. ՃՈՄՊԵԱՆ

1907ի Օրացոյցին խնդիրները լուծած են շատեր, որոնց մէջէն քուեմ հետեւեալ անձերն ընտրուելով, խոստացուած Մրցանակները անոնց արուեցաւ.

Տիար Ասատուր Գ. Եաղբճեան՝ Նիկոմիդիա: Պատ. Արմենակ Յ. Տալգրանեան՝ Պաֆրա: Տիար Գրիգոր Յ. Ճամպեան՝ Ասարազար:

Պատասխաններն են

1. Չայն: 2. Տառը մատներ և եղունգներ:  
 3. Քիթ և բերան: 4. Նաւահանգիստ: 5.  
 Սարգը իր սատայնին մէջ:

1. Ա. 16, Բ. 8, Գ. 4: 2. Նաթանայէլ:  
 3. Քրիչ, Բրիչ: 4. Դաւիթի անկողինին մէջ  
 դրուած արձանն է: 5. Կառախուճքերուն խրն-  
 գիրը ոչ ոք ճիշդ լուծած է: Նկատողութեան  
 ալ չենք առած զայն Մրցանակներու բա-  
 ժանման առթիւ:

---

ՄՐՅԱՆԱԿԱԻՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

---

ԹՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

1.

Յակոբ քիլումէթը մը հեռուէն կապարէ  
 կամ երկաթ է խողովակով ջուր բերելու հա-  
 մար խողովակով լաճառին հետ կը պայմանա-  
 ւորուի որ կապարէ խողովակին քիլոն 5, իսկ  
 երկաթինը 4 դահեկանէն շարէ, պայմանա-  
 որ խողովակներուն ներքին արամագիծը 10 և  
 արտաքինը 12 սանդիմէթը ըլլայ: Յակոբ երկու  
 պարագային ալ քանխակա՞ն դահեկան պէտք  
 է վճարէ և սոյն խողովակէն երկվայրկեանը  
 80 սանդիմէթը արագութեամբ օրական 0 ր-



Վ.ԵՐ. Ա. Կ. ՊԵՏԻԿԵԱՆԻ (ԳԻՍԱԿ)  
Երիւնր, որ կառուցուած է Կ. Պոլիս, Ա.ԵՏ Հայերու  
Ֆերիգիւղի գերեզմանասան մէջ



չափ վճիտ ջուր կրնայ ստացուել և ս<sup>օ</sup>րչափ  
բարձրէն վաղելու է այս ջուրը որպէս զի 10  
ձիու դժ արտագրէ:

2.

Տակառ մը ունինք, որուն չափով խորա-  
նարդ աման մը շինել կ'ուզենք: Խորանարդ  
ամանին իւրաքանչիւր կողմը ս<sup>օ</sup>րչափ բլլալու  
է գիտնալով թէ տակառին ներքին կողմէն  
բերանի տրամագիծը 60, իսկ մէջքինը 80 սան-  
գիմէթը և մէկ մէթը ալ խորունկ է:

3.

Պղինձի և արսյրի հաւասար խառնուրդով  
կանոնաւոր քառանկիւն բուրգի մը մակերե-  
ւոյթը ս<sup>օ</sup>րչափ է, որուն խորիսիւր 36 քառ.  
մէթը և բարձրութիւնը 4 մէթը է, և տղայ  
մը 10 սանգիմէթը տրամագծին պողպատէ  
լծակով մը վերցնելու համար լծակը ս<sup>օ</sup>րչափ  
երկայն ու մանր բլլալու է, գիտնալով թէ  
տղան միայն 50 քիլոյի զօրութիւն կրնայ տալ  
և լծակին յենարանը բուրգէն մէթը մը միայն  
հեռի հաստատուած է:

4.

Միհրան ու Տիրան մէյմէկ ձիու վրայ մէկ  
կողմը 400 քիլոնոց մէյմէկ տիկ լուղ և միւս  
կողմը 400 քիլոնոց մէյմէկ կտոր քար բեռ-  
ցած չոր կամուրջէ մը անցած ատեն կամուրջը  
կը փլչի և ձիերուն բեռերը վար լյնալով կը  
կոտրին: Միհրանին քարը այնպէս 5 կտոր ե-

ղած 3/4 էր որ պէտք եղած տակն նժարով (քե-  
րագի) 1 — 100 քիլոն մէկ անգամէն կրնար  
կշռել: Իսկ Տիրանին քարը այնպէս 7 կտոր  
եղած էր որ 1/4 — 100 քիլոն (քառորդներն ալ)  
մէկ անգամէն կրնար կշռել: Իւրաքանչիւրին  
100ական քիլոնոց քարը քանիակա՞ն քիլոնոց  
կտորներու բաժնուած էր:

5.

Տղու մը հարցուցին.

— Հայրդ քանի՞ սակի ունի:


Տղան պատասխանեց.

— Աւրիշներ հօրս կարողութիւնը վեր է  
վերոյ 10,000 սակի կը հաշուեն, բայց անցեալ  
օր երբ ամբողջ սակիները 3ական կը համըէի,  
1 հատ կ'աւելնար: Երբ 5ական համըեցի, 2  
հատ աւելցաւ: Երբ 7ական համըեցի, 3 հատ  
աւելցաւ: Երբ 11ական համըեցի, 4 հատ ա-  
ւելցաւ: Բայց երբ 13ական համըեցի, այլ ևս  
քան չաւելցաւ: Հիմա հաշուէ և ինձ ալ իմա-  
ցուր թէ հօրս սակիները ճիշդ քանի՞ հատ էին:

Խարբերդ

ԱՐՄԷՆ

Վերոյիշեալ 5 խնդիրները ճշդիւ լուծողը  
պիտի ընդունի «Ծագիկ» շարածած երթը մէկ  
տարուան համար: Երբ մէկէ աւելի լուծողներ  
գտնուին, քննեն պիտի սրոյէ թէ մրցանակը  
ո՞վ պիտի ընդունի: Պատասխանները պէտք  
է մեր ձեռքը հասնին մինչև 1808 Մարտ 1/14:



Մշակ ընթացակարգից (Ձեյնսյրու Հով) Բարձր. Վարժարանի, Պարսիզակ

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ ԵՒ ԽՆԴԻՐՆԵՐ

(Շարունակութիւն 1907է)

### 6. ՏԱՌԱԽԱՂ ՄԸ

Ձիտ տեսնել ոչ ոք կը բաղձայ,  
Թէ ոչ անշուշտ պիտի գգայ.  
Որչափ որ ալ աղաղակէ,  
Պէտք է ինձմէ գգուշացնէ.  
Ինքզինք անշուշտ յիտ պիտ' գանէ,  
Թէ չունի ձեռքն որ զիտ վանէ.  
Լուսոյ կամի որ շուտ ծագի  
Քաշել առջիտ զուր կը տքնի.  
Թէ ունի՝ տայ կը թողում գինք  
Կերպ կերպ գլխով այսպէս յայտնիմք:

### 7. ԿԾԾԻ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԸ

Նպարավաճառ մը ուզելով քիչ ծախքով  
շատ գրամներ ունենալ, կը կանչէ ձուլիչ մը  
և կը պահանջէ որ շինէ իրեն համար այնպիսի  
4 կտոր չափեր, որոնցմով կարենայ կշռել 40  
քաշ անօրէպ: Արդ, քանիակա՞նքաշ պէտք  
էր ըլլալ այդ չափերուն իւրաքանչիւրը:

### 8. ՀԱՆԵԼՈՒԿ Ս. ԳԻՐՔԷՆ

Հողէն ծնայ, ջրէն անայ,  
Այլ կենդանի էակ մ'եղայ.  
Առանց ստքի շատ գնացի,  
Առանց բերնի շատ լափեցի.

Ոմանք կենաց, ոմանք մահու  
ես կարճ ճամբով շուտ հասցուցի:

9. ԱՄԵՆԱՀԱԿԻՐՃ ԱՂԻՒՍԱՅԸ

Կը պահանջուի դանեւ ձե մը, որոյ մէջ  
պարունակուի 1—9 աստուած տղիւտակը պարզ  
և դիւրագործածելի սա պայմանաւ որ ցարդ-  
հնարուած ձեերուն ամենէն համառօտը պիտի  
ըլլայ:

10. ԲԱՌԵՂՎՈՒԱԾ Ս. ԳԻՐԳԷՆ

Աւանջինս հիւտանց է խիտ պիտանի,  
Աւանց երկրորդիս աշխարհ համ շունի.  
Մասնիկ մ'աւելցուր ինձ որ ես լինիմ  
Վարդապետ դիտուն մ'այր հաւատարիմ:

Կ. Պոլիս

ՅՈՎԱԷՓ ՀԱՅԱԱԶՆ

Յիշեալ 5 հանելուկները ճշդիւ լուծողը  
պիտի ընդունի մեր հրատարակութիւններէն  
5 գիրքեր: Եթէ մէկէ աւելի լուծողներ գրա-  
նուին, ինչն պիտի որոշէ թէ մրցանակը ո՞վ  
պիտի ընդունի: Պատասխանները պէտք է  
մեզի հասնին մինչև 1908 Մարտ 1/14:

ՀԻՆԳ ԲՆԱԲԱՆՆԵՐ

1. Խաչին քով . երգ աշխարհաբարս
2. Կիրակի օրուան հանգիտաթիւնները  
և վնասները, երբ աննկատ թողուի աստուա-

Ճային սոյն պատուէրը՝ Օգուտները և վնասները պէտք է երեք — մարմինի, միտքի և հոգիի — տեսակէտէ նկարագրուին: Պատասխանները պէտք է ըլլան արձակ, պարզ, սրտշ և համառօտ:

3. Թուրքիոյ բոլոր Հայ վանքերուն ցուցակը սյրուրէնի կարգով հանդերձ ծանօթութիւններով: Պէտք է նշանակել դաւաւը և քաղաքը, ուր անոնք կը գտնուին:

4. Թուրքիոյ Հայ-Սուլթան և կեղեցիներու ցուցակը, ժողովրդեան թիւը, քարոզիչներուն անունները, դպրոցները, բարձր. վարժարանները, գոլէճները, բարեսիրական հաստատութիւնները, հանդերձ ուսուցիչներուն անուններով և ուսանողաց թիւով:

5. Զմբան երկայն գիշերները ինչ կերպով պէտք է անցնել որ մարդ թէ՛ ձանձրոյթ չզգայ և թէ՛ օգտուի:

Այս 5 բնարաններուն պատասխաններէն շաւաղոյնը պիտի հրատարակենք և հեղինակին պիտի նսւիրենք 2 սակի արժողութեամբ գիրքեր կամ լրագիրներ, իր ընտրութեան համեմատ: Լաւագոյնը պիտի սրտէ տեղական մասնախումբ մը: Պատասխանները պէտք է մեզի հասնին մինչև 1908 Յուլիս 1/14:

Հասցէ.

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Պրուսա



# Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ Ն Ե Ր

## Ա. Ե Լ Ե Կ Ի Կ Ա Ն Ո Ր Բ Ա Ն Ո Յ Պ Ե Ր ՈՒ Ս Ա.

Հաստատութիւնս կը բողոքէ ներկայ տարւոյ Յուլիս 1/14ին իր Յիրդ տարեշրջանը Բարերար անձանց յօժարակամ սիրոյ նուէրները և Օրացոյցիս ու մեր ուրիշ հրատարակութեանց, ինչպէս նաև շերամարուծութեան և տարեկան Պագարի հասոյթներն են վիսկ միջոց մեր տարեկան ծախուց բարձման:

Առանց դաւանական խտրութեան, կ'ընդունուին որք և կարօտ Հայ աղջիկներ, որոնց կը արուի ծնողական ամէն խնամք, ընտանեկան կրթութիւն ու գործնական պարզ դաստիարակութիւն:

Կը խնդրուի Օրացոյցիս իւրաքանչիւր ընթերցողէ տարին անգամ մը վճարել շնչին գումար մը և զնեղ Օրացոյց մը, և այսպէս նպաստել սոյն բարեգործական մեծ ձեռնարկին, ինչպէս նաև կճակով, քանի որ Հաստատութեանս շէնքերը վագրով եղած են:

Կը խնդրենք նաև գնել մեր միւս հրատարակութիւններէն, որոնց հասոյթը Որբանոցիս յատկացուած է:

Որբանոցիս տարեկան Պագարը տեղի կ'ունենայ Հավրատման օրը, Մայիս 22/4 Յունիս 5սոյն օր Հաստատութեանս սրահին մէջ քուէով կը բաժնուին որբերու ձեռագործները

և բարերարներէ նուիրուած զանազան օգտա-  
կար իրեղէնները:

Կը խնդրուի այս տեսակ իրեղէններ մինչև  
Զատիկ զրկել Որբանոցիա Տնօրէնութեան կամ  
Տիար Գարբիէլ Ս. Գարբիէլեանի, Թիւ 5,  
Պայպըլ-Հասու, Կ. Պոլիս, որպէս զի կարող ըլ-  
լանք զանոնք շահագործել Համբարձման օրը:





Որբանոցս ունի նաև իր արամադրութեան  
տակ 200 տուփ ամենաբնաիր շերամի հոշնի,  
զոր կը վաճառէ ի նոպատ Հաստատու-  
թեանս Պայմաններու համար պէտք է գիմել  
Որբանոցիա Տնօրէնութեան մինչև Յունի. 1/14:

Հիմնադիր-Տնօրէն

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Պրուսա

 Կը խնդրուի դրամը Մակսա-Բոսքով,  
իսկ իրեղեկները Քոչի-Բոսքով զրկել:



Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առողջ, Երջ. և Երկ. Կեանք, սպռ. Դհ.	
2. Առաջնորդ Ամուսնացելոց, սպառած	
3. Ասպար Կենաց . . . . .	4
4. Լապտեր Ծնողաց . . . . .	4
5. Աշնան Տերեւներ Բ. Տպագրութիւն	4
6. Սրբազան Պատմ. ոտանաւոր, սպռ.	
7. Կեանք Տէր Յիսուսի, ոտան, և պակ.	5
8. Կեանք Սրբոց Առաքելոց, ոտանաւոր	5
9. Մայրիկին Առաջնորդը . . . . .	1
10. Ոսկեղէն Բանալի Անգղ. լեզուի . . . . .	12

11. Ուղեցոյց Ս. Գիրք ընթերցողաց,  
պատկերազարդ . . . . .
12. Բեթլըսըն Ղեկավարը . . . . . 5
13. Հաւաքածոյ Բարոյական Պատմութեանց, Բ. Մաս 199 էջ. . . . .  
Ա. Էսկար կամ Կորսուած Տղան  
Բ. Արբեցողին Որդին  
Գ. Խաղամոյր կամ Երեք Անգամ  
Մասէ Ազատուած
14. Նոյն. Գ. Մաս (մամլոյ յանձնուած)
15. Նոյն. Գ. Մաս (մամլոյ յանձնուած)
16. Հանրագիտական Օրացոյց, օգտակար  
գիտելիքներու ճոխ և կարեւոր  
մթերք ամէն դասակարգի համար,  
պատկերազարդ . . . . . 3

Սոյն հրատարակութիւնները կը վաճառուին ամէն գրատան մէջ: Կեդրոնատեղին է Մատթէոսեան վաճառատուն, Ամերիգան խան, Կ. Պոլիս:

Ծանօթ. — Յուզիչ, աղգեցիկ և բարոյական պատմութիւններու, դասագիրքերու և առողջապահական գրութիւններու ձեռագիրներ պատրաստ ենք ինչ ինչ պայմաններով ընդունիլ և հրատարակել: Հասցէ.

Գ. ՊՍ.ՂՏԱՍԱՐԵԱՆ  
Պրուսա



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Պ Ա Ր Զ Օ Ր Ա Յ Ո Յ Յ


Տումարական դիտելիք . . . . .	3
Յրացոյց . . . . .	17
Սամանեան Կայսրութիւն . . . . .	97
Թղթատարութիւն . . . . .	103
Հոգեւոր իշխանութիւնք . . . . .	111
Վիճակացոյց աւերութեանց . . . . .	124

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ

Յարդյախօսականք . . . . .	131
Ընտանեկան . . . . .	154
Առանին դեղարան . . . . .	168
Ուսուցչական . . . . .	174
Առանին հիւանդատահսութիւն . . . . .	186
Գործի մարդաց ըստին . . . . .	192

Յուզակներ . . . . .	204
Հարցարան . . . . .	207
Մեր խոհանոցը . . . . .	222
Առողջական . . . . .	227
Բժշկական . . . . .	244
Պատմական . . . . .	255
Գիտական . . . . .	272
Գրական . . . . .	276
Վիճակագրական . . . . .	285
Կենսագրական . . . . .	290
Մրցանակաւոր խնդիրներ . . . . .	308
Ծանուցումներ . . . . .	316







Համագրային Օրացոյցի ՀԱՄԱՌՕՏՆ  
ալ հրատարակուած, կը գտնուի բոլոր գրա-  
վանատաց հոլ **ԳԻՆ 1 ՂԵ**

Կեղրոնատեղի Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը  
Թիւ 27, Ֆինճանճըլար Եօզուշու, Կ. Պոլիս



معارف عمومیہ نظارت جلیہ سنک فی ۲۷ محرم ۱۳۲۵  
و فی ۲۷ شباط ۱۳۲۲ تاریخلی و ۴۴: نومرولی  
رخصتنامه سیله طبع اولمشدر



